ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ
ԿԱՄ
ՆՈՐ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
1869

ԴԱՍԱԳԻՐՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ՄԱՆԿԱՆՑ

ԳԱՍԱԳԻՐՔ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ
ԿԱՄ
ՆՈՐ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ՄԸՆԿԱՆՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ՍՏԵՓԱՆ Գ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՏԻՊ ԵՐԿՐՈՐԴ

Ա 7/257

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ
ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ

—1869=ՌՃԺԸ.—

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՖՈՆԴԱՐԱՆ № 2

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ

ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԵԱՅ

ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՌՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍԻ

Տ. Տ. ՊՕՂՈՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՌՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ա. Զ Դ.

Սկիզբն ի վեր մեր Ազգային վարժարանաց մէջ պարծաձաւած ընթերցանութեան դասագրքերն եղած են գրաբար լեզուով գրքեր. Սաղմոս. Գործոց. Նարեկ։ Վերջերս ընթերցանութեան համար պատրաստուեցան քանի մը աշխարհաբառ գրքեր. և մանաւանդ ուրիշ լեզուէ թարգմանութիւններ։

Մենք այս երկուքին մէջ միջին ընթացք մը բռնելով՝ ներկայ Ընթերցարանս պատրաստեցինք. ոչ բոլորովին գրաբառ և ոչ աշխարհաբառ. այլ խառն Գրքրաբառ լեզուն գրաւոր և հնչման անանկ յատկութիւններ ունի. որ աշխարհաբառի մէջ չը կան. ուստի եւ ազգայք անոր մէջ ալ վարժուելու կարօտութիւն ունին. աշխարհաբառ գրուած մ՝ալ ազգայոց հասկանալի ըլլալուն օգուտներն ունի։

Այս պատճառներուն համար արժան դատեցինք մեր ընթերցարանը աշխարհաբառ և գրաբար խառն ընել. և մեծ մասը աշխարհաբառ։ Գրաբառ մէկ մասին աշխարհաբառ թարգմանութիւնները դնել՝ մանաւանդ Ընթերցարանիս սկիզբը. որ մի և նոյն. կամ փոփոխուած բառերու կրկնութենէն ազգայոց ընթերցմանն օգնութիւն ըլլայ։ Նիւթերն ալ մինչև յարդ եղած ընթերցարաններէն քիչ մը տարբերեցինք. Ա. Գրքէն բարոյական և քրիստոնէական խօսքեր. երեւելի հեղինակներու առածներ. հաճելի բառածքներ. քաջ ու յարմար պատասխաններ. որոնք թէպէտ ազգայք կարող չեն հասկնալ. բուն որուամ փոքձուած է որ ազգայք աշխարհաբառ գրուածներն ալ շատ անգամ մեքենաբար կը կարդան. քայց գոնէ կրնան ըմբռնել՝ ընթերցանութեան դասն ուսանելու ճգանց մէջ. և ժամանակին իրենց օգտակար կ՝ըլլան։ Այլ և կը պարունակէ Ընթերցարանս Քրիս-

ոնական համառօտ։ Քաղաքավարութիւն համառօտ։ որոնք ազայոց ամենէն կարեւոր դասերն են։ առողջութեան կանոնները։ մանր վէպեր։ օգտակար պատմութիւններ։ երեւելի հայրենասէրներու նկարագիրներ։ Աղգային պատմութեան գլխաւոր մասեր։ և վերջապէս առաւօտեան և երեկոյեան աղօթքներ։

Ընթերցանութիւնը դիւրացնելու համար Ընթերցարանիս գրերէ կես մասը խոշոր գրերով պատրաստուած է։ մեծ մասն ալ հասարակ գրով։ և փոքր մասմ՚ ալ մանր գրով։ իրարու ետեւ քան կարդի։ Առաջին մասն ալ երկուքի բաժնուած է։ մէկ մասը վանկատուած և բառերը գծերով զատուած է։ միւս մասն ալ առանց վանկատութեան։ բայց հնչման գրերը մանաւանդ անձայն ը գրերը յայտնի գրուած են։ ինչպէս նաեւ հասարակ գրով եղածներուն մէկ մասն ալ։ Պարբերութիւններու մասին ալ լաւ կարելոյն հոգ տարուած է։ զանոնք համառօտ ընելու և նոր տողէ սկսելու համար։ Ընթերցարանս պատկերազարդ ալ է։ Քրիստոսի Տեառնէն մեր ոնոյ անօրինութեան խորհուրդը կը պարունակէ կարգաւ սկսեալ Աւետումէն մինչեւ Համբարձումը և հանդիսական գաղտաստանը։ իւրաքանչիւր պատկերի խորհրդաւոր նշանակութիւնը իր ներքեւ մանր գրով գրուած է։ անկէ աւելի բացատրութիւն մի չի կայ։ Նոյնպէս կուգան կարգ մը ընտանի անասուններու պատկերներ։

Կը յուսամք որ մեր աշխատութիւնը իր նպատակին կը հասնի։ և Հայ մանկուցն օգտակար ծառայութիւն մ՚ ըրած կ՚ըլլամք։ որ մեր սրտին բաղձանքն է։

24 Սեպտեմբեր 1866։ Ս։ Գ։ Գ։ Փ։

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՔՐՈՒՀԻ ՔԵՌՆ ԻՄՈՅ

ՈՐ Ի ՎԵՑԱՄԵԱՅ ԾԱՂԻԿ ՀԱՍԱԿԻ

ՆՆՋԵԱՅ Ի ՏԷՐ

Ի 19 ԱՊՐԻԼԻ 1850

ԱՐՋԱՆ ԱՆՄՈՌԱՅ

ԹՂԹԱՑՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա. ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՌ ԾՆՈՂՍ

—Պատ ուեա | ըզ հայր | քո | և | ըզ մայր, զի | բա րի | լի նի ցի | քեզ, և | եր կայ նա կեաց | լի նի ցիս | ի վե րայ | երկ րի։

Հայ ըզդ | ու | մայ ըզդ | պատ ուէ, որ | քե զի | բա րի | ըլ լայ, և | երկ րի | վը րայ | շատ | ապ րիս։

—Որ գեակ, պա հեա | զօ րէ նըս | հօր | քո, և | մի՛ | մեր ժեր | ըզ խը րատ | մօր | քո։

Տը գաս, հօ ըլդ | օ ըէնք նե
ը | պա հէ, ու | մօ ըլդ | խը ա
տը | ըն գու նէ։

—Ու դի | ի մաս տուն | ու բախ |
տու նէ | ըզ հայը. ու դի | ան միտ |
ար հա մար հէ | ըզ մայը | իւր։

Ի մաս տուն | տը զան | հայ ը |
կ'ու բա խա ցը նէ. ան խեէք | տը
զան | իր | մայ ը | վար | կը զար նէ։

—Օր հ նու թիւն | հօր | հաս
տա տէ | ըզ տու նը | ոդ ւ ոց,
և | ա նէ ծ.ք | մօր | խախ տեն | ի
հի մա նէ։

Հօր | օր հ նու թիւ նը | տը զոց |
տու նե ը | կը հաս տա տէ, և |
մօր | ա նէ ծ.ք | հի մէն | կը խախ
տեն։

—Ու բախ | ի ցին | հայր և | մայր |
.քո | ի.քեզ, և | խըն դաս ցէ | որ |
ծը նաւ | ըզ.քեզ։

Հայ ըլդ|ու| մայ ըլդ|ու բախ|
ըլ լան|.քու|վը բաղ, և|խըն դայ|
ա նի՝ | որ |.քեզ | ծը նաւ։

Բ. ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԻՆ

—Մի բես ցես | ըզ տէր | Աստ
ուած |.քո, և | պա հես ցես | ըզ
պա տուի բա նըս | նո բա | զա մե
նայն | ա ւու ըրս | կե նայ |.քոյ։

Քու | տէր | Աստուա ծըդ | մի
բես, և | ա նոր | պա տուէր նե
ըը | պա հես | կե նա ցըդ | բո ըր
օ րե բուն | մէջ։

—Ցե ա ռըն | Աստու ծոյ |.քում |
եր կիր պատ ցես, և | ըզ նա | մի
այն | պաշ տես ցես։

Քու | տէր | Աստու ծոյդ | եր
կըր պա գու թիւն | ը նես, և |
զա նի | մի այն | պաշ տես։

—Հե՜ռ է։ Աստուած յամ բա բաշ տաց, և ա զօ թիւց տր դա բաց լը սէ։

Աստուած հե՜ռու է ամ պա բիշտ նե՜ր է, ու տր դար նե՜ր ու՜ն ա զօթիւ՜ն մը տիկ ի՜ նէ։

—Ը՜ա կիզ բ՜ն ի մաս տու թիւ՜ն եր կիւ՜զ Տե՜ա ուն։ Եր կիւ՜ զիւ Տե՜ա ուն խոր շի ա մե՜ նայն ոք ի շա՜ ր է։

Ի մաս տու թիւ՜ն ա կիզ բ՜ն Տի՜ ա՜ ջը վա՜ խն է։ Տի՜ ա՜ ջը վա՜ խով ա մէ՜ն մարդ շար բա՜ նէ հե՜ ռու կը կե՜ նայ։

—Պա տու՜ ե՜ ա ըզ Տէ՜ր և զօ ա՜ ցիր, և բաց ի՜ նը մա՜ նէ՝ յայլ ու մե՜ քէ մի՜ եր կն՜ ն չիր։

Տէ՜ ր ը՜ պա տու՜ է և զօ ա՜ ցիր, և ան կէ զատ ու՜ ր ի՜ շէ մը մի՜ վախ նար։

—Երանի՛ | ո բոց | ոչ | ի ցէ | տե սեալ, և | հա՛ ա՛ա տաս ցեն։

Եր նէ՛կ | ա նուն | որ | չեն | տե սած | ու | պի տի | հա՛ ա՛ա տան։

(Յիսուսի Քրիստոսի ծնունդը։)

—ՅԱ՛ս տու՛ ած | յու՛ սա ցույ, և | ոչ | եր կեայց. զի՞ | ա բաս ցէ | ինձ մարդ։

Յոյ սըս | Ա՛ս տու՛ ծոյ | վը բայ | դը ըմ, և | պի տի | չի վախ նամ. մար դը | ին ծի | ի՞նչ | կըր նայ | ը նե՞ը

—Աստուած | սէր է. և | որ | կայ | ի սէրն՝ | բը նա կեալ է | յԱստուած, և | Աստուած | ի նը մա | բը նա կէ։

Աստուած | սէր է. և | ան | որ | սի րոյ | մէջ | կը կե նայ՝ | Աստու ծոյ | մէջ | բը նա կած | է, ու | Աստուած | ա նոր | մէ ջը | կը բը նա կի։

—Մինչ դեռ | ժա մա նա կըս | ի ձե ռըս | է, գոր ծես ցուք | ըզ բա րիս։

Քա նի որ | ժա մա նա կը | ձեռ ը նիս | է, բա րիք | գոր ծենք։

—Ա մե նայն | ծառ՝ | որ | ոչ | առ նէ | պը տուղ | բա րի, հա տա նի | և | ի հուր | արկա նի։

Այն | ա մէն | ծա ռը՝ | որ | բա րի | պը տուղ | չի բե րեր,

կը կըտ ըը վի | և | կը բա կը | կը ձըգ վի ։

Գ. ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ

—Ամ բես ցես | զըն կեր | .քո | իբ բեւ | զան ձըն | .քո ։ Որ | սի բէ | զըն կե ըըն՝ | զօ բէն սըն | կա տա բէ ։

Գու | ըն կե ըըդ | ան ձիդ | պէս | սի բես ։ Ան | որ | ըն կե ըը | կը սի բէ | օրէն.քը | կա տա բած | կ՚ըլ լայ։

—Ամ բե ցէ.ք | ըզ թըշ նա միա | ձեր , բա բի | ա բա բէ.ք | ա տե լեաց | ձե բոց ։

Ձեր | թըշ նա մի նե ըը | սի բե ցէ.ք, ձեզ | ա տող նե բուն | բա ւիք | ը բէ.ք ։

—Ե թէ | .քաղ ցեալ | է | թըշ նա մին | .քո՝ | կե բա կրեա | ըզ նա , և | ե թէ | ծա բա ւի՝ | տուր | նը մա | ըմ պել ։

թէ որ | թ ըշ նա մ ի դ | ա նօ թ ի | է՝ | ա նոր | կե ր ա կու ր | տու ր, ու | թէ որ | ծ ա ր ա ւ | է՝ | ջու ր | տու ր | խ ը մ ե ր ու ։

—Մի՛ ա սե ր | թէ | որ պէ ս | նա | ը նդ խ ա | գ ը նաց, և | է ս | ը նդ նա | գ ը նա ց ի ց, հ ա տու ց ի ց | ն ը մ ա | որ պէ ս և | զ ը ր կ ե ա ց | զ ի ա ։

Մի՛ ը սե ր | թէ | ա նի | ի՞ն ծ ի | ի՞նչ պէ ս | որ | ը ր ա ւ, է ս | ա լ | ա նոր | այն պէ ս | պի տ ի | ը ն ե մ, ա նոր | հ ա տու ց ու մ | պի տ ի | ը ն ե մ | ի՞նչ պէ ս | որ | ա նի | զ ի ա | զ ը ր կ ե ց ։

—Ո՞ր պէ ս | կ ա մ ի՞ք | թ է | ա ր ա ա ց ե՛ն | ձ ե զ | մ ա ր դ ի կ, այն պէ ս | ա ր ա ա ջ ի՛ք | և | դ ու՛ք | ն ո ր ց ա ։

Ի՞նչ պէ ս | կ՚ու զ է՛ք | որ | մ ա ր դ ի կ | ձ ե զ | զ ի | ը ն ե՛ն, ն ոյն պէ ս | դ ու՛ք | ա լ | ա ն ո՛ն ց | ը ր է՛ք ։

Ե. ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

—Ե բա՝ նի՞ | ո զոր մա ծ ա՛ց, զի՝ | նուքա | ո զոր մու թիւն | գլուտ ցեն։

Եր նի՛կ | ո զոր մաձ նե բուն, ին չու որ | ա նունք | ո զոր մու թիւն | պի տի | գլուտ նեն։

(Ընկեր մոգերուն երկրպագութիւնը Քրիստոսի։)

—Բար ձլոր | ի գլ լու խ | պար ծի՝ | ո զոր մու թիւն | ու գա տաս տա նաս։

Ո զոր մու թիւ նը | բար ձլոր | գլ խով | պի տի | պար ծե նայ | գա տաս տա նի | օ լը։

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ
A 7512

—Որ | որ բուս ցե | բա ժակ | մի | ջուր | ցուրտ , ոչ | կո ղուս ցե | ըզ վար ձքս | իւր ։

Ան | որ | բա ժակ | մը | ցուրտ | ջուր | խըմ՝ ցու նէ , իր | վարձ .քը | պի տի | չը կոր սըն ցը նէ ։

—Ե բա նէ՛ | որ | խոր հի | զաղ .քա տըն | և ըզ տը նանկ . յա ւուր | չա ըի | փըր կէ | ըզ նա | ՏԷ՛ր ։

Եր նէ՛կ | ա նոր՝ | որ | աղ .քա տին | ու | տը նան կին | հոգ | կը տա նի . Տէ ըը | զա նի | կը փըր կէ | իր | նե զու թեան | օ ըը ։

—Փոխ | տայ | Աս տու ծոյ , որ | ո զոր մի | տը նան կին ։

Աս տու ծոյ | փոխ | տը ւաձ կ՝ըլ լայ | ան՝ | որ | տը նան կին | ո զոր մու թիւն | կ՝ը նէ ։

Զ. ԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

—Աստուած | ամբարտաւանմարդոց | հակառակ | է, խոնարհներուն | շնորհք | կուտայ։

Աստուած | ամբարտաւանից | հակառակ | է, և | տայ շնորհս | խոնարհաց։

—Ան | որ | իր | անձը | կը բարձրացնէ՝ | պիտի | խոնարհի, և | ան | որ | իր | անձը | կը խոնարհեցնէ՝ | պիտի | բարձրանայ։

Որ | բարձրացուցանէ | զանձն՝ | խոնարհեսցի, և | որ | խոնարհեցուցանէ | զանձն | բարձրասցի։

—Քեզ | ըն կեր ըլլ | թողգո�| վէ, և | չէ | թէ | քու | բերբա

նըդ. | օտարը | թող | գո՛վէ, | և | չէ թէ |.քու | շուր թունքըդ։

Գո՛վեա՛ցէ | ըզ.քեզ | ընկերը՝ն, և | մի՛ |.քո | բերանն. օտարը՝ն, և | մի՛ |.քո շուր թունք։

—Զեզ մէ | ով | որ, առաջին | ըլլալ | ուզէ, ձեզի | ծառայ | պիտի | ըլլայ։

Որ | կամ մի ցի | ի ձէնջ | առաջին | լինել, ե՝ զի ցի | ձեր | ծառայ։

—Իմաստուն՝ը | իր | իմաստուն թեան՝ը | վը բայ | թող | չը պար ծե՛նայ, և | ու ժո՛վը | իր | ուժին | վը բայ | թող | չը պար ծե՛նայ, և | հարուստը | իր | մեծուն թեան՝ը | վը բայ | թող | չը պար ծե՛նայ։

Մի՛ պար ծեսցի | իմաստուն՝ը՝ն | յիմաստուն թիւն | իւր,

և | մի՛ պար ծես ցի | հը զ ը ը ը ն | ի զ ը ը ու թիւն | իւր, և | մի՛ պար ծես ցի | մե ծա տու նն ն | ի մե ծու թիւն իւր։

Է. ՀԵԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԿՈՒԹԻՒՆ
ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

—Տը զա՛ս, զոր ծե ը ը դ | հե զու թիւ նով | տես նես | որ | ը ն տիր | մար դե ը է | սիր վիս։

(Յիսուսի Քրիստոսի տաճար ընծայումը։)

Ո ր դ եակ, ը ղ զոր ծ ը ս | ք ո | հե զու թեամբ | վա ը ես ջիր,

և | յա բանց | ընտ բե լոց | սի բես ցխա ։

—Ա. զէկ | է | այն | մար դը՝ որ | իր|բար կու թիւ նը | կը զլա պէ, քան թէ | այն | մար դը | որ հը զոր | քա զաք | մը | կ'առ նէ ։

Լաւ | է | այր՝ | որ յաղ թէ | բար կու թեան, քան | որ | առ նու ցու | ըզ.քա զաք | հը զոր ։

—Քա ը | ծան բու թիւն | և | ա ւա զը | բեռ | ու նի, բայց | ա նըզ գամ | մար դուն | բար կու թիւ նը | եր կու քէն | ալ | ծա նը | է ։

Քար | ծա նը | է | և | ա ւազ | դըժ վա ը մին | առ | ի բառ նալ. բայց | բար կու թիւն | ա նըզ գա մի | ծան բա գոյն | է | քան | զեր կո սեան ։

—Եր նէկ | խա զա զու թիւն |

ը նոր նեռ բուն, ին չու | որ | ա նանք | Աս տու ծոյ | զա ւակ ներ | պի տի | կոչ վին։

Ե բա նի՞ | խա զա զա բա բաց | զի | նո.քա | որ գ.ի.ք | Աս տու ծոյ | կո չես ցին։

—Ան | որ | մին չեւ | ե տ.ք.ը | կը համ բե ր.է, պի տի | ապ ր.ի։ Ձեր համ բե բու թիւ նո վը | հո գի նիդ | վաս տը կե ցէ.ք։

Որ | համ բե բես ցէ | խա պառ | նա | կեց ցէ։ Համ բե բու թեամբ ձե բով | ը տաս ջի.ք | զո գիա | ձեր։

Ը. ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

—Մէկ գի | ձը գե ցէ.ք | ա գա հու թիւ նը, որ | կը ուա պաշ տու թիւն | է։

Ի բաց | ը՞ն կե ցէ.ք | զա գա հու թիւն, որ | է | կը ուա պաշ տու թիւն։

—Մարդ | մը | չի կրր նար | երկու | տի բոշ | ծառայու թիւն | ը նել։ Զէ՛ք | կրր նար | ծառայել | Աստու ծոյ | և | ըստ ատ կի։

Ոչ | ոք | կա րէ | երկու-ց | տեր բանց | ծառայել։ Ոչ կա րէ՛ք | Աստու ծոյ | ծառայել | և մա մո նայ։

—Ան խել է՛ք, աս | գի շեր | հոգիդ | քեզ մէ | ետ | պի տի | ուզեն, ուս տի | ան | որ | պատ բաս տեր ցիր՝ | ո՞ րի | պի տի | ըլ լայ։

Ան միտ, յայ սըմ | գի շե րի | զոգիդ | ի՛ քէն | ի բաց | պա հան չի ցեն. խակ | զոր | պատ բաս տե ցե ըլն՝ | ո՞ւմ | լի նի ցին։

—Խը բատ | ըն գու նե ցէ՛ք | և | չէ թէ | ար ծաթ. ըն տիր | ոս կի էն | ա՛ւե լի | գի տու թիւ նը | սի րե ցէ՛ք։

Ընկա լարուք | ըզ խը բատ | և | մի՛ | զար ծաթ , և | ըզ գի տու թիւն | .քան | զոս կի | ըն տիր ։

–Ի մաս տուն | մար գը | ու ժոմ | մար գէն | ա զէկ | է . բանի բուն | մար գըն | ալ | մեծ | կա լուած ներ | ու նե ցո զէն | ա զէկ | է ։

Լաւ | է | ի մաս տուն | .քան | ըզ հը զոր , և | հան ճա ր ե զ | .քան | զայն | որ | ու նի ցի | գաս տա կեր տըս | մե ծա մե ծրս ։

Թ . ԴԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

–Իր | ևր կի ըը | գոր ծո զը | հա

ցուլ | պի տի | լե ցուլ։ և | պա րապ | կե նալ | ու զո զը | աղ.քա տու թիւ նով | պի տի | լե ցուլ։

Որ | գոր ծէ | զեր կիր | իւր | լաց ցի | հա ցիւ. և | որ | լաղ հե տ | եր թայ | գա տար կու թեան | լաց ցի | տը նան կու թեամբ։

—Ե րե սիդ | .քըր տին.քո վը | .քու | հա ցըդ | պի տի | ու տես։ Ան | որ | գործ | գոր ծել | չու զեր, հաց | ալ | թող | չու ուէ։

Քըր տամբ.ք | ե րե սաց | .քոց | կե րի ցես | լաղ հաց | .քո։ Որ | ոչ | կա ամ ի ցի | գոր ծել, և | կե րի ցէ մի։

—Պա րա պու թիւ նը | սի րող | ու | ան հոգ | մար գը | միշտ | կա ըօտ | պի տի | ըլ լայ։ Մե զու ին | գը նա | և | ան կէ | տր վէ | թէ | ի՛նչ պէս | գոր ծու նեայ | է։

Ան ձլն | գիւ ըլն | և | ան հո գլն |

ի կա բօ տու Թեան | ե զի ցի։
Երկ | առ մե զուն, և | ու սկը |
զի արդ | գոր ծօն | է։

—Ա նոնք | որ | ար ցուն.քով | կը
ցանէ ին, ցըն ծու Թիւ նով | պի
տի | հըն ձեն։

Ո յք | վա ըէ ին | ար տա սու օք |
ցըն ծու Թեամբ | հըն ձես ցեն։

Զեռ .քըդ | ինչ | գոր ծ | որ |
գըտանէ | գոր ծե լու, կըը ցա ծիգ |
չափ | գոր ծէ։

Զա մե նայն | ինչ | որ | ինչ | գըտ
ցէ | ձե ռըն | .քո | գոր ծել, որ
չափ | ի կա ըի | .քու մ | ի ցէ | գոր
ծես ջիր։

Ժ. ՍՐԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՊՂԾՈՒԹԻՒՆ

—Եր նէկ | ա նոնց | որ | սըը տով |
սուրբ | են, ին չու որ | ա նոնք
զԱս տուած | պի տի | տես նեն։

—Եբանէ՞ այնոցիկ որ սուրբ
են սրբ տիւք, զի նոքա զԱս
տուած տեսցեն։

—Տէր ըզ կը սի րէ սուրբ սիր
ող և բոլոր անձ նա բատ ան ձէ
ր ի բեն ընդ ունելի են։

Սի ր է Տէր ըզ սիրտ սուրբ
և ընդ ունելի են նը մա ամե
նայն անձ նա բատք։

—Տէր ըզ իր ողորմութիւնը
չի պակ սեցը ներ անուն վրայ
էն, ո ր ոնք ան ըզ ծուութեամբ
կեանք կ՚ան ցը նեն։

Տէր ոչ պա կաս առնէ զո
ղորմութիւն իւր յայն ցանէ
որ զնան յան ըզ ծուութեան։

—Պիղծ մարդ զԱս տուծոյ
արքայութեանը մէջ ժառան
գութիւն չունի։

Ամենայն պիղծ ոչ ունի ժա

ռան գու թիւն | յար քա յու
թեանն | Աստու ծոյ ։

—Ե րանե լի | են | անունք | որ |
ան բիծ | են | ու անունք | որ | Տիրոջ
| ջը | օրէնքին | մէջ | կը քա լեն ։
Ե րանեալ | են | ան բիծք | և |
ոչք | գը նան | յօրէ նըս | Տեառ ըն։

ԺԱ. ԴԻՄԵԼ, ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Զա մե նայն | սիրտ | քըն նէ |
Տէր | և | զա մե նայն | խոր հուրդ
դըս | ճա նա չէ ։

Որ պէս | գը թայ | հայր | ի վե
րայ | որդ ւոց | իւ րոց, այն պէս |
գը թաացի | Տէր | յեր կիւ զա ծըս |
իւր ։

Զա մե նայն | հո գըս | ձեր | ըն
կե ցէք | ի նա. զի | նա | է | որ | հո
գայ | վա սըն | ձեր ։

Եթէ | ոչ | Տէր | շինէ | ըզ տուն,
ի նա նիր | վաս տա կին | շի նողք |
նո ցա ։

Եթէ | ոչ | Տէր | պահէ | ըզ քա
ղաք, ըն դու նայն | տըք նին |
պա հա պանք | նո ցա ։

Տէ րը | կը բըն նէ | ա մե նուն |
սիր տը | և | կը ճան չէ | ա մե նուն |
խոր հուրդ նե րը ։

Ինչ պէս որ | հայ ը | իր | զաւա
կաց | վը ցայ | գուրթ | ու նի, ա
նանկ | ալ | Տէ ր | գուրթ | ու նի |
իր | եր կիւ զած նե ցուն | վը ցայ ։

Զեր|բո լոր | հոգը՝| ա՛նոր | վը
բայ | ձը գե ցէ.ք, ին չու որ | ան|է
որ | ձե զի | հա մար | կը հո գայ։

Թէ որ | Տէ րը | չի չի նէ | տու
նը, պա բաղ | տե զը | կ՚աշ խա
տին | ա՛նոր | չի նոգ նե ը։

Թէ որ | Տէ ը | չի պա հէ | .քա
զա.ը, պա բաղ | տե զը | կը հլա
կեն | ա՛նոր | պա հա պան նե ը։

ԺԲ · ԲԱՐԵԿԱՄ

Լաւ | է | բա ը կամ | մեր ձա
ւոր|.քան|զե զ բայր|հե ռա ւոր։

Լաւ | ե՛ն | եր կու |.քան | ըզ մի·
զի | ե լծէ | գը.ը ի ցի | մին կանգ
նե ս ցէ | ըզ նա | ըն կեր | իւր։

Վա՜յ | մի ու մըն | յոր ժամ |
գը.ը ի ցի, և | ոչ գու ցէ | միւս
որ | յա որ ցա նի ցէ | ըզ նա։

Բա ը կամ | հա ւա տա ի մ |

ծաղ կոյթ | հը զոր. խակ | որ | գը տա նէ | ըզ նա | ե գիտ | գանձ։

Եղ բայը | յեղ բօ րէ | օղ նեալ | իբ րեւ | ըզ.քա զաք | ա մուր, և | զօ րա ցեալ | բարձ րա ցեալ | իբ րեւ | ըզ թա գա ւո ր ու թիւն | հաս տա տեալ։

* * *

Մօտ | գըտ նը վոզ | բա րե կա մը | հե ռուն | գըտ նը վոզ | եղ բօր մէն | ա զէկ | է։

Եր կու | ըլ լա լը | մէկ | ըլ լա լէն | ա զէկէ. ին չու որ | ե թէ | մէ կը | գը ը ր ի, ըն կե ը | զա նի | կը վե ր ցը նէ։

Վա՛յ | գը ը ր ոզ | մէ կին, որ | զին.քը | վե ր ցը նոզ | ու ր ի շ մը | չու նի | .քո վը։

Հաւատա՛ր իմ | բա՛ր ե՛կամ մը | զո՛ր բա՛ւոր | ծաղ կոյթ | մ՚է. իսկ զա՛նի | գլուխ նո՛ղը | գանձ | գը տաղ | կ՚ըլլայ։

Եղ բայր | եղ բօր մէն | օդ նու թիւն | գլուխ նե՛ լով | ա մուր | քա՛ զա՛քի | պէս | կ՚ըլլայ. և | կը զո՛ր բա՛նայ | ու | կը բարձ բա՛նայ | հաս տա տուն | թա գա ւո՛ր ու թեան | պէս։

ԺԳ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԿԱՄԻ

Ե թէ | ըս տա՛նաս | բա՛ր ե՛կամ մը, փոր ձիւ | ըս տա ցիր | ըզ նա, և | մի՛ | իսկ և իսկ | վըս տահ | լի՛նիր | ի՛նա։

Ըզ բա՛ր ե՛կամ | քո | և | ըզ

բա բե կամ | հայ բե նի | մի թո
ղուր։ Մի | թո ղուր | ըզ բա բե
կամ | հին, զի | նո րըն | ոչ | է |
հա ւա սար | նը մա։

Մի | նիւ թեր | բա բե կա մի |
.քում | չա բիս, որ | յե ցեալ | և |
յու սա ցեալ | ի ցե | ի .քեզ։

Մի | լի նիր | ըն կեր | ա ռըն |
բար կա ցո զի, և | ընդ | բա բե
կա մի | զայ բա ցո զի | մի | ըբ նա
կեր. դու ցե | ու սա նի ցիս |
ըզ ճա նա պար հըս | նո բա։

Մե ծու թիւն | յաւե լու | բա
բե կա մըս | բա զու մըս, և | աղ
.քա տըն | և | ի բուն | բա բե կա
մէ | ան տի | .քա կի։

* * *

Թէ | որ | բա բե կամ | ըս տա
նաս, փոր ձէ | ու | ա նանկ | ըս
տա ցիր | զա նի, և | ոչ | ալ | ան

մի չա պէս | վրա տահ | և ղիր | ա նոր | վը բայ ։

Քու | բա րե կա մըդ | և | հօ ըրդ | բա րե կա մը | մի | թո ղու ր ։ Հին | բա րե կա մը | մի | թո ղու ր | ին չու | որ | նո ը | ա նոր | հա ւա սար | չէ ։

Զա ր ու թիւն | մի | մը տա ծեր | քու | բա րե կա միդ | հա մար , որ | քե զի | կը ու թը նաց | և | յու սա ցած | է ։

Բար կա ցող | մար դուն | հետ | ըն կե ր ու թիւն | մի ը ներ , և զայ ր ա ցող | բա ր ե կա մի | հետ | ը ը նա կու թիւն | մի ը ներ , որ | չը լայ | թէ | ա նոր | ճամ բայ նե ը | սոր վիս ։

Հա ը ը ս տու թիւ նը | շատ | բա ր ե կամ ներ | կ՚ա ւել ցը նէ , բայց | աղ քա տը | իր | բուն

բա բե կա մէն | ալ | կը զատ ուն։

ԺԳ. ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՅԱՆԶԳԱՄԷ

Լաւ | են | հար ուածք | բա բե կա մի | քան | ըզ կա մա կոր | համ բոյ բըս | թըշ նամ ւոյ։

Յոր ժամ | նա խա տի ցէ | ըզ քեզ | բա բե կամ | քո, խոյս | տուր, մի՛ ար հա մար հեր։

Ընդ | ա նըզ դա մին | մի՛ | յաւ ճա խեր | բա նիւ, և | առ ան մի տըն | մի՛ եր թ ար։

Ի ճա նա պար հըս | ամբա բըշ տաց | մի՛ եր թ այ ցես, և | ի տեղ ւոջ | ուր | բը նա կի ցեն, ընդ այն | մի՛ ան ցա նի ցես։

Որ | մեր ձե նայ | ի ձիւ թ՝ շա ղա խես ցի. և | որ | հա ղորդ | լինի | ամ բար տա ւա նի, նը մա նես ցի | նը մա։

* * *

Բա րե կա մին | տը վաճ | վէր
.քե ը | ա զէկ | են | .բան | թէ |
թ ը շ նա մի ին | տը վաճ | գէշ |
մ ատ.քով | համ բոյր նե ը ։

Բա րե կա մ ը դ | ե ր ք | .քեզ |
նա խա տէ , ե ր ե տ ը դ | պա հէ ,
ու | մի՛ տը հա մար հեր | զայն ։

Ա.նը զ գամ | մար գու | հետ |
շատ | խօսք | մի՛ ը ներ , և | ան
միտ | մար գուն | հետ | մի՛ տեա
նը վեր ։

Ամ բա ր ի շտ նե ր ու ն | ճամ
բան | մի՛ եր թ ար , ու | ա նոնց |
բ ը նա կաճ | տե զէն | մի՛ անց նիր ։

Զիւ թի | մ օ տե ցո զը | անով |
կը պը լը շ կի , ամ բար տա ւան |
մար գու | հետ | ե զ ը զը | ա նոր |
կը նը մա նի ։

Մանուկ | էր | ես | և | ծեր բա ցայ, և | ոչ | տես էր | զար դար | ար հա մար հեալ, և | ոչ | ըզ զաւակ | նոր բա | թէ | մու բա նայ | հաց։

Արդարք | վայելեսցեն | ի մեծ ուրթեան | ամբս | բազուն մբս, և | անի բաւք | կորընչին | վաղ վազ կի։

Մեծ ուրթիւն | անի բաւ ուս թեամբ | ժողովեալ | փրսխեսցի։

Մեծ ուրթիւն | խրոս կեալ անի բաւ ուս թեամբ | պահ կա սես ցի. իսկ | որ | աս տուած պաշտուս թեամբ | ժողվէ, բազմասցի։

Են | որ | զիս բեանց | սեր մանեն, և | բազմապատիկ | առնեն, և | են | որ | յանի բաւ ուս թե

նէ | ժողովեն, և | կարօտանան։

* * *

Տը զայ | է ի | ու | ծե բա ցայ, բայց | ար գա բը | ան տես | ե զած չը տե սայ, ոչ | ալ | ա նոր | զա ւա կը | հայց | մու բա ցող։

Ա.ը գար նե բը | ի բե նց | հա բրա տու թիւ նը | շատ | տա բի ներ | պի տի | վայ ել են. իսկ | ա նի բաւ նե բը | շու տով | կը կոր սը վին։

Ա.նի բա ւու թեամբ | ե զած | մե ծու թիւ նը | պի տի | փլա խը վի։

Ա.նի բա ւու թեամբ | ե զած | մե ծու թիւ նը | պի տի | պակ սի. իսկ | որ | ան տու ած պաշ տու թեամբ | կը ժող վէ, պի տի | շատ նայ։

Մար դիկ | կան | որ | ի բե նց |

ու նե ցա ծը | կը ցա նեն | եւ | շատ | ե վե լոբ | կ'առ նեն. մար դիկ | ալ | կան | որ | ա նել բա ւու թեամբ | կը ժող վեն, բայց | կա լոտ | կ'ել լան։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

Մարդս ըստեղծուած եւ սահմանուած է, որ ըլլայ առաք.քինի բարի և արդարասէր։

ՃՐՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՔՐՆՆԵԼ, ԼԱՒԸ ՈՒԶԵԼ և ԸՆՏԻՐԸ ԳՈՐԾԵԼ ԱՀԱ ԱՍՈՆՔ ԵՆ ՄԱՐԴՈՒՍ ԿԵՆ

դանութեան խորհուրդը։

Եթէ կամք չունիս առաքի-նութեան ետեւէ ըլլալ, ապա վերջացար դու մարդ ըլլալէ։

Ցա միայն բարի է, որ և ոչ մէկ ժամանակ իր անձը չէ՛ կարծած ըստ բաւականին բարի, և կ՚աշխատի օրէ օր առաւել բարի ըլլալ։

Հաւատութեան պակաս-թիւնը՝ խելքի պակսութիւնէ։

Սրդարտէր մարդու առաջին վարձատրութիւնն է իր յատուկ սրտին վրայութիւնը, որ կ՚ըսէ. քու գործդ բարի՛ է։

Մարդուս բարի ու չար գործերը կենդանի կը մնան, թէպէտեւ ինքը մեռած գացած ըլլայ։

Մի՛ կենակցիր ամբարիշտ մարդոց հետ։ Փլատած խրճձորը դիր մեկ քանի օր դալար խրճձորներու քով, և կը տեսնես որ երկուքին ալ կ՝ապականին։

Թող պարծանք ըլլայ քեզի քու անմեղութիւնդ. ճանչցիր քու յարգդ, և պատուէ օտարինը։

Որքան առաւել խոնարհաւիտ ըլլաս, այնքան եւս առաւել փառք կը գտնես։

Ինքնահաւանութիւնը՝ հոգւոյ աչքի ցաւ մ՝է, որով միւս մարդիկը քեզի փոքրիկ կ՝երեւան. բայց զարմանք ան է որ դուն ալ անոնց շատ չընչին բան մը կ՝երեւաս։

Ով որ իմաստութեան պատուէրները կը սորվի բայց չի կա-

տարեր, նման է այն մարդուն որ իր երկիրը կը հերկէ բայց չի ցաներ։

Ուրիշները բընող բայց իր անձը չի ճանչցող մարդը կը նը մանի անոր, որ աւելի ծանօթ է օտար երկրի, քան թէ իր տանը։

Ամենեւին բան մը կարող չէ այնպէս կըրթել մեր սիրտն ու միտքը, ինչպէս աղնիւ օրինակները, խրատական խօսակցութիւնները և բարի ընկերութիւնները։

Ամենեւին բան մը մի՛ ըներ առանց խորհրդածելու, և գործ մը մի՛ ըսկըսիր, մինչեւ հաստատն մըտքով յառաջուց կըշռած չըլլաս անոր բոլոր պարագայները։

Երազի պէս կ՚անցնին մեր մանկ

կուլթեան օրերը. երանի՜ անոր որ կարող է անոնցմէ օրինաւոր օգուտ քաղել։

Թող ժամանակը անցնի, մի՛ այն թէ չի կորսուիր. դեռի հոգանքը կարող ենք խափանել, բայց կարող ենք անկէ ջուր վերցընել։

Խրճմլտանքի ձայնը Աստուծոյ ձայնն է։

Խրճմլտանքը կաշառք չառներ. փակէ քու անձդ, ինչպէս որ կ'ուզես, բայց նա քեզի հետ է միշտ. նա քուն չունի, չի մոլորիր։

Ուսումը և դատարակու-

թիւնը մեծ բաներ կը կատա-
րեն. երբ մշտադիւրութիւնը
եւ հնազանդութիւնը անոնց
օգնական են։

Եթէ դուն առանձին ըլլաս,
մի՛ մոռնար թէ Աստուած եւ
քու խրդմբտանքդ մօտ են։

Հասարակ մարդիկ կ'ապրին
ուտելու և խմելու համար.
բայց կրթեալները կ'ուտեն ու
կը խմեն՝ ապրելու համար։

Աւելի լաւ է ըլլալ աղքատ
արդարութեամբ, քան թէ հա-
րուստ՝ անիրաւութեամբ. ար-
դար աղքատութիւնը կը գըտ-
նէ ցաւակցութիւն, եւ անի-
րաւ հարստութիւնը կ'ըստա-
նայ իր արժանի պատիժը։

Երախտագիտութիւնը սրբ-
տին յիշատակն է։

Հոգագործութիւնը և վաճառականութիւնը ազգաց հարստութիւն կուտան։

Հարուստներուն աւելորդ ծախքերը բազմութիւն ընտանեաց երջանկութեան պատճառ կըրնան ըլլալ։

Մահկանացուք հաւասար են. եւ չէ թէ զարմը, այլ առաքինութիւնն է որ իրարմէ կը զանազանէ։

Ճըշմարտութիւնը մտաց լոյսն է։

Ստախօսին հաւատացող չըլլար, եթէ շիտակ ալ ըսէ։

Թագաւորները միմիայն ժողովուրդոց երջանկութեան համար սահմանուած են։

Քաջասիրտութիւնը հոգւոյն արտաքոյ կարգի զօրութիւնն է։

Զբրպարտութիւնը նախանձ ճոտներուն զէնքն է։

Ապագային անբստուգութիւնը երջանիկ կարծուած մարդոց խաղաղութիւնը վրդովող է, բայց գրժբաղդներուն համար յուսոց պատճառ, որ զիրենք կը մխիթարէ։

Մարդուս մրշակութիւնը կրթութիւնն է։

Յոյսը կը կենդանացնէ քաջութիւնը. երկիւղը գործունէութիւն կուտայ։

Շահը պատիւէն նախամեծար ընտրելը վատթարութիւն է։

Դժբաղդներուն թափած արցունքները արիւն արցունք են. որոնք սրտի խորերը կը բըղխին և կը հոսին։

Քաղաքացիի մը առաջին պարտքն է օրինաց հնազանդ ըլլալը։

Պէտք է յարգել առաքինու թիւնը, աստիճանաւորները, ծերերը և դըժբաղդը։

(Աղօթք Քրիստոսի «Անցէ բաժակս այս»)։

Գէշ օրինակները աւելի վըտանգաւոր են, քան թէ գէշ խօսքերը։

Գեղեցկութիւնը անցաւոր է։

Իմաստուն մարդիկ նախատեսս կ'ըլլան։

Աղնիւ անձը միշտ անկեղծ կ'ըլլայ, իւր դիտցած ճշմարտութիւնները ամենուն կը հաղորդէ, երբ ինքը դատէ, որ անոնք բարի ու օգտակար են։

Գիշերը երկայն կը թուի այն վըշտակիր մարդուն, որուն աչքերը քուն չի մտներ։

Հաստատակամութիւնը երջանիկ կ'ըլլայ, երբ հրսկող կառավարութիւնը բարեոք և օրինաւոր է։

Քրիստոսի սուրբ Աւետարանը քու հանապազօրեայ ընթերցումդ ըլլէ։

Աժխոյժ կըրակոտ և զայրացկոտ երիտասարդները ուրիշ բան չեն մտածեր, բայց միայն իրենց կամքը կատարել տալ։

Զօրաւորին իրաւունքը ընտ-

րելի սեպել տալը բռնաւորութիւն է։

Ինչպէս որ ազնիւրին ջրոյն յարգը ծարաւութեան մէջ կը ճանչցուի, այնպէս ալ ճշմարիտ բարեկամները աղէտից մէջ։

Ցուարթութիւնը սաեղի չորաբեկ կերակուրներու մէջ կը թագաւորէ, քան թէ մեծամեծ հացկերոյթներու մէջ։

Ան մարդը որ հասարակաց երջանկութեան և անդորրութեան վրնաս մը հասուցած է, իրաւունք չունի քաղցը և երջանիկ կեանց մը ակընկալել։

Խիղճը որ մեր թերութեանց ականատես է, միշտ զանոնք կը յիշեցնէ մեզի։

Գերեզմանը արձան մ'է, եր-

կու աշխարհներուն սահմանա-
գըլուխը կանգնած։

Իմ հայրըս իմ ընտիր բարե-
կամըս է։

Մարդ չի կայ որ կարող ըլ-
լայ ըսել. ես ամենեւին պակա-
սութիւն մը գործած չեմ։

Քանի որ հարըստանամք, այնչափ կը շատնան մեր փա-
փաքները։

Ապիրատ է այն մարդը, որ իր նախահարց սուաքինու-
թեանց վըստահացած է. մենք ալ ջանանք անոնց նման աղէկ մարդիկ ըլլալ։

Մարդըս ընդունայն կ'աշխա-տի երջանիկ ըլլալ. այս աշխար-հի վըրայ կատարեալ երջանկու-թիւն չի կայ։

Կատարեալ երջանկութիւ-

նը հանդերձեալ աշխարհը երկ-
նից աղբյուրեան մէջ կը գըտ-
նըվի։

Եթէ կենդանիներուն բա-
րերարութիւն ընես, անոնք
անգամ կ'ըզգան քու աղէկու-
թիւնդ։

Մեզի բարերարութիւն ը-
նողները սիրել պարտական ենք։

Երիտասարդները կը խօսին
ինչ որ կ'ընեն, ծերերը՝ ինչ
որ ըրած են, իսկ անմիտները՝
ինչ բան որ ընել կը փափաքին։

Ներսէ ուրիշին պակասութիւններուն, որպէս զի անոնք ալ քու պակասութիւններուդ ներողամիտ ըլլան։

Ով որ չի ճանաչէ իր պակասութիւնը, չի կրնար զայն ուղղել։

Իր տոհմը գովելը ուրիշներուն արժանաւորութիւնը գովել ու գրուատել է, չէ թէ իր արժանաւորութիւնը։

Օրէնքը յարգող մարդը երջանիկ է, վասն զի խաղաղութիւնը իր հետ է։

Ձեր բարեկամներուն թերութեանց ներողամիտ եղէք. մինթէ դուք ալ նոյն թերութիւնները չունիք։

Աստուած ըզքեզ ստեղծեց որ զինքը սիրես, և ոչ թէ զին

քը իմանաս։

Որչափ որ հրզօր ըլլաս, դարձեալ մի՛ մոռնար որ մարդ ես։

Շատ թշուառ է այն տըղան, որուն իր ուզած ամէն բանը կը խոստացուի։

Սիրեցէք ճշմարտութիւնը, սիրեցէք զայն՝ ամէն բանէ աւելի։

Ճըշմարիտ բարին երկինքըն է. պէտք է զայն ըստանալ։

Իր պարտքը կատարող մարդը իրաւունք ունի յարգութիւն ըստանալու պարկեշտ անձերէ։

Փորձառութեան դասերը ընտիր դասեր են։

Մեծ իշխանը այն է, որ իր ժողովուրդը երջանիկ ապրեցընել գիտէ։

Միմիայն տարիներն են ըզմարդ դիկ փորձառու ընողը, ոչ ապաքէն սովորութիւնն ու մը տապիւրութիւնը շատ անգամ փորձառու կ'ընեն ըզմարդիկ։

Թագաւորին քիչ խորհած բանը՝ աղքատաց օգնութեան հասնելն է։

Բարեկամութիւնը հոգի մ' է որ երկու մարմնոց մէջ կը բնակի, և սիրտ մը՝ որ երկու հոգւոց մէջ կը բնակի։

Այն բանը որուն վերայ մարդիկ քիչ կը խորհին, մահն է։

ԲԱՂԱԲԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

Ա.

Անկողնէն ելնելս՝ կամ անկողին մտնելս՝
ապէն ի՞նչ պարտք կայ ընելս։

Առաւօտներըս արթնանալուդ պէս՝ անկողնէդ ելլ, Աստուծոյ փառք տուր։

Շապիկով մի՛ կենար, կուրծքիդ և սրսուանքներիդ բաց մի՛ պրտըտիր. շուտ մը ըսկըսէ հագուիլ։

Երեսիդ, աչքիդ, բերանիդ ակռաներիդ, ձեռքիդ, սկանջներիդ լուա. մազերիդ սանտրէ. եղունքներիդ (թրռնախներիդ) կըտրէ։

Հագածներդ փոշիոտ (թո-

ղոտ) չըլլան. պատուած քակուք և բիծ չըլլայ հագուստիդ վը-
բայ. ոտքի ամանեղիդ մաքուր
ըլլան։

Եթէ կրնաս եկեղեցի եր-
թալ, հագվելուդ պէս գընա.
և աղօթք ըրէ Աստուծոյ, շնոր-
հակալութիւն տուր, և բոլոր
անձրդ անոր շնորհացը յանձնէ։

Իսկ եթէ չես կրնար եկե-
ղեցի երթալ, եղած տեղդ
աղօթքդ ըրէ, խելքդ գը-
լուխդ, միտքդ ամփոփ. եւ
Աստուծոյ շնորհքը խընդրէ։

Աղօթքդ լըմընցունելուդ
պէս գընա հօրդ ու մօրդ
ձեռքը պագ. տես ինչ հրա-
ման կ'ընեն քեզի, սիրով կա-
տարէ, և եռքը գընա վարժա-
բան։

Իրիկունները պառկելու առնելդ մինչեւ ծընողներէդ հրաման չառնես, մի՛ երթար պառկելու։

Անկողին չի մտած, աղօթքը ըրէ, վայելուչովը հանիլ, հագուստովդ մաքրէ ծալէ ու տեղը դիր։

Աչ կողմիդ վերայ պառկէ. և չի քընացած՝ օրուան մէջ ըրածներովդ յիշէ. թէ որ յանցանք մը գործեր ես, զղջա ու մէյ մ՚ալ չընելու խօսք տուր Աստուծոյ։

Բ.

Փալէլը և նըստելը ի՞նչ կանոններ ունին։

Փալէլը իր շնորհքը ունի։ Ոտքդ այնչափ վերցուր որ գե-

տինը չի քերէ ու ձայն չի հա-
նէ. քայլէդ (ատրմէդ) ոչ մեծ և
ոչ պզտիկ՝ այլ չափաւոր ըլլայ։

Քալելու ատեն գլխուխէդ
շատ մեր մի՛ բլուներ, գոռոզ-
զութեան նշան է. շատ ալ
վար մի՛ բլուներ, գետնի վերայ
բան բընտրտողի պէս։

Ձեռքէդ եռիդ մի՛ կապեր,
համբիչով (թեզպեհով) մի՛ խաղ-
ցար. մէկ կողմէ միւս կողմ մի՛
շարժիր, շատ ծանրը մի՛ քալեր,
ոչ ալ շատ արտաքնօք՝ եթէ ըն-
տիպող գործ մը չի կայ։

Ճամբան ձեռքէդ ուտելիք
չըլլայ, ինքնիրենէդ մի՛ խօսիր.
խաղ կամ երգ մի՛ կանչեր, քը-
թիդ տակէն ձայն մի՛ հաներ։

Ցաթկլուտելու պէս ոտքիդ
մատնիներուն վերայ մի՛ քալեր,

կամ թէ ոտքերդ ուժով գետնին մի՛ զարներ կառք (առապա) անցնելու պէս։

Նրատելն ալ իր շինարհիքը ունի, ծունկերդ իրարմէ չի զատելով, գինովի պէս չերեւալով, հանդարտ ու շիտակ նրատէ։

Նրատելու ատենդ ծանրը բանի պէս նրատարանին վրայ մի՛ խնար վրուելիր. հիւանդի պէս տըքալով կրունակդ բարձին մի՛ հասցներ։

Ծուլութեան և անհոգութեան նշան է գլուխը և բոլոր անձը ետեւին վրայ տանիլ ու կրութընիլը։

Ձեռքերդ երկու կողմի բարձերուն վրայ մի՛ փռուեր. ոտքիդ մէկը մէկ կողմ՝ մէկը

ուրիշ կողմ մի երկրնցներ, կրոնակրդ ուրիշն մի դարձը-ներ։

Երբ ոտքի վերայ ելաս, ուրիշն մի կրոթիներ, բաժնուելու ելաս, և ուրիշ նստողներ ելան, ներողութիւն խնդրելով և խոնարհութիւն ընելով դընա։

Գ.

Խօսելու ատեն ի՞նչ զգուշութիւն ընելու է։

Խօսքին տեղը չեղած մի խօսիր. մինչեւ քեզի բան մը չի հարցունեն մի խօսիր։ Կուրի առջեւ կուրի խօսք, կաղի առջեւ կաղի խօսք մի ըներ։

Եթէ ուրիշ մը կը խօսի,

գուն անոր խօսքը մի՛ կըտրեր, ըսպասէ որ ան իր ըսելիքը վերջացընէ։ Տըրտմութեան խօսք ընողին առջեւ մի՛ խընդար։

Մէկը գիտցած պատմութիւնը ընելու ըլլայ, անոր բերնէն առնելով գուն մի՛ պատմեր. և գիտնալը ալ շուտ մը մի՛ յայտներ։

Խօսելու ատենը այնչափ մի՛ մօտենար մըտիկ ընողին, որ բերնիդ թուքերը ցաթիկելով անոր երեսը կամ հագուստը թըրջեն։ Որու հետ որ կը խօսիս. անոր երեսը նայէ։

Քեզի մըտիկ ընողին կոճակէն կամ ձեռքէն մի՛ բըռներ որ քեզի մըտիկ ընել տաս. մի՛ մըշտեր և մի՛ ծըրեր անիկայ, ըսածս շիտակ չէ՞ մի՛ հէ՛, ըսելով։

Երկու հոգի ցած ձայնով խօսելու ատեններն, անոնց քովն է հեռացիր, պատճառ մը բերուն ելով։

Քեզմէ վեր մարդու հետ շատ պարկեշտութեամբ խօսէ, քեզմէ ներքին խօսքին մի՛ խառնիլիր. որչափ որ կարելի է դուն քու վերայովդ քիչ խօսէ։

Ուրիշը խրնդացնելու կամ դուն քեզ խելացի ցուցնելու համար մարդ մի՛ ծաղրեր. թէ որ խրնդալու բան մը պատահեա. առաջ դուն մի՛ խրնդար։

Միշտ ըզգուշութեամբ խօսէ. շատ ատեն մարդ խօսելուն կը զղջայ, բայց լուռ կենալուն բնաւ չի զղջար. խօսելու համար թէ որ մէկը քովդ գալու ըլլայ, ոտքի վերայ է։

խօսելու համար պէտք է ա-
ղէկ ձայն՝ ոչ շատ բարակ և ոչ
շատ հաստ, այլ անուշ և յըս-
տակ. ձեռքի և մարմնոյն շարժ-
ումները բարեխառնն և շը-
նորհքով. երեսը հանդարտ և
աչքի շարժումը համեստ, և
խօսքը կարճ։

Դ.

ԺՈՒՐԳԱԼՈՒ ԽՈՍԱԼՈՒ ԱՊԷՆ Ի՞ՆՉՊԷՍ
ՎԱՐՈՒԵԼՈՒ Է։

Երբ բազմութեան մը մէջ
կը գըտնըվիս՝ առաջ անցնիմ
ըսելով առջեւըդ գըտնըվող
մարդիկը մի՛ հրրեր։

Ճամբան ետիդ մի՛ դառնար
ուրիշին վրայ նայիր. ան մար-
դուն անանկ կուգայ որ ըրա-

ծին պակասութիւն մը պիտի գլտնէ։

Քեզմէ վեր մարդու հետթէ որ ժուռ գալու ըլլաս, նայէ որ վար սեպուած տեղէն քալես. տան կամ պատի քովէն անցնելու ժամանակդ, վեր տեղը տանը կամ պատին մօտն է։

Երբեք հոգի մէկտեղ ճամբայ գացողներուն, պատուաւոր տեղը երկուքին մէջ տեղն է, ետքը մէջ տեղէն գացողին աջ կողմն է։

Ժուռ եկած ատենդ ընկերդ մի՛ ձրգեր ու առաջ երթար. ճամբու գլլուխ քովի մարդէդ առաջ մի՛ երթար. դառնալու ատենդ կրոնակցդ անոր մի՛ դարձներ, երեսդ դարձուր։

Խաղալու ատենդ՝ ոտք մի՛ կոխեր որ ընկերներդ քու ուզած խաղդ խաղան։

Զբաղայ որ խուսմարի վերաբերեալ խաղեր խաղաս. խաղը փարա վաստակելու համար չէ, հապա կարդալէդ կամ աշխատութենէդ հոգնութիւն առնելու համար հընարուած է։

Խաղացած ատենդ յաղթելու համար ինքզինքդ շատ մի՛ հոգնեցներ. յաղթես ալ՝ յաղթվիս ալ՝ մի՛ ինքզինքդ փոխեր։

Խաղի մէջ թէ որ յաջող ելաս՝ մեծ մի՛ խօսիր ուրիշները ծաղրը ընելու պէս։

Խաղացած ատենդ մէկը քեզի որ ցաւցուներ՝ մի՛ բարկանալով գանգատ ըներ, որ ցաւ-

ցուՆողը քեզի՝ չընորհապարտ մընայ, և ընկերներդ քեզ աւելի սիրեն։

Ե.

Տան մէջ ո՞ր բանն ընելը վայելէ, ու ո՞ր բանը անվայել։

Ջանա որ անուշ լեզու, խընամուտ երես ու համբերող ըլլաս. և ուրախութիւն բերես անոնց՝ որ քեզի հետ տեսութիւն ընել կ'ուզեն։

Սենեակի մը դուռը թէ որ դոց գըտնես, կամացուկ մը զարկ դուռը. մինչեւ որ ներսէն ձայն չի հանեն՝ մի՛ բանար դուռը։

Սենեակէն ներս մըտնելուդ՝ դուռը գոցէ, որպէս զի ուրիշին հարկ չըլլայ գոցելու։

Դուռը ամուր մի գոցեր, մա-
նաւանդ երբ սենեակին մէջ
քեզմէ վեր մարդ ըլլայ։

Տեղ մը որ մրտնես՝ առաջ
բարեւ տուր, ետքը այն տե-
ղի մարդիկը թէ որ նըստեր են՝
դուն ալ նըստէ, թէ որ կայներ
են՝ դուն ալ կայնէ։

Քեզմէ մեծ մարդուն բա-
րեւ տըված ատենըդ ընտանե-
բար (թէքլիֆսիզմէ) անոր ձեռ-
քը մի բըռներ. չի վայլած ա-
տենը խրատու վըրայ թէմէլ
լահներ մի ըներ։

Քեզմէ մեծ մարդ մը քովէդ
անցնելու ըլլայ, անոր ճամբայ
տալու համար քիչ մը ետեւօք
քաշվէ. դուռնէ ներս մրտնե-
լու ատենըդ՝ կայնէ որ առաջ
ան մրտնէ. սանդուխի վըրայ թէ

որ գլտնըվիս՝ կայնէ որ առաջ
ան ելնէ կամ իջնէ։

Ընկերակցութեան մէջ մարդ
ու առջեւէ անցնելու որ ըլ-
լաս, առաջ անոր դարձիր, գլուխ
խով խոնարհութիւն ըրէ, ետ-
քը անցիր։

Բան մը որ տաս կամ առնես,
ձեռնոցներդ (էլտիվէններդ)
հանէս, անանկ տաս առնես. մե-
ծի մը առջեւէն ձեռքդ երկրն
ցընելով բան մի՛ առներ տար։

Քեզմէ գաղտուկ եղած բա-
նը հասկընալու մի՛ պըտըտիր.
նամակին հասցէին, գրած նա-
մակին, բաց ձրգած գիրքին
կամ թղթին վրայ հետա-
քրքրութեամբ մի՛ նայիր որ
հասկընաս, տըմարդութիւն է։

Մէկը տունը կամ սենեակը

չեղած տեղը, այն տունը կամ այն սենեակին մէջը ոչ տօլապ բաց, ոչ ալ ուրիշ գոց բաներ. քաղաքավար տղան գիրք մը անգամ պիտի չը բանայ տիրոջմէն հրրման չառած. բարեկամին տանը պարտէզէն ծաղիկ կամ պըտուղ պիտի չի բըրցունէ՝ բարեկամէն հրրաման չառած։

Զ.

Զգո՛ւշանալէ գեղ սովորութիւնները։

Խօսող մարդու մը քով երբժտրկալ, աչքերը շրփել, ժամացոյցը նայիլ, ժամը քանի՞ ըլլալը հարցընել, ընկողմանիլ (եան դալ), մրրափել. ասոնք

.բաղաքավարութիւն չէն։

Խօսքի մէջ մրտնել, խօսքը չի լսմինցած ձրգել երթալ, կրնակը խօսողին դարձընել, ուրիշի հետ խօսիլ. ասոնք ձանձրանալ կը ցուցընեն, եւ խօսողը մարդու տեղ դրուած չես ըլլար։

Կարօտ մարդու մը ըստակ տալէդ ետքը՝ թէ որ ապիս անդին անոր անունը տաս և պարծենաս, անվայել բան է։

Ընկերութեան մը մէջ կամ ճամբան երթալու ատեն՝ հին ըզգեստ հագնողներէն հեռու կենաս, ու վայելուչ հագվող մարդոց մօտենաս, կոպտութիւն է։

Հարուստ մարդու հետ շատ մտերմութիւն չունենաս. և

յանկարծ երնեա՛ առաջուց չի-
մացուցած անոր տունը կերա-
կուրի երթաս , անշընորհ.ք
բան է ։

Մէկը չի մրտածելով բանի
մրվերայ անյարմար կամ սրինալ
խօսք մը խօսի , կոպիտ մարդը
խընդալէն բերանը բաց կը ձը-
գէ՝ կը կենայ կը կենայ նորէն
կը խընդայ . բայց .քաղաքավար
մարդը խընդալը կը զըսպէ ,
հազիւ .քիչ մը կը ժըպտի ։

Զափազանց և երկար և յա-
ճախ խընդալ , և խընդացած
ատենը բարձրը ձայն հանել
և երեսը հլուսրուկել , խենդու-
թեան գրլխաւոր նշան մի է ։

Ուսերուն (օմուզներուն)
մէջ տեղը թաղված գրլուխը
ծուլութիւն կը ցուցընէ . մէկ

կողմը ծռուածը՝ կեղծաւորու-
թիւն. հարկ չեղած ատենը
շարժող գլխուխը խելքի թե-
թեւութեան նշան է. գլխու-
խը շատ բարձը բռնելը հը-
պարտութեան նշան։

Կան անանկ մարդիկ որ ընկե-
րութեամբ տեղ մը երթան, ա-
ղէկ սենեակը և հանգիստ ան-
կողնին իրենք կը բռնեն. իրենց
խօսքը քաղցրնել կ'ուզեն, ի-
րենց ըսածել կուտան, կ'ու-
զեն որ ամէն մարդ իրենց հետե-
ւի. ասոնք կոպտութիւն են։

Կըրակին շատ մօտենալ, պէտք
չեղած ատեն կըրակը խառնել,
վառարանին բոլորտիքը՝ բռ-
նել և գըրսէն եկող ու մըտողին
տեղ չի տալ որ տաքնայ, շատ
անվայելուչ ամօթ բան է։ Ոչն-

պէս անվայել բան է. ամենէն
եաքը ներս մտանողին վերայ
աչք տընկել, և ոտքէն մինչեւ
գլուխը չափել։

Է.

Գանելիք բերող բանիրը որո՞նք են։

Մարդու առջեւ մի քերվը-
տիր, գլխուդ մաղերը մի շը-
կեր, մատերովդ քիթդ կամ
ականջդ մի խառներ, քիթդ
սրբելդ եաքը թաշկինակիդ
վերայ մի նայիր. ուժով մի
խընչեր փողն պէս, քիթդ վեր
մի քաշեր։

Սրբակի մէջ կամ պատու-
հանէն վար առանց նայելու՝ և
կամ մարդու առջեւ մի թքք-
ներ. երեսիդ, ձեռքիդ կամ

հագուստիդ վերայի աղտը թուքովդ մի հաներ։

Եղունդներդ (թլունախներ-դդ) մի կրծեր, մարդու առջեւ եղունդ մի կտրեր, մարդու առջեւ ակռաներդդ մի խառներ, ոտք ձեռք մի լուար, ուվերադ գլուխդ մի չքսեր։

Ձեռքդ կամ թաշկինակդ երեսիդ բռնէ և անանկ բռնգտա, որ թուքերդ նստողներուն վերայ կամ քու վերադ չի ցատկեցունես. ուժով մի բռնգտար։

Ձեռքերդ աղտոտ մի պահեր. մարդու երեսի կամ ըզդեստին մի դպցուներ. ինչ որ ձեռքդ ունիս, գերիչ թուղթ ձեռնոց, ծաղիկ բերանդ մի տանիր։

Ոտքիդ ամանը հանելով, ոտ-
քըդ կըրակին երկընցընելով մի՛
տաքցըներ, աղտոտ քրտին-
քոտ թաշկինակըդ կըրակին
դէմ բըռնելով մի՛ չորցըներ։

Գիշ հոտ ունեցող բան մը
ընկերիդ հոտվըտալու մի՛ տար.
գտնելու բան մը որ տեսնես՝
մարդու մի՛ ցուցըներ, և նայէ
որ մարդ ալ չի տեսնայ։

Մէկուն բան մը խօսելու ըլ-
լաս՝ շունչդ անոր մի՛ հասցը-
ներ, կարելի է որ անախորժ
հոտ ունենայ, քիչ մը հեռու
կենալով խօսէ. գաղտնի բան
մը ըսելու ըլլաս, շունչդ երե-
սին մի՛ տար՝ հապա ականջին։

Բերանդ թուղթ կամ ու-
րիշ բան առնելով մի՛ ծամեր,
ու անգործ չըթունքնե-

րու դ վերայ բերելով մի՛ կըլլա բեր ու սադիս անդին նետեր։

Ակուայ կըճըռցընել, երկաթ երկաթի քլսել, ապակի քերել, երկու քար իրարու զարնել, նլատած ամիռը անդադար շարժել, ոտքերը գետնին զարնել, քըմի տակէ բան երգել սուլել (ըսլըգ չալել), գանելիք բան մի պատմել. ասոնք անքաղաքավարութիւն են։

Ը.

Կերակուրի ժամանակ ի՞նչպէս շարժիլը է։

1.

Ամէն հրաւիրուած տեղը գացող մարդուն՝ պատառաբոյծ (տալ.քաւլուք) կ՚ըսեն. բըն նաւ մէկուն հրաւէրին ալ

չընդունողին տրմարդի կ'ըսեն։

Մէկուն հրաւէրը որ ընդունիս, պէտք է որ գացած տանը սովորութեանը յարմարիս, որպէս թէ քու տունդ է։

Տանը գործերուն խառնըվելու չէ. թէ որ քու արժանաւորութեանդ համեմատ քեզ չի պատուեն՝ նեղութիւն մի՛ցուցներ. աւելի սրբտին նայէ քան թէ գործքին։

Սեղանին գլխաւոր և երեւելի տեղը մի՛ նըստիր. համբերէ որ միւս սեղանակիցները տեսնես ինչպէս որ պիտի նըստին՝ դուն ալ անանկ նըստիս։

Ուրիշներէն առաջ անձեռոցքըդ (բեշկիրդ) բանալու մի՛ արտորար, այլ ըսպասէ որ տանը տէրը կամ՝ հոն գըտնըվող

յարդի մէկը բանայ, անկէ եաթ
.քը դուն բաց։

Կերակուրէն առաջ Հայր մե-
բէդ ըսէ, ելնելու ատենէդ ալ
աղօթքէդ ըսէ և փառք տուր
Աստուծոյ և անանկ սեղանէն
էլ. բայց աղօթքէդ ցած ձայ-
նով կատարէ։

Սեղանէն ոչ շատ հեռու և
ոչ անոր շատ մօտ նստէ. շի-
տակ կեցիր ամթոռիդ վրայ.
արմուկէդ (տիրսէկէդ) սեղա-
նին վրայ մի դներ. միայն դաս-
տակէդ (պիլէկէդ) կրնաս դը-
նել։

Կերակուրի բաժինէդ .քեզի
տրված ատենին չափազանց մի
խեղդեփնար. աջ ու ձախ կող-
միդ դառնալով հրամէ մի ը-
սեր, և ըսպասաւորը իր դոր-

ծէն մի՛ խավաներ։

Քեզի տըրուած կերակուրը առ՝ երեսըդ չի թըթվեցընելով. առջեւիդ ըսկաւառակին (բիաթային) մէջ դիր. առածիդ պէս ուտելու մի՛ ըսկըսիր, ուրիշներուն ըրածին հետեւէ։

Ցանը տէրը քեզի կերակուր կամ խըմելիք մը որ տայ, չըլլայ որ ձեռքէն առնես և ուրիշին տաս. անով ըսել ուզած կ'ըլլաս թէ՝ ինծի տալ չի վայլեր, պատուելու մարդը ես քեզմէ աղէկ կը ճանչեմ։

2.

Ախորժած կամ չ'ախորժած կերակուրըդ մի՛ խմացըներ. չախորժած կերակուրէդ քեզի տալու որ ըլլան, դիր ըսկա-

ւառակիդ մէջ թող կենայ, մինչ
չեւ որ ուրիշ կերակուր մը
բերեն։

Կերակուրը աղէկ եփեր է
կամ չէ եփեր, համով է կամ
անհամ, պակսութիւն մ'ունի
կամ չունի, քեզի չի վայլեր որ
ըսես. թէ որ քեզի հարցնեն,
նայէ որ կըրցածիդ չափ գովես։

Ուրիշ տեղ եղած հացկե-
րոյթ (զիաֆէթ) մը գովելը՝
դըտնըված հացկերոյթիդ տի-
րոջը կը դըպչի, եւ անվայել
բան է։

Աղէկ պատառներ մի՛ ընտ-
բեր, եւ մանաւանդ հեռուն
կեցած ամանին ձեռք մի՛ եր-
կընցըներ։

Կերակուրի ժամանակ որչափ
որ կըրնաս, դուն քեզ զըսպէ

հազալէն, թըքնելէն, քիթըդ խընչելէն. սեղանի վըրայ քըթախոտ քաշել ամենեւին չի վայլեր։

Կերակուրին վըրայ գըլուխըդ մի՛ կախեր, միայն ջըրոտ կերակուր մը թէ որ ուտելու ըլլա՝ բերանըդ տանելու ատեն գըլուխըդ քիչ մը առաջ տար։

Տանը տէրը անհանգիստ կ'ըլլայ երբ քու ծանրը վարմունքըդ և անախորժ կերպով կերակուր ուտելըդ տեսնէ. ասնանկ կը կարծէ որ կամ կերակուրընելին չես ախորժիր, կամ քու սովորականէդ հեռանալով անհանգիստ եղար։

Ամէն տեսակ կերակուրի ձեռք երկրնդունել, կերակուր

ուտելէն քիչ մը ետ չի մընալու համար՝ խօսված խօսքին ականջ չի դնել, աչքը դուռը տընկել թէ ըսպասաւորները ուրիշ կերակուր մ՚ալ կը բերե՞ն մի. անքաղաքավարութիւն են։

Ոչ բան չուտողի մը պէս ամէն կերակուրէ ետ քաշվէ, եւ ոչ ալ շատակեր մարդու պէս ամէն կերակուրի մէջ դունչը խօթէ. այս երկու ծայրէն ալ ըզգուշացիր։

Քաղաքավարութիւնը կը պահանջէ որ սեղանի վրայ ուրախ ըլլաս, տըրտմութիւն բերող խօսքեր չընես, տանը տիրոջ ազնըւութեանը և մարդասիրութեանը շընորհակալ ըլլաս. և անոր խօսքին կամ շարժ-

մուն.քին մէջ.քիչ մը պակասու.
թիւն ալ տեսնես, երեսին
չի տաս։

Թ.

Կերակուր կերած ապէս ի՞նչ գործողութիւն
դեր ընելու է։

1.

Հացը խածնելով մի փրցը
ներ. սեղանին սրփուռցին վը.
րայ ալ մի կըտրեր. ամէն անդ
ամ պէտք եղածին չափ ձեռ.
.քով կամ դանակով փրցուր։

Դանակը միշտ ձեռքդ մի
բըռներ. բան մը կըտրելէդ
ետքը սեղանին սրփուռցին վը.
րայ դիր. ուրիշ անգամ որ նո.
րէն պէտք ըլլայ ձեռքդ առ։

Աղը դանակին ծայրովը առ. հաց կամ միս և որ և իցէ բան աղամանին մէջ մի՛ թաթխեր։ Դանակի ծայրով կամ պատառաքաղով (չաթալով) ակռաներդ մի՛ խառներ. դանակով ալ բերանդ պատառ մի՛ դներ։

Քեզի մէկը կերակուր տալու որ ըլլայ՝ ըսկաւառակդ անոր ներկայացուր և խոնարհութեամբ առ. իսկ թէ որ ըսկաւառակով քեզի կերակուր տայ, մէկ ձեռքովդ առ, և միւս ձեռքովդ քու ըսկաւառակդ տուր։

Հաւկիթ, պըտուղ կամ ուրիշ ինչ չոր բան որ տըրսի քեզի, ձեռքովդ առ. խընձորը տանձը և ուրիշ այս տեսակ

պլտուղները մի խածներ, դա-
նակով կլտրէ. և կերած ա-
տենդ ալ դանակը ձեռքէդ
վար դիր։

Կերած բանիդ փուշերը, ոս-
կորները, և ինչ որ չուտուիր
կամ ուտել թէ որ չես ուզեր,
ըսկաւառակիդ մէջ մէկ քովը
դիր։

Կերած պտուղիդ կուտերը
մատիդ ծայրովը բերնէդ առ.
չըլլայ որ ձեռքիդ կամ ըսկա-
ւառակիդ մէջը թը.քնելու
պէս բերնէդ հանես։

Թանը (չորպան) շատ տաք
որ ըլլայ, բերանովդ մի փը-
չեր, դըգալովդ կամաց կամաց
խառնէ որ պաղի. ուրիշ կերա-
կուրները ալ պաղեցընելու
համար մի փըչեր։

Զըլլայ որ ըսկաւառակը բե-
ռանըդ առնես և մէջի մըսի ջու-
ը խըմես, հապա դըգալովըդ
խըմէ. դըգալիդ չեկած բանը
ըսկաւառակիդ մէջը ձըգէ.
ըսկաւառակըդ ալ հացով մի՛
սըրբեր։

Քու առջեւէդ կերակուր
վերցընելով՝ հասարակաց ըս-
կաւառակին մէջ մի՛ դըներ։
Մէկ բանի մը համը նայիլ և
ետքը ուրիշի մը տալ չի վայլեր։

2.

Ոչ շատ արտորնօք կեր, և
ոչ շատ ծանրը. մէկ պատա-
ռըդ վար չի գացած մէկալը
բերանըդ մի՛ դըներ. նայէ որ
շըրթունքներուդ, ծամելիքնե-
րուդ ձայնը չելլէ. բերանըդ

լեցուն եղած առենը մի խօսիր։

Քեզի տրրուած կերակուրը մի հոտլուար. առ կլտորը չեմ ուզեր, նա կլտորը կ՚ուզեմ մի ըսեր. երբ որ կլտորը ուզելդ հարցնեն և ըսի՝ պեն, ուզած կլտորդ ան առեն առ։

Մատլնեերդ, պատառաքաղդ, դանակդ լզելը մարդուսիրտ դանեցրնելիք բաներ են. ըսկաւառակիդ մէջ եղած բաներն վերայ մաղ կամ ուրիշ դանելիք բան որ տեսնես, ըզգուշութեամբ առ և ըսկաւառակիդ մէկ քովը դիր։

Բերանդ բան մը առնես և նայիս որ քեզի գէշ կ՚ընէ, ուսիտի չի կրնաս ուտել, անձեռոցովդ բերանդ ծած-

կէ և հանէ ու ըսկաւառակիդ մէջ դիր. թէ որ չէս կրընար, պատճառով մը դուրս ել և այնպէս բերնէդ հանէ, որ մարդ չի տեսնէ։

Սեղանի վրայ ըսպասաւորու թիւն ըրած ատենդ թէ որ մէկը քեզմէ հաց ուզէ, ձեռքով մի՛ տար, ըսկաւառակի մէջ դիր անանկ տուր։ Դանակ, պատառաքաղ, դըգալ մէկուն որ տաս, կոթը անոր դարձուր։

Մէկը թէ որ քեզմէ ջուր ուզէ, բաժակը (խատէխը) ըսկաւառակի մէջ դիր անանկ տուր. ուզող մարդը բաժակը ձեռքը առնելուն պէս՝ ըսկաւառակը մէկդի առ։

Թան կերած ատենդ խըմելիք մի՛ ուզեր, բերանդ լե-

ցուն եղած ատենը բան մի խըմեր։ խըմելիք բանիդ վերայ շատ բարակ բարակ մի նայիր։

Խըմելէդ առաջ անձեռոցը վըդ շըրթունքըդ ու մատերըդ սրբէ։ մի մէյմը խըմեր մէյմը կայնիր։ բաժակը ձեռքըդ մի խօսիր։ խըմելէդ ետքը մի հեվար, ու նորէն բերանըդ սրբէ։

Խըմած ատենըդ աչքըդ ապդիս անդին մի ըներ։ կոկորդէդ անճառնի ձայներ մի հաներ։ այնչափ արտորնօք մի խըմեր որ շըրթունքիդ երկուքը վէն խըմածըդ կուրծքիդ վերայ վազէ։

Կըշտանալուդ պէս սեղանէն մի ելներ, ըսպասէ որ ամենուն հետ ելնես, սեղանին վը-

բայէն պըտուղ կամ շաքարե-
ղէն ձեռքըդ առած չենեա։

Ժ.

Ծընողաց, վարժապետի, կրգաւորներու և
ոեծերու ի՞նչ յարգանք պըտը է։

Նախ զԱստուած սիրէ, պաշ-
տէ, եւ հոգւով ու մարմնով
անոր ծառայէ, որ քեզ ըստեղ-
ծեր է և կը խնամէ։

Աստուծմէ ետքը սիրէ ու
յարգէ քու ծընողքըդ, հայ-
ըրդ ու մայրըդ, որոնք քեզ ծը-
ներ են և կը սընուցանեն. և
բարի կըրթութիւնով կը պա-
հեն և կը մեծցընեն։

Հայրըդ ու մայրըդ քեզի
ինչ հրաման որ ընեն, շուտ
մը կատարէ, չըլլայ որ անոնց

սիրտը վիրաւորեաս. անոնց կա-
ղօտութեանը ու ծերութեա-
նը դուն պիտի օգնեաս։

Հօրդ ու մօրդ խրատին
ականջ դիր. անոնց վերայ պա-
կասութիւն մի՛ գըտներ. միշտ
հընազանդ ու պարկեշտ ըն-
թացք մը ունեցիր, և ջանա որ
անոնց օրհնութիւնը վայելեա
միշտ։

Ծնողներէդ ետքը սիրէ ու
յարգէ քու վարժապետդ,
որ քու բարի ըլլալուդ պատ-
ճառ է, և քու կըրթութեա-
նըդ և զարգացմանըդ հոգ ունի։

Վարժապետիդ երախտիքը
մի՛ մոռնար. անոր աշխատու-
թիւնը քիչ բանով չեաս կըրնար
փոխարինել, քեզի ինչ պատ-
ուէր և դաս որ տայ, ուշադ-

բուԹեամբ սորվէ. և քու ա-
ղէկ օրէդ զանի մի՛ մոռնար։

Կարգաւորները պատուէ.
անոնք Աստուծոյ փրբկարար օ-
րէնքները ու պատուէրները,
Քրիստոսի կենարար վարդա-
պետուԹիւնները եւ սուրբ
Առաքելոց և Եկեղեցւոյ քա-
ղաղուԹիւնները քեզի կը սոր-
վեցընեն։

Տարիքով քեզմէ մեծը, ծե-
րերը և երեւելի անձերը պէտք
է որ յարգես. անոնց քով
պարկեշտուԹեամբ եւ ակնա-
ծուԹեամբ շարժիս. ԹէՀ որ ա-
նոնցմէ մէկը եղած տեղէդ դայ,
ոտքի վերայ ելնես, և մինչեւ
հրաման չի տայ՝ չի նստիս։

Զրլայ որ ծերերը ծաղրես,
անոնց պակասուԹիւններուն

վերայ խընդաս . միտքդ բեր որ դուն ալ օր մը անոնց պէս պիտի ըլլաս . ծերերը աշխարհիս շատ բանին փորձառու ըլլալով՝ անոնց խրատին մըտիկ ըրէ և կատարէ ։

Քու վերադ երախտիք ունեցողները , ո՛վ կ՚ըլայ Թող ըլլայ , Հայր , մայր , վարժապետ , կարգաւոր , ծեր , պատուաւոր անձ , պարտական ես սիրելու և յարգելու . քեզի աղէկութիւն ընողին երախտիքը ամենեւին չի մոռնաս ։

ԺԱ .

Եղբօր , քարեկամի , դրացւոյ և դասընկերի հետ ի՞նչպէս կենցաղավարելը է ։

Եղբայրդ և քոյրդ սիրէ , ու օգնէ անոնց , ինչու որ մէկ

հօր և մէկ մօր զաւակէք, աստ-
ուածային և բընական օրէնքը
սանկ կը պահանջէ։

Եղբօրդ պակասութեանց
ներէ, ոխակալութիւն, նա-
խանձ ու ատելութիւն մի՛ ու-
նենար անոր հետ. հոգ տար
որ անկէ հոգւով ու մարմնով
չի բաժնըվիս, և ի միասին բը-
նակիք։

Մինչեւ մէկը չի փորձես,
քեզի բարեկամ չընտրես. բա-
րեկամ ըլլալիք անձը պէտք է
որ ըլլայ խոհեմ և փորձառու.
հեզ, քաղցրը, բարեսիրտ, ա-
ռաքինի, հաւատարիմ և ան-
կեղծ։

Բարեկամիդ հետ ուրիշ
բան չես, բայց եթէ երկու
մարմնոյ մէջ մէկ հոգի, ուրա-

խուԹեանը ուրախակից և ցաւոցը ցաւակից պիտի ըլլաս. ուստի ան որ քեզի բարեկամ ընտրած ես, պէտք է որ զանի սիրես բոլոր սրտովդ։

Մեր մերձաւորը պէտք է որ սիրենք. մարդ մը իր նմաններուն ունեցած պարտքը կատարելու է, բարեկամ ալ ըլլան Թըշնամի ալ։ Ուրիշին պակասուԹեանը նեղէ, ինչու որ շատ ատեն ալ դուն ուրիշին նեղելուն կարօտ կ'ըլլաս։

Գինովցած մարդուն վրայ մի խընդար, այլ ցաւէ. բընական պակասուԹիւն ունեցող անձերուն վրայ մի ծիծաղիր, կաղ (Թօփալ), սապատող (խամպուռ), կոյր, միականի (մէկ աչքը կոյր) մարդիկը մի ծաղրեր։

Վարժարանի մէջ դասընկե-
րով եւ ուրիշ ընկերներուդ
հետ անուշութեամբ և քա-
ղաքավարութեամբ վարվէ։
միշտ քաղցրաբարոյ եղիր, եւ
կըուլուէ փախիր։

Վարժարանի մէջ կամ ան-
կէ դուրս քու ընկերովդ նե-
ղութիւն մի՛ տար, անհանդիստ
մի՛ ըներ զանոնք։ թէ որ մէ-
կուն զարնես կամ պըզտիկ չա-
րութիւն մը ընես, անըզդամ
ըլլալով կը յայտնես։

Ընկերովդ՝ ձեռքէդ եկած բա-
րերարութիւնը ըրէ։ քեզի
բան մը հարցընեն, կամ թէ որ
սխալ մը ունին, պատասխան
տուր կամ շտկէ։

Ուրիշին համար նեղողամիտ
եղիր, բայց ոչ քեզի համար։

ջըլլայ որ ընկերիդ աչքին շիւ-
ղը տեսած ատենդ .քու աչքիդ
գերանը (տիրեկը) մոռնաս։

ԺԲ.

Բարոյական խրատներ։

Հոգ տար որ խոնարհ ըլլաս. ջըլլայ որ .քու գիտութեանդդ խոհեմութեանդդ, յաջողութեանդդ եւ այլ ունեցածիդ վրայ պարծենաս. իմաստուն եւ փորձառու մարդոց խորհուրդ հարցուր. հպարտ մարդու պէս ինքզինքդդ խելացի մի՛ կարծեր։

Աշխարհիս փորձութիւններուն համբերէ. .քեզի վիշտ կամ ցաւ տրվողին փոխարէն ներող եղիր. նեղաբրտութիւ-

նը շատ անգամ դէշ վըտանգ-
ներու կը տանի մարդը. համ-
բերութեամբ շատ ծանրը ու
դըժուարին գործեր կը կա-
տարվին։

Հընազանդ եղիր ծընողա-
ցըդ, վարժապետիդ, մեծիդ,
և անոնց պատուէրը ու խրատ-
ը պահէ։ Հընազանդ եղիր
աստուածային ու մարդկային
օրինաց, յարգէ ու մեծարէ
զանոնք։

Խաղաղութիւնը սիրէ. ամէ-
նուն հետ սիրով վարվէ. պա-
տապ տեղը վէճ ու կռիւ հա-
նելէ ըզգոյշ եղիր. ջըլլայ որ
բանսարկութիւն ընես, խօսք
խառնես, մէկուն խօսքը ու-
րիշին երթաս իմացընես։

Պարկեշտ եղիր. ամէն վար-

մունքդ չափաւորութեամբ եւ վայելչութեամբ կատարէ. ամէն մոլութենէ հեռի կեցիր. հոգ տար որ բարի անուանդ չի կորսընցընես։

Քու խօսքդ ճշմարիտ ըլլայ. ճշմարտախօս մարդուն ըսածին ամէն մարդ կը հաւատայ, և չի կասկածիր. սիրտդ ի՛նչ որ է, բերանդ ալ նոյնը թող խօսի։

Քու ընկերոջդ աղէկութիւնը տեսնելով, հոգ տար որ դուն ալ անոր պէս ըլլաս. ուրիշին ունեցածը քեզի օրինակ բռնէ, և բարի նախանձաւորութիւնով այն բանը ունենալու դուն ալ ջանա։

Ուրիշին ունեցածին վրայ մի՛ նախանձիր. ընկերիդ աղէ-

կուլթիւնը չի.քաշելով մը՝ վար մի՛ զարներ, մի՛ բամբասեր. նա խանձոտ մարդը ինքզինքը կը տանջէ և անհանգիստ կ՚ընէ։

Ազգէդ սիրէ. ընկերիդ ազգ կուլթիւն ընել.քու պարտքդ է. ընկերուլթեան մէջ.քեզի ամենէն մօտը.քու Ազգէդ է, զայն միշտ սիրելու պարտական ես. ազգիդ օգուտը ու շահը.քու անձնական օգուտդ ու շահդ վեր բռնէ. Ճըշմարիտ ազգասիրին պարտքը այս է։

Հայրենիքդ սիրէ, այն երկիրը ուր.քու հայրերդ եւ նախահայրերդ բնակեր են, և անոնց ոսկորները կը հանգչին, այն երկիրը.քու նըվիրական տեղդ է. Հայաստան իր ամէն թըշուառուլթիւններովը

դարձեալ .քու սիրելի տեղը
պիտի ըլլայ, և անոր բարօրու-
թեանը եւ պայծառութեանը
հոգ տանիլ եւ աշխատիլ .քու
պարտքը է, .քանի որ Հայ ես։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

Մէկը որ իր անձին տէրը չէ, չի կրնար ուրիշներուն տէր ըլլալ։

Ուրիշին բարերարութիւն ընելը՝ իր անձին աղէկութիւն ընել է։

Մի՛ ասեր երբէք թէ այս յանցանքը թեթեւ է, կրնամ զայն աներկիւղ գործել։

Առուած որ կարող է սանձել պլուրները կատաղութիւնը, կրնայ նաեւ չարերը եւ կեցընել իրենց գազանի միտքերուն։

Եթէ մէկը թեթեւամտութեամբ քեզի կը խօսի, ուշադրութիւն մի՛ ը-

ներ. եթէ յիմարութեամբ կը խօսի, ցաւէ՛ անոր վրայ. եթէ ըղբեզ նախատելու մտօք կը խօսի, նե՛ր անոր։

Բարի մեռնիլ սորվելու փափագինք, բարի ապրիլն ալ սորվինք։

Առաքինութիւնը՝ գերութեան մէջ ալ միշտ առաքինութիւն է։

Մի՛ ըներ ուրիշներուն, ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն։

Երջանիկ են անոնք, որ կարդալ կը սիրեն։

Ժամանակը կ՚անցնի կ՚ըսեինք, բայց կը խաբվինք. ժամանակը կեցած է, մենք ենք որ կ՚անցնինք։

Ան որ հարստութիւն ունեցած ժամանակը զայն գործածել չի գիտեր, պէտք չէ ցաւի երբ ձեռքէն երթայ։

Սիրենք ըզմարդիկ և մեր ձեռքէն եկած օգնութիւնը ընենք անոնց։

Մեր ցաւերը նվազցուցած կ՚ըլլանք, եթէ զանոնք մեր բարեկամաց հաղորդենք։

Ծընողք որչափ աւելի խընամք տանին իրենց զաւակաց, այնչափ աւելի երախտիք ունեցած կ՚ըլլան. և զաւակներն ալ այնչափ աւելի սէր և երախտա-

գիտութիւն ցուցնելու պարտական։

Աւագի վերայ նշանակենք մեր բրած ծառայութիւնները, և պղտնձի վերայ նշանակեմք մեր ընդունած ծառայութիւնները։

Քու յանցանքդդ ուրիշին վերայ մի՛ ձգեր, վատութիւն է։

Երջանկութիւնը երերման մէջ կ'ելլայ, եթէ հարստութեան վերայ հիմնված ելլայ։

Երջանկութիւնը կրկինապատկած կ'ելլանք, եթէ բարեկամ մ'ալ աւելի բաժանորդ ընենք։

Եթէ ուրիշները խաբել խորհինք, ան առեն մենք աւելի խաբուած կ'ելլանք։

Ան որ իր անձին տէրը չէ, մեծ չի կրնար։

Մարդոյմէ ծածկուած գործերը Աստուծմէ չեն ծածկվիր։

Օրհնեա՛լ ելլան անոնք որ թշնամանները եղբայրաբար կ'օգնեն։

Ինքնասիրութիւնը ընկերութեան կապերը կը քակէ։

Ան մարդը որ օրէնքները չի պահեր, արժանի է պատժոյ։

Ինչ որ օրէնքները կ'արգելուն՝ մարդ-
կային պատիւն ալ կ'արգելու։

Ծրնանիլ, ցաւ կրել, և մեռնիլ են
ահա մարդուն ճակատագիրները։

Աղէկ մարդը իր ընկերին ցաւոցը ցա-
ւակից կ'ըլլայ։

Չար մարդը ուրիշին դժբաղդութեան-
նը վրայ կը ծիծաղի։

Քու երջանկութեանդ համար պէտք
է խոհեմութեամբ վարուիս և քու պարտ-
քերդ կատարես։

Համբերութիւնը և ժամանակը ամէն
բան իր վախճանին կը հասցընեն։

Հընազանդ եղիր, եթէ կ'ուզես որ
ուրիշն ալ քեզի հընազանդի։

Ցոյսը դժբաղդներուն ծոցին ալ կը
ծրնանի։

Պէտք է այնպէս վարուինք մեր նրման-
ներուն հետ, ինչպէս կ'ուզենք որ անոնք
մեզի հետ վարուին։

Վարժապետը կը սիրէ ուսումնասէր
տղաքը, և զանոնք կը քաջալերէ ու կը
վարձատրէ։

Աստուած կ'օրհնէ ողորմած մարդը։

Աստուծմէ վախցիր. և Աստուծմէ

Եթէ վախցիր անկէ՝ որ Աստուծմէ չի վախնար։

Քիչ կը գլտնըվի որ մարդիկ իրենց համբաւոյն չափ արժեն։

Մարդոց քիչ հասկըցածը՝ ժամանակին դիրքն է։

Ընտիր և օգտակար գըրութիւնները ըզմեզ կըրթելով տարբեր մարդիկ կ'ընեն։

Մեր պակասութիւնները ուղղենք մինչդեռ երիտասարդ ենք։

Աշխատութիւնը ամէն բանի կը հասնի և ամէն բանի պակասը կը լեցընէ։

Պէտք չէ որ հրպարտ ըլլանք, վասն զի տրկար և ամէն յաջողակութենէ զուրկ ծընած ենք։

Քիչ խօսողը քիչ կը զլխայ։

Ով որ հաւատարմաբար կը ծառայէ իր հայրենեացը, արժանի է անոր յարգանացը ու երախտագիտութեանը։

Աղէկ մարդը դիւրաւ կը մոռնայ նախատինքը։

Անձնասպարծին օրէնքը սա է. ամէն բան իրեն համար, ուրիշներուն համար և ոչ ինչ։

Ներող եղիր ուրիշներուն համար, և խիստ՝ քեզի համար։

Քու խրդճմիտանքիդ ձայնին հետ խօսէ միշտ։

Երբէք մէկը պատուաւոր համբաւ մը չի կրնար ըստանալ առանց ջանքի և աշխատանաց։

Թեթեւամիտ մարդը իր անձին հետ անգամ համաձայն չէ։

Ինքնակալի մը փառքը իր ժողովրդեան երջանկութեան վրայ կը կայանայ։

Նախատինքները աւագի վրայ գրրէ, և բարերարութիւնները պղտնձի վրայ։

Քրտուն ամէն միջոցներ կը գործածէ իր նպատակին հասնելու համար։

Թշնամին զօրութիւնը յոյսին է։

Երբ մեկը հարուստ է, պէտք է ուրիշները երջանիկ ընել ջանայ։

Կրօնքը կ՚արգելու ըզմեղ ուրիշին բարեաց վնասել նախանձելէ։

Բարեբարութիւններու փոխարէն մի միայն կենդանի երախտագիտութիւնն է։

Տէրութիւն մը կը կործանի, երբ դժգոհութիւնները վերջին աստիճան բարձրանան։

Պէտք չէ ըլլալ ոչ ուիշտ և ոչ կարիլ զեղլս։

Հայրենեաց սէրը բնական է ամէն մարդոց։

Ուրիշներուն երջանկութեանը նպաստելը ինչ մեծ ուրախութիւն կուտայ։

Հօրը իշխանութիւնը սիրոյ իշխանութիւն է, որդւոյն հնազանդութիւնը սիրոյ հնազանդութիւն է։

Որչափ մեծ բերկրութիւն է մեկուն, երբ տեսնէ այն մարդոց երջանկութիւնը որուն ինք պատճառ եղած է։

Ո՛վ ճշմարիտ կրօնք, քու բերկրութիւններդդ սրբութեան վերայ սրչափ մեծ ազդեցութիւն ունին։

Շահը Կայէնները կը ծընանի ընտա-

նեաց ծոցի մէջ։

Մարդիկ զբրջին նման են, իրենց արժէքը իրենց բռնած տեղէն կախում ունի։

Երկդիմի բանիւք կատակները և անարգ խեղկատակութիւնները՝ անհամ ծաղրաբանութիւններ են։

Ցնծնասէրները սընապարծ և ծաղրելի մարդիկ են։

Առաքինութիւնը և արժանաւորութիւնն է որ ըղմարդ կ'անմահացընէ, և ոչ յաղթութեան կամարները։

Առաքինութիւնը, հանճարը և աշխատութիւնը հասարակաց բանալիները են, որոնք կը բանան փառաց տաճարը։

Բարի օրինակներ թողունք մեր յետագայ որդւոց և թոռանց։

Երջանիկ է այն՝ որ ունի ճշմարիտ բարեկամներ։

Ով որ երիտասարդութեան ժամա-

նակ բարիք կը գործէ, իրեն խաղաղ եր-
ջանիկ ծերութիւն մը կը պատրաստէ։

Միրեցէք այն անձերը որ ձեզի բարի
օրինակներ ու բարի խրատներ կուտան։

Աշխարհիս քաղցրութեանը հետ՝ Ա-
տուած խնամատութեամբ խառնած է ա-
ռողջացուցիչ դառնութիւններ։

Հարուստ եւ աղքատ հաւասար են
օրինաց առջեւ։

Ժամանակը և մահը անողորմ են։

Երանի՜ անոր որ հանդարտ միտք եւ
խիղճ ունի։

Ժամանակ եւ համբերութիւն անհը-
բաժեշտ պէտք են այն մարդուն որ մե-
ծամեծ բաներ ընել կ'ուզէ։

Բայց ի կրօնքէն՝ աշխարհիս մէջ ա-
մենեւին բան մը ըզմեզ չի կրնար մխի-
թարել մահուան համար։

Աղէկ բանի մը արժանաւորութիւնը
ծածկելը, անոր յարգը աւելցնել է։

Ամեն բան կը կորսուի, խիստ մեծ
տէրութիւններէն անգամ։

Ինչ բանի յաջողակութիւն և ինչ տա-
ղանդ որ ունենաք, մի պարծենաք։

Քրիստոնեայ մը պարտական է սիրով

տանելու աշխարհիս ամէն փորձութիւն-
ներուն և վիշտերուն։

Ինչ որ ըլլան ձեր վիշտերը, որչափ որ
մեծ ըլլան ձեր դժբաղդութիւնները,
ինքզինքիդ Աստուծոյ նախախնամու-
թեան յանձնեցէք և մի յուսահատիք։

Իմ բարի ու սիրելի բարեկամներս,
դատարկութենէն խուսափեցէք։

Թէ կեղծ և թէ ճշմարիտ բարեկամ
չէն կրնար մի և նոյն լեզուն ունենալ։

Պարկեշտ երիտասարդ մը իր անձին
վրայ մեծ ըզգուշութեամբ կը խօսի։

Բարի ըզգացմունք ունեցող մարդիկ՝
բընական արդարութեան ըսկզբունքնե-
րը ունին իրենց վրայ։

Ո՛վ որ միայն իր անձը կը սիրէ, պէտք
է ըսպասել որ ուրիշներէն սիրվի։

Ծուլութիւնը քուն մը է, որուն մէջ
մարդ գրեթէ բընաւ ազէկ երազ մը
չի կրնար տեսնել։

Բարի մարդուն կը վայլէ նեղոտմիտ
ըլլալ քան թէ վրէժխնդիր։

Դու որ զիս քեզի բարեկամ կոչեցիր,
մինչ դժբաղդութեանդս անըզգայ պիտի
ըլլաս։

Եթէ չենք ուզեր մարդկան անհաճոյ երեւալ, հապա ինչպէս Աստուծոյ անհաճոյ ըլլալէ չենք վախնար։

Աղէտները մարդուս աւելի օգտակար են, քան յաջողութիւնները. քանզի աղէտները մարդուս ինքզինքը ճանչցընել կուտան, իսկ յաջողութիւնները շատ անգամ զանի հրպարտացընելու կը ծառայեն։

Բարեբարութիւնները անմոռաց պահող անձինքը՝ ընդհանրապէս վեհանձն կ'ըլլան։

Փառասիրութիւնը ու ագահութիւնը ըզմարդ դըժբաղդ կ'ընեն։

Հիւղերու մէջ շատ անգամ կը բընակին խաղաղութիւն ու երջանկութիւն։

Զարերուն վառքը և յաջողութիւնը քիչ կը տեւեն։

Ոսկին և արծաթը կ'ըսպառին, բայց առաքինութիւնը ու կրթութիւնը անըսպառելի են։

Աստուծմէ կախում ունին ազգաց անկումը ու վերականգնումը։

Հարբստութիւնը և վեհանձնութիւնը շատ քիչ անգամ միացած կը գտնըվին։

Մի վերջանար երբէք ուսման համար զոհած վայրկեաններուդ վերայ։

Տղայութենէն հաստատված բարի սովորութիւնները բարը կենաց վերայ մեծ ազդեցութիւն ունին։

Անմահ հոգիներու փառաց համար կանգնված արձանները՝ մարդոց ունեցած երախտագիտութիւնը կը յայտնեն։

Այն տղաքները որ խնայութեամբ կը վարին, կը սիրին և կը փարձատրին. բայց անոնք որ գէշ կը վարին, աւելի կ'ըլլան և կը պատժուին։

Գիտութիւնները ու արհեստները սահմանված են մարդը երջանիկ ընելու։

Օրէնքը սահմանված է մարդոց անդորրութեանը համար։

Մեր սիրտը շատ կը վիրաւորվի, երբ բարեկամէ մը խաբվի։

Որչափ քաղցր է օգնութեան հաս-
նելը՝ յանիրաւի նրկուն եղած առաքի-
նութեան և անիրաւութեան։

Ո՛վ բարեկամք իմ, որովհետեւ բաղ-
դը ձեզի օգնած է, ինչո՞ւ համար ձեզմէ
օգնութիւն խնդրող դըժբաղդներուն
չէք հասնիր։

Ի՞նչ գովեստի արդեօք արժանի չեն
այն վեհանձն մահկանացուք, որոնք ի-
րենց կեանքը մարդկութեան ըսփոփա-
նացը համար զոհած են։

Որքան գովութիւններ տրըված են
այնպիսի իշխաններուն, որոնք և ոչ իսկ
անոնց մէկուն արժանաւորութիւն ու-
նէին։

Աղքատանոցներ հիմնող մարդիկ մեծ
ծառայութիւն մը ըրած են մարդկու-
թեան։

Աղէկ աշակերտները միշտ իրենց վարչ-
ժապետին կը հետեւին։

Հայրենիքը զինքը ազատողներուն եւ
անմահացընողներուն երախտիքը միշտ չի
ճանաչեր։

Լաւ են սիրելոյն տրված վերքերը,
քան թշնամւոյն խաբէական համբոյրները։

Երջանիկ ըլլալու երեք բան հարկաւոր է. առողջ մարմին, աղատ միտք ու մաքուր սիրտ։

Թէ որ կ'ուզես որ գործդ կատարվի, դուն անձամբ գրնա. իսկ թէ որ կ'ուզես որ չի կատարուի, ուրիշը ղրրկէ։

Զամորդութեան մէջ բընաւ մի յուսահատիր. օր մը չէ նէ՝ օր մը բաղդին մէկ ժըպիտը կը հասնի, տըրտմութիւնը նեղդ կը փարատէ։

Աստուծոյ ծառայելուն պէս ուրախութիւն, հանգըստութիւն եւ զուարճութիւն չկայ։

Թշվառութեան մէջ կըրօնքը ըզմարդ կը մխիթարէ, և կենաց դառնութեանցը հետ երկնային քաղցրութիւն կը խառնէ։

Աստուածպաշտութիւնը բոլոր մարդուս հոգին է։

Բարկացած ատենդ ոչ դատաստան կըտրէ և ոչ պատիժ տուր. անով շատ անիրաւութենէ կ'աղատիս։

Կաթիլ կաթիլ վազող ջուրը քարը կը փորէ, և կըրկնըված թեթեւ հարուածնեբով բարձր կաղնիներ վար կ'առնըվին։

Եթէ խանութիդ աղէկ պահես, խանութիդ ալ ըզքեզ աղէկ կը պահէ։

Գոց ձեռքով ճանճ անգամ չի բռնվիր։

Առողջ մնալ ուզողը պէտք է որ չափաւոր ուտէ խմէ։

Երիտասարդութեան աղէկ կրթութենէն կախու�ունի ժողովրդոց երջանկութիւնը։

Շնորհակալ ըլլանք Աստուծոյ, որուն կը պարտաւորինք մեր ամէն ունեցածները։

Թոհեմ մարդը խմաստուն է, կը տեսնէ ուրիշին պակասութիւնները, բայց ամենեւին չի խօսիր։

Մարութեան ուրիշ կերպով չենք կրնար յաղթել, բայց միայն անկէ փախչելով։



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Աստուած ոչընչէ ըստեղծեց երկինքը ու երկիրը և ասոնց մէջ եղած բոլոր բաները։

Աստուած ըստեղծեց ըզմեզ որ զինքը ճանչենք, սիրենք, եւ իր սուրբ կամքը կատարենք, և անմահ կեանքը ժառանգենք արքայութեան մէջ։

Աստուած մէկ է, և երեք անձն է, Հայր և Որդի և Հոգի սուրբ. և այս երեքանձնեայ մի աստուածութիւնը կ'ըսվի Ամենասուրբ Երրորդութիւն։

Երկրորդ անձը Որդին Աստուած Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ, մարդ եղաւ որ բոլոր մարդիկ սատանային գերութենէն ազատէ։

Քրիստոս աշխարհի վրայ գԱստուած և անոր սուրբ կամքը մարդոց յայտ-

նեց ըռքանչելի վարդապետութեամբ և շատ հրաշքներով։

Քոսաներ ու բորոտներ բժշկեց, կաղերք քալեցուց, անդամալոյծներ ողջունցուց, կուրերու աչք բացաւ, մեռելներու յարութիւն տուաւ, և ուրիշ շատ հրաշքներ գործեց Քրիստոս մեր տէրը։

Քրիստոս՝ Աստուած եւ մարդ էր, եւ իբրեւ կատարեալ մարդ ամէն բան քաշեց, և միայն մեղք չունեցաւ. յոգնեցաւ, անօթեցաւ, ծարաւեցաւ, լացաւ, վերջապէս չարչարվեցաւ, խաչվեցաւ ու մեռաւ։

Քրիստոս մարմնով երեք օր գերեզմանը մնացած ատենը հոգւովը դրժոխքը իջաւ, եւ հոն սատանային գերի եղող արդարները ազատեց։

Երեք օրէն ետքը իր աստուածային զօրութեամբը յարեաւ, և իրեն հաւատացողներուն երեւեցաւ, քառասուն օր աշխարհի վրայ մնաց և իր առաքեալներուն պատուէրներ տուաւ, յետոյ անոնց աչքին առջեւ երկինք համբարձաւ, եւ Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ։

Հաւատոյ Ճշմարտութիւնները Հանգանակի մէջ կը պարունակվին, որ միշտ եկեղեցին կը կարդացվի, և այս է։

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և անտեսանելեաց։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ ծընեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծընուն՝ և ոչ արարած։

Նոյն ինքն ի բընութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի, երեւելիք և անտեսանելիք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծընաւ կատարեալապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։

Որով էաւ մարմին հոգի և միտ, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ խաչեալ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, երեալ ի յերկի-

նրա նովին մարմնովը նրստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովը և վառօք Հօր ի դատել ըղկենդանիս և ըզմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի սուրբ Հոգին յաստեղծն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնսս և ի մարգարէս և յաւետարանս։

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բընակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միոյն ընդհանրական և յառաքելական եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբէմն յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբէմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել

զՈրդին Աստուծոյ և կամ ըղձուրը Հոգին, և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսըն նրզուել կամ թուղիկ և առաքելական սուրբ եկեղեցի։

Քրիստոնեայն պարտական է որ ի բոլոր սրտէ սոյս ճշմարտութեանց հաւատոյ. եւ հաւատքը կենդանի ըլլալու համար պարտական է որ Աստուծոյ և Եկեղեցւոյ պատուիրանքը պահէ։

Աստուծոյ պատուիրանքը ասոնք են, որ Տասնաբանեայ պատուիրանք ալ կ'ըսուին։

Առաջին, Ես եմ քու Տէր Աստուածդ. չըլլայ որ ինծմէ զատ ուրիշ աստուած ունենաս։

Երկրորդ, Դուն քեզի կուռք չը շինես։

Երրորդ, Պարապ բաներու վրայ Աստուծոյ անունը բերանդ չառնես։

Չորրորդ, Շաբաթ օրը պատուէ.

(առաքեալները շաբաթը կիրակի փոխե-
ցին։)

Հինգերորդ, Հայրը ու մայրը պա-
տուէ։

Վեցերորդ, Ըսպանութիւն մի ըներ։

Եօթներորդ, Շնութիւն մի ըներ։

Ութերորդ, Գողութիւն մի ըներ։

Իններորդ, Սուտ վկայութիւն մի
ըներ։

Տասներորդ, Ընկերիդ տանը եւ ու-
րիշ ունեցածին աչք մի տընկեր։

Պատուիրանաց ամենէն գլխաւորը
այս չորսն են. Աստուած բոլոր անձով
և սրտով սիրել։ Մարդիկ իր անձին պէս
սիրել։ Իրեն համար չուզածը ուրիշին
չընել։ Իրեն համար ուզածը ուրիշին ը-
նել։

Եկեղեցւոյ պատուիրանքը այս հին-
գն են։

Առաջին. Գոնէ կիրակի և տօն օրերը
եկեղեցի երթալ եւ սուրբ պատարագ
տեսնել։

Երկրորդ, Կիրակի և տօն օրերը խա-
նութ չի բանալ և բան չի բանիլ, այլ ա-

զօթքի կարդալու և իրարու հետ անմեղ ուսումնեան պարապելով անցընել։

Երրորդ, Գոնէ տարին հինգ անգամ հինգ տաղաւարին՝ քահանային երթալ կատարելապէս խոստովանիլ։

Չորրորդ, Տարին գոնէ երկու անգամ Ծընունդին և Զատկին արժանապէս սուրբ Հաղորդութիւն ընդունիլ։

Հինգերորդ, Եկեղեցւոյն սահմանած օրերը պահք և ծոմ բռնել, եւ ինչ որ այն օրերը ուտելը արգելված է՝ չուտել։

Պատուիրանաց դէմ գործողը մեղք գործած կ'ըլլայ։ Եօթը գլխաւոր մեղք կան, որոնցմէ շատ մեղքեր կը ծընանին, և մահացու կ'ըսվին և սոնք են. Հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, և բրդջախոհութիւն։

Այս եօթը մահացու մեղաց հակառակ եօթը առաքինութիւն կան, որ սոնք են. խոնարհութիւն. եղբայրասիրութիւն. հեզութիւն, արիութիւն, անշահասիրութիւն, ժուժկալութիւն, եւ ողջախոհութիւն։

Եկեղեցին եօթը խորհուրդ ունի.

մկրբտութիւն, դրբոշմ, ապաշխարութիւն, հաղորդութիւն, ձեռնադրութիւն, պըտակ և վերջին օծումն։

Մկրբտութիւնը այն խորհուրդն է՝ որ քահանայն քրիստոնեայ բլլալու անձը կ'առնէ, և «Մկրբտի Ծառայս Աստուծոյ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» ըսելով՝ մինակ երեք անգամ ջուրը կը խօթէ կը հանէ։

Մկրբտվողը Ադամէն ժառանգած մեղքէն կ'ազատվի, քրիստոնեայ կը կոչվի, յաւիտենական կենաց ժառանգ կը դրվի։

Դրբոշմը այն խորհուրդն է՝ որ քահանայն մկրբտվեալ անձին ճակատը եւ աչքը և քիթը և բերանը և ականջը եւ կուրծքը և կրծունկը և ձեռքը և ոտքը

սուրբ Միւռոնով կ'օծէ յանուն Յիսուսի Քրիստոսի։

Ապաշխարութիւնը այն խորհուրդն է՝ որ քահանայն իրեն կատարելապէս խոստովանող մեղաւորին մեղքերը՝ Աստուծմէ առած իշխանութիւնովը ձեռքն անոր գլխուն դնելով և ողորմեցի ըսելով կը քաւէ։

Հաղորդութիւնը Քրիստոսի տեառն մերոյ կենարար սուրբ մարմնոյ և արեան խորհուրդն է, որ սուրբ Պատարագ ալ կ'ըսվի։

Արժանաւորապէս հաղորդվողը Քրիստոսի հետ կը միանայ, և անոր չարչարանաց և մահուանը զօրութեամբ մարդոց համար ըստացած ամէն արդիւնքները կը վայելէ։

Ձեռնադրութիւնը եկեղեցւոյ կերպ կերպ պաշտօնները կատարելու ընտրված մարդոցը կամ գլխաւորուն վերայ ձեռք դնելով միայն, կամ օծելով ալ նոյն պաշտօնները յանձնելու խորհուրդն է։

Փոքրը աստիճանները սոնք են. դրոնապանութիւն, ընթերցողութիւն, երգեցողութիւն, ջահընկալութիւն։

Այս աստիճանները առնողները Դպիր կ'ըսվին։

Սուրբ աստիճանները ասոնք են. կի-սասարկաւագութիւն, սարկաւագու-թիւն, քահանայութիւն, եպիսկոպոսու-թիւն, կաթողիկոսութիւն։

Պրսակը այն խորհուրդն է՝ որ քա-հանայն այր մը և կին մը հաստատ պայ-մաններով և կրօնքի պահանջած կերպով կը միաւորէ, սահմանեալ կարգը կատա-րելով. և անկէ ետքը այր եւ կին չեն կրնար զատուիլ։

Վերջին օծումը այն խորհուրդն է՝ որ քահանաները ծանրը հիւանդներուն վրայ սուրբ Աւետարան և աղօթք կը կարդան. սուրբ խաչով կամ սրբոց մա-սունքով խաչահանգիստ կ'ընեն, և ար-ձակման աղօթքը կը կատարեն։

Քրիստոնէին գլխաւոր պարտքն է իր նեմաններուն օգնութեան հասնիլ և ողորմութիւն ընել։ Երկու տեսակ ողոր-մութիւն կայ, մարմնաւոր և հոգեւոր։

Մարմնաւոր ողորմութիւնները այս եօթը են.

Քաղցածը կերակրել.
Ծարաւին ջուր տալ.
Մերկը հագուեցընել.
Օտարը տունը տանիլ.
Հիւանդին տես երթալ.
Բանտարկեալը երթալ մխիթարել.
Տէր չունեցող մեռելը թաղել։

Հոգեւոր ողորմութիւններըն ալ այս եօթն են.

Երկմիտ մարդը խրատել.
Տգէտին բարի բան սորվեցընել.
Մեղքէն ետ չի կեցողը սաստել.
Տրտում մը մխիթարել.
Յանցաւորին ներել.
Նեղութեան համբերել.
Ամէնուն համար աղօթք ընել՝ թէ կենդանեաց և թէ նընջեցելոց։

Միշտ բարեգործութիւն ընելու եւ ամէն մեղքէ ըզգուշանալու համար սա չորս բանը մեր մտաց մէջ ունենալու ենք մահը, դատաստանը, դըժոխքը եւ արքայութիւնը։

Մահը՝ մարմինը կենդանացընող հոգիին մարմինէն զատվելն է, որ մեռնիլ

կ'ըսենք, որով մարդը անկէ եւոքը բան մը ընելու կարող չէ։

Դատաստանը այն է որ աշխարհիս վերջը Աստուծոյ հրամանով ամէն մարդու հոգին իր մարմնոյն հետ միանալով յարութիւն առնելէն եւոքը Քրիստոս տէրն մեր պիտի գայ, և ամէն մարդու բարի և չար գործերը դատելով արժանի հատուցում պիտի ընէ։

Դժոխքը սատանաներու համար պատրաստուած յաւիտենական տանջանաց տեղն է, ուր Աստուած պիտի զրկէ չար գործք ունեցող և առանց զղջալու եւ տպաշխարելու մեռնող մարդիկը։

Աբքայութիւնը՝ յաւիտեան Աստուծոյ հետ ըլլալով անվախճան փառք և եր-

ջանկութիւն վայելելու տեղն է, որ բա-
րի գործք ունեցող և կատարեալ ապաշ-
խարութիւնով մեղքէ մաքրուած մար-
դիկը պիտի ժառանգեն։

Այս չորս բանը միշտ մտքի մէջ ու-
նենալու համար ալ ամէն առեն աղօթ-
քով Աստուծոյ օգնութիւնը և շնորհքը
խնդրելու է մք։

Մեր խնդրուածները պէտք է որ
յարմար ըլլան ինչ որ Տէրն մեր սորվե-
ցուց իր Առաքելոց որ միշտ խնդրեն,
և այն է Տէրունական աղօթքը.

Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ
եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն
քո. եղիցին կամք քո որպէս յերկինս
եւ յերկրի։

Զհացս մեր հանապազորդ տուր մեզ
այսօր. և թող մեզ զպարտիս մեր՝ որ-
պէս և մեք թողումք մերոց պարտապա-
նաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն
այլ փրկեա ի չարէ։

Զի քո է արքայութիւն եւ զօրու-
թիւն և փառք յաւիտեանս, ամէն։

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Մեր կենաց առաջին կերակուրը եւ պնունդը օդն է։

Հոգ տանելու ենք որ մեր բնակած տեղին օդը մաքուր եւ բարեխառն ըլլայ եւ մեզի յարմար։

Բնակութեան համար չափաւորապէս բարձրը եւ չոր տեղերը աղէկ են։

Բնակութեան տեղին մօտերը հոտած ջուրեր, կենդանեաց դիեր (լեշեր) եւ ուրիշ վնասակար արտաշնչութիւններ չըլլան։

Սաստիկ տաք եւ սաստիկ ցուրտ օդէն ըզգուշանալու է. մանաւանդ մէկէն ի մէկ տաքէն պաղ կամ պաղէն տաք անցնելու չէ։

Խուցերուն (օտանեբուն) պատուհանները (փէնջերէները) ատեն ատեն բանալու է. մանաւանդ պառկելու խուցերուն՝ որ մաքուր օդ բանի։

Շատ առողջարար բան է՝ ամէն օր տունէն դուրս ելնել ու գոնէ կէս ժամ մը դրսի պարզ ու մաքուր օդը վայելել։

Արեւին ելնելէն քիչ մը յառաջ եւ

անմիջապէս մարը մրանելէն ետքի օդը սովորաբար թաց կ'ըլլայ և օգտակար չէ։

Այն խուցերը որ լոյս չեն տեսներ, կամ խիստ քիչ կը տեսնեն, բընակութեան յարմար չեն և վնաս կուտան։

Լոյսը թէ կենդանիներուն և թէ բոյսերուն մէկ հատիկ կեանք տրվող բանն է։

Լուսաւոր տեղ բընակող մարդիկ սովորաբար աւելի առողջ կ'ըլլան, կերպարանքնին և գոյներնին աւելի զուարթ և քաղցր։

Յուրտ ժամանակ նայելու է որ խուցին տաքութիւնը չափէ դուրս չըլլայ, թէ չէ՝ զանազան հիւանդութիւններու և ցաւերու պատճառ կ'ըլլայ։

Թոնիրի սովորութիւնը շատ վրտանգաւոր և վընասակար բան է, և մարդը շատ կը թուլցընէ,

Ածուխի կըրակը եթէ աղէկ մը վառված չըլլայ, շատ վրտանգաւոր կ'ըլլայ, կըրակը աղէկ մը հրրահրրված ըլլալու է։

Մարդըս մրսեղէն եւ խոտեղէն կերակուրներով կ'ապրի։

Մրսեղէն կերակուրները աւելի սընունդ և ուժ կուտան. բայց խոտեղէն

ները աւելի դիւրամարս են։

Թէ՛ մրսեղէն և թէ՛ խոտեղէն կերակուր խառնն ուտելը աւելի օգտակար է։

Պարզ կերակուրները աւելի առողջարար են. համեմները (թէրպէհները) և պահարեղէնները միշտ դրժվարամարս են։

Առանց ախորժակի (իշտահի) սեղան նստելու չէ. այնչափ կերակուր ուտելու է որ միշտ քիչ մը ախորժակ մընայ բան ուտելու։

Կերակուրը չի կրլլաց՝ աղէկ ծամելու է. թէ չէ՝ դրժվար կը մարսվին, ըստուգ մնքսը (միսէն) կը ծանրանայ։

Մարդուս բնական խըմելիքը ջուրն է. անոր պէս առողջ եւ օգտակար ուանմեղ խըմելիք չիկայ։

Աղէկ ջուրը պայծառ ու թեթեւ կ՚ըլլայ, համ հոտ չունենար։

Օգին (բաքը) և անոր նման ոգելից խմելիքները մարդուս կենացը թոյն են։

Փոփոխ ու թոյլ անձերը քիչ մը ջրախառնն գինի կրնան խմել կերակուրի վերայ, և չէ թէ անօթի փորանց։

Իրիկվան կերակուրը որչափ քիչ ու թեթեւ ըլլայ, այնչափ աւելի օգտակար կ'ըլլայ։

Բնութեամբ թոյլ եղող և կամ նրստողական կեանք ունեցող անձինքը շատ ըզգուշութիւն ընելու են որ իրենց կերակուրը դիւրամարս ու քիչ ըլլայ։

Մարսողութիւնը դիւրաւ ըլլալու համար, ամէն բանէ առաջ կերակուրը աղէկ ծամելու է. ասոր համար պէտք է որ ակռաները առողջ զօրաւոր և աղէկ պահված ըլլան։

Ըզգուշանալու է որ ակռաները մէկէն ի մէկ տաքէն պաղ՝ կամ պաղէն տաք բանի չի հանդիպին. ասոր համար ոչ սասոիկ տաք եւ ոչ ալ սասոիկ պաղ բան բերան առնելու չէ։

Շատ հարկաւոր ու շատ օգտակար բան է առաւօտները բերանը լուսալ և հրած հացի փոշիով մաքրել. նոյնպէս ա-

մէն անգամ որ կերակուր ուտելի, պէտք է աղէկ մը լվալ բերանը։

Մարդուս առողջութեան շատ հարկաւոր է չափաւոր շարժմունքը։ Շարժմանց մէջ օդտակարներէն մէկն է ժուռգալը։

Շարժումը օդտակար ըլլալու համար անօթի փորանց պիտի ըլլայ, կամ կերակրուելէն ետքը՝ վերան շատ տուն անցած ըլլալու է։

Շարժման տուն մարդուս վերայ երբ բերտինք գայ կամ շունչը ընկրսի ծանրանալ և վերան թուլութիւն մը գալ, պէտք է հանգչիլ։

Ցոգնելէն ետքը պաղ առնելէն շատ ըզգուշանալու է. մանաւանդ քրտինքը չի պագած պաղ ջուր բընաւ խմելու չէ։

Մարդուս ուժը կը պակսի երբ աշխատի կամ հիւանդանայ. այս պակսած ուժը նորոգելու խիստ կ՚օգնէ քունը։

Քունին չափը ամէն մարդու իր աշխատանքը և սովորութիւնին է. բայց քանան և չորս ժամու մէջ եօթը կամ ութը ժամ միակերպ քընանալը բաւական է։

Չափաւոր քունը թէ՛ մարմինը և թէ՛

միտքը կը թեթեւցընէ. իսկ չափազանցը մարմինը կը ծանրացընէ, և բանի գործի հետ ըլլալ չի թողուր։

Պառկելու խուցին մէջ ամենեւին պէտք չէ ծաղիկ, պըտուղ, կամ հոտաւէտ բաներ պահել. և ցորեկը պատուհանները բաց պէտք է թողուլ որ մէջի աւրըված օդը փոխուի։

Զափէ դուրս արթուն կենալը շատ վնասակար է, մարդուս ուժը կը կրտրէ, կը տրկարացընէ, և առողջութեանը շատ վընաս կուտայ։

Մարդուս հագած ըզգեստները իր հասակին, տարւոյն եղանակին եւ իր բնակած երկրին օդուն յարմար պիտի ըլլայ։

Որ եւ իցէ ըզգեստ նայելու է որ բաւական լայն ու յարմար ըլլայ, և միշտ մաքուր. անանկ որ կուրծքը, փորը, թեւերը և ոտքերը համարձակ ու դիւրաւ շարժին։

Այն կապերը, գոտիները, կոճակները, վրձնոցները և այլն, որոնք որ շատ կը սրխմեն, շատ վնասներ կը բերեն առողջութեան, և պատճառ կ'ըլլան անթիւ հիւանդութիւններու։

Մաքրութիւնը առողջութեան աղբիւրն է։ Բորը (ույուղ) և մորթի հիւանդութիւններուն մեծ մասը անմաքրութենէ յառաջ կուգան։

Որչափ փոխադրական (մէկէն մէկալին անցնող) հիւանդութիւններ կան, աղտոտ և գոց տուներու մէջ նստողներէ եւ աղտոտ հագուստ հագնողներէ գրեթէ միշտ կ'ըսկըսին։

Ուստի հընար է զածին չափ ձերմակեղէնները (ջամաշիրները) ու անկողնի լաթերը յաճախ (սրխ սրխ) պէտք է փոխել։

Բաղնիքի սովորութիւնը օգտակար է, բայց բաղնիքի մէջ երկար ատեն կենալու չէ, որ շատ վնասակար է. և լըվացվելու ջուրին ալ խիստ տաք ըլլալու չէ, այլ չափաւոր տաք։

Լըվացվելու համար բաղնիք երթալու է, չէ թէ ըզբօսանք ընելու գացածի

պէս մէկ քանի ժամ երգելու, հաց ուտելու և քնանալու։

Բաղնիքէն զատ ամեն օր պէտք է լուանալ ձեռքը և երեսը և ոտքը և ակռաները։ Վերջապէս ամէն բանի մէջ մաքրութիւն պէտք է։

Աղտոտ մարդը ուրիշին դարշելի երևնալէն զատ, իր կոպտոտ և անկիրթ բնաւորութեան պատճառով տրված կ'ընայ. կրթեալ մարդը հարկաւ մաքրասէր ալ կ'ընայ։

Աղտոտ մարդը թող իր աղքատութիւնը պատճառ չի բռնէ, վասն զի աղտը կ'ըսէ. աղքատութիւնը Աստուծմէ է, բայց անմաքրութիւնը մարդէն է։

ՄԱՏԹԷՈՍԻ Ս. ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

ԳԼ. Է.

Եւ տեսեալ (Յիսուսի) բազմութիւնս՝ բարձաւ ի լեռնէն. և իբրեւ նստաւ անդ. մատեան առ նա աշակերտքն նորա. և բացեալ բերանն իւր ուսուցանէր զնոսա, և ասէր.

Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։

Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։

Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։

Երանի որ քաղցեալ և ծարաւի լցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։

Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։

Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։

Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։

Երանի որ հալածեալ լցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։

Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն ըզձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար ըզձէնջ սուտ՝ վասն իմ. ցընծացէք և ուրախ լերուք, զի վարձ ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին ըզմարգարէսն որ յառաջ .քան ըզձեզ էին։

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն

անհամի՝ թե յաղնցի. ոչ իւրեք ապդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքսս՝ և կոխան լինել ի մարդկանէ։

Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաղչել՝ որ ի վերայ լերին կայցէ. և ոչ լուցանեն ճրագ՝ եւ դրնեն ընդ գրբուանաւ. այլ ի վերայ աշտարակի, և լոյս տայ ամենեցուն՝ որ ի տանն իցեն. այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է։

Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։

Ամէն ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք և երկիր, յոտ մի՝ որ նշանախեց

մի է, ոչ անցցէ յօրինացըն և ի մարգա-
բերից մինչեւ ամենայն եղիցի։

Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրա-
նացս յայսցանէ ի փոքունց, և ուսուց-
ցէ այնպէս ըզմարդիկ, փոքրը կոչեսցի
յարքայութեան երկնից։

Իսկ որ արացէ և ուսուցցէ, նա մեծ
կոչեսցի յարքայութեան երկնից։

Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առա-
ւելուցու արդարութիւն ձեր աւելի քան
ըզդպրացըն և ըզփարիսեցւոց, ոչ մտա-
նիցէք յարքայութիւն երկնից։

Լուարուք զի ասացաւ առաջնոցըն,
թէ մի՛ ըսպանաներ. զի որ ըսպանանիցէ
պարտական լիցի դատաստանի։

Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ
բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝
պարտաւոր լիցի դատաստանի. և որ ա-
սիցէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լի-
ցի ատենի. եւ որ ասիցէ ցեղբայր իւր
մարոս՝ պարտաւոր լիցի ի գեհենն հրոյն։

Եթէ մատուցանիցես զպատարագ քո
ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ
եղբայր քո ունիցի ինչ խէթ ըզքէն, թող
ըզպատարագըն քո առաջի սեղանոյ, եւ

երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր ըզպատարագն քո։

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն մինչդեռ ի ցեռս ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ ըզքեզ ոսոխն դատաւորին, և դատաւորն դահճի, և արկանիցիս ի բանտ։

Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանիցես ըզյետին նաքարակիտն։

Լուարուք զի ասացաւ՝ մի շինար. բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալ նը մա, անդէն շինացաւ ընդ նմա ի սրտի իւրում։

Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ ըզքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն։

Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ ըզքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհեն։

Ապաքէն ասացաւ, թէ որ արձակիցէ ըզկին իւր՝ տայէ նմա զարձակմանն։

Բայց ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ արձակէ ըզկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շինել, եւ որ զարձակեալն առնէ՝ շինայ։

Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն. մի երդնուցուս սուտ, բայց հատուցցես Տեառն զերդմունս քո։

Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի երդնուլ, մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, եւ մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա. եւ մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի. եւ մի ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի ըսպիտակ առնել կամ թուխ։

Այլ եղիցի ձեր բան, այո՝ այո, եւ ոչ՝ ոչ, զի աւելին քան զայն ի չարէն է։

Լուարուք զի ասացաւ, ակն ընդ ակն, և ատամն ընդ ատամն։

Այլ ես ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարի։

Ա՛Յ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն։

Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թող ի նա և զզգեստսն քո։

Եւ որ տարապարհակ վարիցէ զգբեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս։ Որում խնդրիցէ ի քէն՝ տուր, եւ որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցա ներ զերեսս։

Լուարուք ասացաւ զի ասացաւ, սիրեսցես զընկերս քո, և ատեսցես զզթշնամին քո։

Ա՛Յ ես ասեմ ձեզ, սիրեցէք զզթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, և աղաչեցէք ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զդձեզ և հալածեն, զի եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրեւ ի վերայ արդարոց և մեղաւորաց։

Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ա՞ւ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն. եւ եթէ ասցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք, ա՞ւ ապաքէն մաքսա-

ոբք և մեղաւորք ընդոյն գործեն։

Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

Գլուխ Զ.

Զգուշ լերուք ողորմութեան ձեռամ՝ մի առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց լինչ նոցա, գուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք ի հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է։

Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի հարկաներ փող առաջի քո. որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ։

Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. որպէս զի եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ, և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լի-

նիցիս որպէս կեղծաւորքըն . զի սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթիս , որպէս զի երեւեսցին մարդկան ։

Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա ։

Այլ դու յորժամ կայցես յաղօթիս , մուտ ի սենեակ քո՝ և փակեա ըզդուրս քո , և կաց յաղօթիս առ Հայր քո ի ծածուկ . և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս ։

Եւ յորժամ կայցէք յաղօթիս , մի՛ շատախօսք լինիք իբրեւ ըզհեթանոսսն , զի համարին թէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին . արդ մի՛ նըմանիցէք նոցա . զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ մինչեւ ձեր խընդրեալ լինչ լցէ ի նըմանէ ։

Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթիս . Հայր մեր որ յերկինս , սուրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի . ըզհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր , և թող մեզ ըզպարսխս մեր , որպէս և մեք թողուցուք մերոց պարտապա-

նաց. և մի տանիր ըղմեղ ի փորձութիւն, այլ փրկեա ըղմեղ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Զի եթէ թողուցուք մարդկան ըղյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր։

Այլ թէ ոչ թողուցուք մարդկան ըղյանցանս նոցա, եւ ոչ հայրն ձեր թողցէ ըղյանցանս ձեր։

Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրեւ ըղկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն։

Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

Այլ դու, յորժամ պահիցես, օծ ըղգլուխս քո և լուա զերեսս քո, զի մի ե-

բեւեսցիս մարդկան իբրեւ ըղձահոգ, այլ հօրն քում ի ծածուկ. և հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ։

Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն, եւ ուր գողք ական հատանեն և գողանան։

Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան. զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։

Ճրագ մարմնոյ ակն է, եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի. ապա թէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի։

Իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն ո՞րչափ եւս։

Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։

Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք վասն ոգւոյ ձերոյ՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, և մի՛ վասն մարմնոյ

ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ոչ ապաքէն ոգի առաւել է քան ըղկերակուր՝ և մարմին քան ըզհանդերձ։

Հայեցարուք ի թռչունս երկնից զի ոչ վարեն և ոչ հընձեն, և ոչ ժողովեն ի ըշտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ ըզնոսա. ոչ ապաքէն դուք առաւել էք քան ըզնոսա։

Իսկ արդ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի։

Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ՝ զի և ոչ Սողոմոնն յամենայն ի փառսն իւրում ըզգեցաւ իբրեւ ըզմի ի նոցանէ։

Իսկ եթէ ըզխոտն ի վայրի, որ այսօր է և վաղիւ ի հընոց արկանի, Աստուած այնպէս ըզգեցուցանէ, ո՞րչափ եւս առաւել ըզձեզ, թերահաւատք։

Մի այսուհետուն հոգայցէք և ասիցէք. զինչ կերիցուք, կամ զինչ արբցուք, կամ զինչ ըզգեցցուք. զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն։

Խընդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ։

Մի այսուհետեւ հոգայցէք վասն վաղուի՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի. շատ է աւուրքն չար իւր։

Գլուխ Է.

Մի դատիք՝ զի մի դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք, և որով չափով չափիք՝ չափեսցի ձեզ։

Զի՞ տեսանես ըզչիղ յական եղբօր քոյ, և ի քում ական ըզգերանըդ ոչ տեսանես. կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թող հանիցս ըզչիղըդ յականէ քումմէ. և ահաւադիկ ի քում ականըդ գերան կայ։

Կեղծաւոր, հան նախ ըզգերանըդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել ըզչիղըն յականէ եղբօր քոյ։

Մի տայք ըստրբութիւն շանց, և մի արկանէք ըստարգարիտ ձեր առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխեցեն ըզնոսա, և դարձեալ երդիծուցանիցեն ըզձեզ։

Խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտանիք, բախեցէք՝ և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։

Ո՞ կայ ի ձէնջ մարդ՝ զոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար տայցէ նմա. եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օձ տայցէ նմա։

Արդ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց. որչափ եւս առաւել հայրն ձեր որ յերկնին է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն ըզնա։

Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են օրէնքն և մարգարէք։

Մըտէք ընդ նեղ դուռն. քանի՛ ընդարձակ է դուռնն և համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ, եւ բազումք են որ մըտանեն ընդ նա. քանի՛ անն

ձուկ է դուռնին եւ նեղ Ճանապարհին՝ որ տանի ի կեանքս, և սակաւք են որ գըտանեն ըզնա։

Ըզգոյշ լերուք ի սուտ մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ են գայլք յափշտակողք. ի պտղոյ նոցա ծանիջիք ըզնոսա։

Միթէ քաղեցէն ի փշոց խաղող, կամ ի տատասկէ թուզ։

Այսպէս ամենայն ծառ բարի՝ պըտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պըտուղ չար առնէ։

Ոչ կարէ ծառ բարի պըտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պըտուղ բարի առնել։

Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պըտուղ բարի, հատանի և ի հուր արկանի։

Ապա ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։

Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր. մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս հօր իմոյ որ յերկինսըն է։

Բազումք ասիցեն ցիս յաւուրըն յայնմիկ. Տէր Տէր՝ ոչ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դեւս հանաք, և յանուն քո զօրութիւնըս բազումս արա-

բաք, և յայնժամ՝ ասացից ցընոսա՝ եթէ ոչ երբեք գիտէի ըզձեզ. ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէիք զանօրէնութիւն։

Ամենայն որ լսէ ըզբանս իմ զայսոսիկ և առնէ ըստնոսա, նմանեսցէ առն իմաստնոյ՝ որ շինեաց ըզտուն իւր ի վերայ վիմի. իջին անձրեւք՝ եւ խաղացին գետք, շընչեցին հողմք՝ և բախեցին ըզտունն, և ոչ կործանեցաւ. քանզի ի վերայ վիմի հաստատեալ է։

Եւ ամենայն որ լսէ ըզբանս իմ զայսոսիկ՝ եւ ոչ առնէ ըստնոսա, նմանեսցէ առն յիմարի, որ շինեաց ըզտուն իւր ի վերայ աւազոյ. իջին անձրեւք, յարեան գետք, շընչեցին հողմք՝ հարին ըզտունն և անկաւ, և էր կործանումն նորա մեծ յոյժ։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն ըզբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա, զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր, և ոչ որպէս դրպիրքն։

ԶՕՐԱՒՈՐ ԵՒ ՀԱՆՃԱՐԵՂ ԽՕՍՔԵՐ

Ա.

Աղէքսանդրը Մակեդոնացին տեսնելով որ իրեն համանուն զինուոր մը գետը նետուելու և միւս կողմն անցնելու կը վախնար, կը բռնէ անոր ձեռքէն՝ կամ անուանդ փոխէ, կ'ըսէ, և կամ սիրադ։

Մէկէն զինուորը սիրտ կ'առնէ եւ գետը կը նետուի։

Բ.

Աղէքսանդրի հարցուցին թէ, քու գանձերդ ո՞ւր կը պահես. պատասխանեց, իմ բարեկամներուս քով։

Գ.

Թէոփրաստոս հայկերոյթի մը մէջ մարդու մը բոլորովին լուռ կենալը տեսնելով, ըսաւ. եթէ յիմար ես՝ ըսածդ իմաստնաբար է, եթէ իմաստուն ես՝ ըրածդ յիմարաբար է։

Դ.

Թէմոկրիտէսին հարցուց շատախօս մարդ մը, վաղը ո՞ր տեղ կրնամ զքեզ տեսնել. պատասխանեց Թէմոկրիտէս, այն տեղ, ուր տեղ ես զքեզ տեսնելու չեմ։

Ե.

Լակեդեմոնացի մը թշնամեաց բաղմութիւնը տեսնելով, սարսափելով կը պատմէր իր հայրենակցացը. պատասխանեցին Լակեդեմոնացիք, աւելի աղէկ՝ զանոնք յաղթելով մեր պարծանքն ալ այնքան մեծ կ'ըլլայ։

Զ.

Լակոնացի կին մը լսելով թէ իր որդին պատերազմի մէջ սպաննուէր է, պատասխանեց, շատ ուրախ եմ, որովհետեւ

այն խորհրդով ծնած էի զինքը, որ իր հայրենեացը համար մեռնելու պատրաստ ըլլար։

Է.

Յունաց մէջ Աստիկեցի ըլլալը պարծանք սեպուած ըլլալով, անմիտ Աստիկեցի մը Անաքարսիսի երեսը կը զարնէր անոր Սկիւթացի ըլլալը. պատասխանեց Անաքարսիս, ինձի նախատինք է իմ հայրենիքս, բայց դուն նախատինք ես քու հայրենեացդ։

Ը.

Դիոգինէսի հարցուցին թէ՝ ինչու համար մարդիկ մուրացկանները աւելի առատաձեռն կ'ըլլան քան փիլիսոփայները. պատասխանեց, վասն զի անոնք աղէկ գիտեն որ աւելի շուտով կարող են կաղանալ և կուրնալ, քան թէ փիլիսոփայ ըլլալ։

Թ.

Դեմոնաքս տեսնելով որ մարդ մը իր գլխատովը կը պարծենայ, բռնեց զգեստէն ու ըսաւ. ինչու այս հանդերձով կը

պարծենաս, զոր քեզմէ առաջ ոչխարը կը հագնէր, և դարձեալ ոչխար էր։

Ժ.

Անաքարսիս փիլիսոփայն ներկայ գտնուելով Աթենացւոց մէկ ժողովին մէջ ըսաւ, կը զարմանամ, որ Յունաց մէջ խօսողները իմաստուններն են, բայց դատողները յիմարներն են։

ԺԱ.

Մարդ մը իր բարեկամին հանդիպելով ըսաւ, երազիս մէջ տեսայ և խօսեցայ քեզի հետ. պատասխանեց մեւսը, ներողութիւն կը խնդրեմ որ քեզի ականջ չեմ դրած։

(Լուսաւորութիւն հաւատոյ։)

ԺԲ.

Մարդու մը հարցուցին թէ Աստուած ո՞ւր տեղ է. պատասխանեց, ըսէք նախ թէ ո՞ւր տեղ չէ։

ԺԳ.

Դիոգենէսի հարցուց մէկը, թէ ի՞նչ բան աւելի շուտով կը մոռցուի. պատասխան ընդունեց, բարեբարութիւնը։

ԺԴ.

Գովասանութեան արժանի է Աբբիւտասի այն խօսքը, որ գիւղացիի մը վրայ բարկանալով ըսաւ, ի՞նչպէս պիտի պատժէի զքեզ եթէ բարկացած չըլլայի։

ԺԵ.

Ծառայ մը երբ տիրոջմէն կը պատժըւէր, կ՚ըսէր, ակամայ գործեցի այն յանցանքը. պատասխանեց տէրը, ուրեմն և ակամայ պատժուէ։

ԺԶ.

Ագեսիլայոսի հայրը պահանջեց իրմէ որ դատաստանական ատենի մը մէջ օրէնքի դէմ վճիռ տայ, ըսաւ Ագեսիլայոս,

ոլ հայր, մանկութենէս ի վեր սովրեր եմ քեզմէ հնազանդ ըլլալ օրէնքին, ուրեմն հիմա ալ քեզի կը հնազանդիմ առանց օրէնքը լուծելու։

ԺԷ.

Գող մը Դեմոսթենէսի առջեւ ինքը-զինքը արդարացնելու համար կ'ըսէր, չէի գիտէր որ աս քուկդ է. պատասխանեց Դեմոսթենէս, բայց աղէկ գիտէիր որ աս քուկդ չէ։

ԺԸ.

Սողոնի հարցուցին թէ, Թագաւորութիւնը ինչպէս կրնայ պահպանուիլ. պատասխանեց, երբ քաղաքացիք հնազանդ ըլլան իրենց վարչութեան պաշտօնեայներուն եւ պաշտօնեայներն ալ՝ օրէնքներուն։

ԺԹ.

Աղքատ կին մը կ'աղաչէր Փիլիպպոս Թագաւորին՝ որ իր դատը տեսնէ. Թագաւորը պատասխանեց թէ, ժամանակ չունիմ. ուրեմն Թագաւոր ըլլալու ալ ժամանակ չունիս, ըսաւ կինը։

Փիլիպպոս զարմանալով կնոջ աղաչանաց խօսութեան վրայ. ոչ թէ միայն անոր դատը տեսաւ, այլ եւ ունկնդիր եղաւ այն մեծ բազմութեանը, որ իրաւունք կը պահանջէր։

Ի.

Մարկոս Աւրեղիոս երբ Հռոմայ կայսր եղաւ, ինքը խմաստասէր ըլլալուն համար՝ Պղատոնի սա խօսքը յիշեց, եթանէ՝ այն ժողովրդոց, ուր խմաստասէրները թագաւոր են, և թագաւորներն ալ խմաստասէր։

ԻԱ.

Սեւերոս՝ Հռոմայ կայսր ըլլալուն պէս, բոլոր շողոքորթ մարդիկը վռնտեց պալատէն դուրս. թշնամիքս, ըսաւ, ինձմէ քանի մը երկիր միայն կրնան առնել, իսկ շողոքորթները կրնան զիս առաքինութիւններէս զրկել և անուանարկ ընել։

ԻԲ.

Փիլիպպոս թագաւորը՝ օր մը գինովցած ժամանակը կնոջ մը դատաստանը ուղիղ չվատարեց ու դատապարտեց զայն։ Անմեղ կինը աղաղակեց, ուրիշին կը բողոքեմ քու անիրաւ դատաստանիդ համար։

Թագաւորը սաստիկ բարկացած՝ որոնք պիտի բողոքեն, ըսաւ. պատասխանեց կինը, սաստիկ արբեցած և քունը գլուխը կոխած Փիլիպպոսին համար կը բողոքեմ արթնուն և անօթի Փիլիպպոսին։

Կնոջ այսքան համարձակ պատասխանը զգաստացուց թագաւորին թմբրութիւնը և փախուց անոր քունը. որով սկսաւ թէ զայրացաւ անոր վրայ, այլ անոր դատը աւելի մտադիր քննելով արդար վճիռ տուաւ։

ԻԳ.

Սոկրատ փիլիսոփան իր հայրենեաց ապերախտութեան վրայ առանց վշտանալու, սիրով յանձն առաւ մեռնիլ. և բանտին մէջ ալ իր աշակերտաց խրատ կուտար թէ, քաղաքացիին առջև առաքինութիւնն է հայրենեաց օրինացը հնազանդիլ։

Ճշմարիտ փառքն առաքինութիւնն է։

Մարդս միշտ իր կիրքերուն հետ պիտի կռուի, եւ ուրիշներուն կրնայը հետ խաղաղութեամբ պիտի երթայ։

Երջանիկ ըլլալու համար պէտք է որ մարդս ըլլայ աղէկ ազգական, աղէկ բարեկամ ու աղէկ քաղաքացի։

ԻԴ.

Երբ Պարտասցիք վէճաբերը ու սարսափեր էին Պլուտոսէն, և իրենց կանայքն ու որդիքը թշնամւոյն ձեռք չի ձգելու համար, կ'ուզէին Արեսէ կղզին խրկել, յանկարծ Աբիդամիս անուանով կին մը ձեռքը թուր մ'առած ժողովատուները կը մտնէ ու կ'ազաղակէ.

Պատուեցէք այդ նախատելի հրամանատակը. ջնջք ուզեր մենք հնազանդիլ. այնչափ վատ կը կարծէք զմեզ, որ մեր հայրենիքը կործանելէն առաջ ալ ապրիլ ուզենք. ամենքս ալ հաստատ մեր միտքը դրած ենք, որ ձեզի հետ կամ յաղթենք կամ մեռնինք։

Բաւական եղաւ այս քաջասիրտ կնոջ այսչափ խօսքը. զէնք առին բոլոր կանայք և տղք, և ազատեցին հայրենիքը։

ԻԵ.

Տիբերիոս կայսրը մեռնելէն առաջ՝ Մորիկ քաջասիրտ զօրավարն ընտրելով Լեռն յաջորդ, սա գեղեցիկ և ազդու խրատները տուաւ։

Թագաւորէ Մորիկ, յոյսս պարապ մի հաներ. ականջդ բաց ըլլայ ճշմարտութեան, և գոց՝ շողոքորդութեան։

Արդարութիւնը քեզի ամրոցակից ըրէ. գիտցիր որ ծիրանին իր պայծառութիւնը կը կորսնցնէ՝ եթէ ախտերու միայն ծածկոյթ ըլլայ։

Գաւազանդ ժողովրդեան նեցուկ ըլլալու համար է. նայէ որ ժողովուրդն երջանկացընես։

Բարի թագաւորն իր գերագոյն իշխանութիւնը՝ փառաւոր ծառայութիւն մը պիտի սեպէ։

Թագաւորէ Մորիկ, քու յաղթութեանդ նշանները՝ իմ գերեզմանիս զարդերն ըլլան, և առաքինութիւններդ ինձի դամբանական ներբողներ։

ԻԶ.

Բերդի մը մէջ թշնամիներէ պաշար-

ուած կայսր մը սա հեռեւեալ գեղեցիկ խօսքերով իր զինուորները կը քաջալերէ ու կը վառէ։

Մեր թշնամիները մեր երկպառակութեամբ միայն այսչափ զօրացան, միաբանինք դարձեալ, չեն կրնար մեր առջեւը դիմանալ։

Մեղ կ՚ըսպասէ փառքը. հայրենիքն զմեղ կը կոչէ. մեր դիւցազունքը մեղ կը նային, երթա՛նք։



Թէ պատերազմին վտանգացը և թէ յաղթութեան փառացը ձեզի մասնակից պիտի ըլլամ. եթէ բերդս առնուի, եթէ իմ քաջ զինուորակիցներս մեռնին, պէտք է որ ես ալ անոնց հետ մեռնիմ։

ԻԷ.

Երբ քաջն Պոյառ ասպետ իր թա-

գաւորին և Հայրենեաց պաշտպանութեան համար Պուրպոնեերուն դէմ պատերազմած միջոցին վիրաւորուելով մեռնելու վրայ էր, Պուրպոնեան զօրավարն անոր հանդիպելով սկսաւ խղճալ. պէտք չէ որ իմ վրաս յաւիս, ըսաւ քաջին Պայտաւ, քու վրադ յաւելու է որ Թագաւորիդ ու Հայրենեացդ դէմ կը պատերազմիս։

ԻԸ.

Կարոլոս կայսրը երբ տեսաւ որ հրաշակաւոր Միքէլ—Անճէլօ պատկերահանն ու ճարտարապետը կուգայ, մէկէն ոտք ելեր ու ըսեր է. կայսերքը շատ կան, բայց քեզ նման արուեստաւոր չկայ։ Օր մ՚ալ Կարոլոս սա խօսքն ըսեր է. ուսումնական մարդիկ զիս կը կրթեն, վաճառականք զիս կը հարստացնեն, իմ մեծամեծներս զիս կը մերկացնեն։

ԻԹ.

Հենրիկոս Թագաւոր ելլալուն պէս խրախուսեց իր զօրքն ու ըսաւ. զինուորակիցք իմ, դուք Գաղղիացի էք, և ես ձեր Թագաւորն եմ. ահա թշնամին։

Ո՛րդեակը, ձեզի հետ կ'ուզեմ յաղթել կամ մեռնիլ։

Եթէ դրօշնիդ կորսընցնելու ըլլաք, դլխուս ձերմակ փետուրին ետեւէն եկէք. մինչեւ որ արեանս վերջին կաթիլը թափուի, ան զձեզ պատուոյ և փառաց ճանապարհը կ'առաջնորդէ։

Պատերազմին ժամանակ երբ զինուորները վիատած ետ քաշուիլ սկսան, Հենրիկոս կեցուց զանոնք կանչելով. սա կողմ դարձէք, եթէ պատերազմիլ ալ չէք ուզեր, գէթ մեռնիլը տեսէք։

Այս ըսաւ ու նետուեցաւ թշնամեաց վրայ. բոլոր զօրքն ալ իր ձերմակ փետուրին ետեւէն վազեցին, և յաղթութիւնը վաստակեցան։

Լ.

Հենրիկոս իր ժողովուրդն երջանկացընելու համար հոգածութիւնը շատ ծաղկեցուց. արօրն ու արօտը Գաղղիոյ երկու ստինքն են, կ'ըսէր, ժողովուրդն անոնցմով պիտի սնանի։

Անգամ մը երբ կը յորդորէին Հենրիկոսը, որ թշնամեաց հետ աւելի խստու-

թեամբ վարվի, պատասխան տուաւ. մարդուս վրէժխնդրութենէն դադարած ուրախութիւնը վայրկեան մը միայն կը տեւէ. իսկ գթութենէն առաջ եկած ուրախութիւնը մշտնջենաւոր է։

Օտարազգի դեսպան մը երբ տեսաւ Հենրիկոսի թիկնապահաց քիչ-որութիւնը զարմացաւ. ըսաւ անոր Հենրիկոս, ուր որ արդարութեան օրէնք կը թագաւորեն, հոն բռնութեան կարօտութիւն չի կայ։

Լ.Ա.

Լուդովիկոս հնգետասանեւրորդին որդին իր գթասիրութեամբը մեծ համբաւ ու համակրութիւն ստացած էր ժողովրդէն։

Կը պատմեն թէ ասիկա օր մը Պապենոյ դեսպանին ըսեր է թէ, որպէս զի թագաւոր մը իր սեղանին կերակուրները համառնէ, պէտք է սոսոյգ գիտնոյ որ այն օրը իր հպատակաց մէջ առանց կերակուր ուտելու անօթի պառկող չկայ։

Ասոր որդւոյն Ծննդեանը համար Փարիզու քնակիչները որոշեցին որ վեց հարիւր հազար լիրայի հրախաղութեան հանդէս ըլլայ։

Լուդովիկոս այն գումարին վրայ ուրիշ գումար մ՝ալ աւելցնելով՝ ուզեց որ այն սահմանն ազքատ աղջիկներու օժիտ տրուի. որով այն օրը եօթն հարիւր եօթանասունուվեց հարսնիք եղան։

ԼԲ.

Լա—Ռոշժաքէն ազնուական դիւցազունն երբ հազիւ 20 տարեկան ըլլալով՝ զօրավար դրուեցաւ, կ՝ըսէր իր զօրացը. պատանի եմ, բայց արիութեամբս ձեզ հրամայելու արժանի պիտի ընեմ ինքզինքս։ Եթէ առաջ երթամ, ետեւէս եկէք. եթէ ետ քաշուիմ, սպաննեցէք զիս. իսկ եթէ մեռնիմ, վրէժս առէք։

ԼԳ.

Նաբոլէոն Պոնապարթի զօրաց սպարապետ կարգուած լլլալով, անոնց սիրտ տալով և վստահութիւնը շահելով Փիեմոնթէի վրայ քալեցնելու համար սա խօսքերն ուղղեց.

Ո՛վ զօրականք, ըսաւ, ձեր կերակուրը կերակուր չէ, հագուստնիդ ալ հագուստ չէ. տէրութիւնը շատ բան պարտական է ձեզի, բայց տալու կարողութիւն չունի. ձեր քաջութիւնն ու համբերութիւնը ձեզ պատիւ կ'ընեն, բայց ուրիշ օգուտ մը չեն բերեր. եկէք ես զձեզ աշխարհիս ամէն դաշտերէն աւելի պտղաբեր երկիր մը տանիմ, ուր մեծամեծ քաղաքներ ու հարուստ գաւառներ պիտի տեսնէք, ուր պատիւ՝ փառք և հարստութիւն միանգամայն պիտի գտնէք։

Զօրքը մեծ ուրախութեամբ ընդունեց այս խօսքերս. ու պատրաստուեցաւ իր զօրավարին խօսքէն դուրս չելնելու. և յաջողեցաւ ալ իրենց։

Յետոյ Նաբոլէոն զօրքը Լոմպարտիոյ դաշտը իջեցնելու առնը խրախուսեց այսպէս. զօրականք, տասն և հինգ ա-

ուր մէջ վեց յաղթութիւն ըրիք, քսանը-
մէկ դրօշ առիք, յիսունը հինգ թնդա-
նօթ, շատ ամուր բաղաքներ, տասնը հինգ
հազար գերի. պատերազմներու յաղթե-
ցիք առանց թնդանօթի, գետերէ անցաք
առանց կամուրջի. քալեցիք առանց ոտքի
ամանի։ Ասոնք այնպիսի բաներ են որ
Հասարակապետութեան փաղանգներն ու
ազատութեան զինուորները միայն կրնան
ընել։ Զօրակոնը, հայրենիքը դեռ ձեզմէ
մեծամեծ բաներու ակնկալութիւն ունի.
իր յոյսը պարապ մի հանէք։

Լ.Դ.

Երբ Հռովմայեցիք յաղթեցին Կար-
քեդոնացւոց, ծանր պահանջմունք ըրին
և ուզեցին որ բոլոր զէնքերնին, նաւեր-
նին ու փղերնին և մեծագումար տուրք
մ՚ալ տան։

Կարքեդոնացիք ամէն բան սիրով տը-
ւին. բայց երբ տուրքը վճարելու եկաւ
կարգը, ծերակոյտը սկսաւ լալ։

Աննիբաղ Կարքեդոնացի քաջ զօրավա-
րը գիտնալով թէ զէնքերնին ու նաւեր-
նին տալով Կարքեդոնը արդէն կործանած

ըսել է. Ծերակոյտին վատութիւնն ալ տեսնելով սկսաւ ծիծաղիլ ու ըսել.

Զէնքերնիս ու նաւերնիս առնուած ատեն պէտք էր լալ. դուք Կարքեդոնը անզէն յաղթուած ու անպաշտպան տեսնելով չհաւաքեցիք, կամիլ մը արտասուք ալ չթափեցիք, որովհետեւ կարծեցիք որ անոնք ձերը չեն. ձեզ ամենակարեւորները չեն. իսկ երբ կարգը տուրք տալուն եկաւ՝ սկսաք լալ, վասն զի դուք ալ պիտի պարտաւորիք տուրքէն ձեզ ինկած մասը վճարել.

Անմիտներ, Կարքեդոն կործանեցաւ, անոր զէնքերը ու նաւերը տուին. անոր կեանքն ալ մէկտեղ տուին, Հռովմայեցւոց ձեռքը գերի եղանք. ինչու կալուածներ եւ ստացուածքներ ունենալու հոգ կը տանիք. անոնք ձերը չեն՝ այլ Հռովմայեցւոցն են, որոնք զէնքերնուդ հետ

տուլիք. ասոր ցաւը քիչ առնէն պիտի զգաք, որուն հետ բաղդատելով արդի ցաւերնիդ գրեթէ ոչինչ է։

ՕԳՏԱԿԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Դիմոն և Պիւթիաս Պիւթագորեանքը այնպիսի հաւատարիմ բարեկամութիւն հաստատեցին իրենց մէջ, մինչեւ պատրաստ էին մէկմէկու համար մեռնիլ։

Երբ Դիոնէսիոս բռնակալը կ'ուզէր սպաննել զՊիւթիաս եւ օրը սահմանեց, դատապարտուածը քանի մ'օր ժամանակ խնդրեց իր գործերը կարգի դնելու համար. եւ Դամոնը երաշխաւոր մնաց այն պայմանով, որ եթէ իր բարեկամը եւ չի դառնայ, ինքը մեռնիլ յանձն կ'առնէր։

Ամենքը, եւս առաւել Դիոնէսիոսը կը սպասէին թէ այս նորանշան և տարակուսական բանը ինչպէս կը վերջանայ։

Մօտեցաւ սահմանեալ օրը և չվերադարձաւ բարեկամը. ամենքը սկսան բամ

բասել այն երաշխաւորը, որպէս թէ յիմար եղած լլլար։ Բայց երբ որոշեալ օրն խակին վրայ հասաւ միւս բարեկամը, Դիոնէսիոս բռնակալը զարմացած ու հիացած անոնց հաւատարմութեան վրայ, փոխեց իր վճիռը. և խնդրեց որ ան ալ ընդունին իրենց մէջ իբրեւ երրորդ բարեկամ։

Բ.

Պերիկլէս ասենի մէջ հասարակաց գործերու պարապած ատեն, ամպարիշտ և անզգամ մարդ մը սկսաւ հայհոյել անոր դէմ։ Ասոր համբերեց Պերիկլէս, և ոչ մէկ պատասխան մը տուաւ. բայց ի վերջոյ այսր ամենայնի այն մարդը բոլոր օրը հայհոյելէ չդադարեցաւ։

Երբ իրիկունը հանդարտ երեսով և գնացքով տուն կուգար Պերիկլէս, նոյն անամօթը անոր ետեւէն երթալով, ամէն նախատինք բերնէն կը թափէր։ Պերիկլէս տունէն ներս մտնելով ըստ որում գիշեր էր, հրամայեց իր ծառաներէն մէկուն որ ճրագ վառէ և առաջնորդէ այն մարդուն որ հանգիստ իր տունը երթայ։

Գ.

Երբ Դեմոսթենէս ճարտարախօսը բանտէն և նոյն իսկ Ամթենացւոց քաղաքէն կը վախչէր, տեսաւ որ իր թշնամիներէն մէկ քանին սաստիկ վազելով իր ետեւէն կուգան, և վախնալով պահուըտելու տեղ մը կը փնտռէ։

Բայց անոնք Դեմոսթենէսի անունը ստէպ ստէպ ձայն տալով, վերջապէս հասան անոր և խնդրեցին որ չվախնայ, այլ հետն առնէ այն արծաթը որ տունէն բերեր էին անոր համար իբրեւ ճամբու պաշար և օգնութիւն, այլեւ սիրտ կուտային անոր որ շատ չորտմի իր վատաբաղդութեանը վրայ։

Անոնց պատասխանեց Դեմոսթենէս, ինչպէս համբերեմ այս վատաբաղդութեանը, որ կը հեռանամ այն քաղաքէն,

որոնց մէջ այնպիսի թշնամիք ունիմ, որ եթէ անոնց պէս բարեկամներ ունենայի, շատ ու շատ երջանիկ կ'ըլլայի։

Դ.

Մեծն Դիոնէսիոս, որ Սիկիլիայի բռնաւորն էր, իր բերանովը խոստովանեցաւ թէ իր երջանկութիւնն ինչպէս էր։

Երբ անոր մարդահաճ պալատականներէն մէկը, Դամոկլէս անունով, խօսակցութեան մէջ կը պատմէր անոր զօրքերը, հարստութիւնները, թագաւորութեան մեծութիւնը, կերպարանքին առատութիւնը, արքայական ապարանքի փառաւորութիւնը, և կ'ըսէր թէ՝ և ոչ մէկն այսչափ երջանիկ եղած չունի, այսպէս խօսեցաւ Դիոնէսիոս. ով Դամոկլէս, ըստ որում իմ այս կեանքս ըզքեզ կ'ուրախացնէ, ուրեմն կ'ուզէս ա՞նոր համը տեսնել և իմ երջանկութիւնս փորձով իմանալ։

Դամոկլէս համաձայնեցաւ. վերջը հրամայեց Դիոնէսիոս նստեցնել այն մարդը ոսկեղէն աթոռի մը վրայ, ներքեւը շատ գեղեցիկ օդոյ ձգած, վրան փառա-

հեղ գործուածներով հիւսած ծածկոց, չորս կողմը զանազան տախտակներ շաբած՝ որ զարդարուած էին ոսկի և արծաթի քանդակագործութեամբ։

Ապա հրամայեց մէկ չքնաղաձեւ սեղանի մը մօտ կանգնեցնել ընտիր ընտիր մանկունք, ամենայն արիութեամբ նայելով անոր հրամանին և անոր սպասաւորելով. դրուած էին հոն օծանելիք և թագեր, խունկերու անուշահոտութիւն կը բուրեր, և պատրաստուած էին հաղուագիւտ կերակուրներով լեցուն սեղաններ։

Դամոկլէս բաղդաւոր կարծեր էր իր անձը։ Բայց Դիոնէսիոս այս փառահեղ պատրաստութեան մէջ հրամայեց որ շաղ շաղուն սուր մը մազով մը կասուած առաստաղէն կախեն այն երջանիկ մարդուն գլխուն վրայ։

Դամոկլէս նկատելով այս զարհուրելի սուրը, ոչ այն գեղեցիկ սպասաւորներուն կը նայէր, ոչ այն բազմարուեստ զարդարանքներուն. և ոչ ձեռքն երկնցուց սեղանին. այլ մանաւանդ թէ աղաչեց Դիոնէսիոսի որ թոյլ տայ իրեն հեռանալ անկէ, քանի որ մազ կամ չունէր երջանիկ ըլլալու։

Ահա ինքը բռնակալը բացայայտ ցոյց տուաւ թէ՝ երբէք երջանիկ չէ այն մարդը, որուն գլխուն վրայ վտանգ մը կախուած կայ։

Ե.

Սկիպիոնոս, Սկիպիացւոց թագաւորը, մեռնելուն մօտ հրամայեց որ բերեն պրբակ մը գաւազաններ, և ամենը ի միասին կապուած տուաւ իր ուխտուն որդւոցը որ խորտակեն զանոնք։

Երբ ամէն մէկ որդին ըսաւ թէ չեմ կրնար այդ բանն ընել, վերջը ինքը թագաւորը քակեց ան կապուած պրակը և մէկիկ մէկիկ կոտրտեց զանոնք, ասանկ խրատ տալով անոնց. ահա տեսէք, իմ որդիքս, եթէ միասիրտ ըլլաք, անյաղթելի կը մնաք. բայց եթէ բաժնուիք մէկմէկէ, տկար կ'ըլլաք։

Զ.

Դիոդորոս Սիկիլիացին կը պատմէ, թէ հին Եգիպտացւոց մէջ սովորութիւն կար վախճանած թագաւորներու մարմինները չթաղել, մինչեւ անոր բոլոր գործերը չի քննուին ու չիմանան։

Ամէն մարդու համարձակութիւն տրուած էր մեռեալին վրայ գանգատ յառաջ բերել. դատաստան կը բացուէր, և եթէ ապացոյցով հաստատուէին թագաւորին վատ գործերը, կը մնար առանց թաղման։

Այս խոյտառակութիւններէն երկիւղ ունենալով շատերը, երկիւղածութեամբ եւ արդարութեամբ թագաւորութիւն ըրին։

Է.

Ամէն օր պէտք է մեր սիրտը հաշիւ տայ մեզի։ Այսպէս կը վարուէր Մէքքստոս Հռոմայեցին. օրը վերջացուցած և գիշերային հանդիստ մտած ժամանակը կը հարցանէր իր անձին. այսօր քու վրադ ո՞ր պակասաւոր բանն ուզղեցիր, ո՞ր յանցանքին ընդդիմացար, և ի՞նչ բանով ա-

ելի կատարեալ եղար։ Արդարեւ մէկ ամենագեղեցիկ սովորութիւն մը, որով մարդս պէտք է քննութիւն ընել թէ ինչ պէս անցուցեր է իր բոլոր օրը։

Ը.

Զինէացի Մանտարին մը դատապարտուած էր մեռնելու, ըստ որում յանցաւոր էր գտնուած իր պաշտօնին մէջ։ Անոր տան և հինգ տարեկան որդին գընաց Թագաւորին դուռը, որ ապաչէ եւ թոյլտուութիւն խնդրէ իր ծնողին տեղը մեռնելու։

Թագաւորը հիանալով այս գործին վրայ, և դուռը շարժելով այն ազնիւ որդւոյն հայրասիրութեանը վրայ, ոչ միայն շնորհեց անոր հօր կեանքը, այլ և կամեցաւ իր կողմէն անոր առանձին պատիւ և մեծարանք ցոյց տալ, որ այնպիսի զաւակն օրինակ ըլլայ ապագայի համար։

Ասնցմէ հրաժարեցաւ մանուկը՝ ըսելով. այդպիսի գերազանց շնորհ մը միշտ կը նորոգէ այն պատճառներուն յիշատակը, որոնց համար իր ծնողը դատապարտուած էր, և կեղտ անուն կ'ըլլար։

Թ.

Պիլիթիաս, որ Լիւդոյի մէկ քաղաքին կառավարիչ էր, հարուստ և ժլատ մարդ ըլլալով, հրամայեց որ աշխարհին բոլոր ոսկեհանքերը փորուին, անանկ որ գրեթէ ամենեւին հող չմնայ երկրագործութեան համար։ Անոր կիները քաջ հնարագիտութեամբ մը անոր հասկցուց այս գործին անմտութիւնը։

Կիները հրամայեց ոսկիէ սեղան մը շինել բոլոր իր սպասներուն. նոյնպէս ոսկիէ շինել այն կերակրոց ձեւը և կերպարանքը և պատրաստել տուաւ, որոնք որ իր ամուսնոյն սիրելի էին։

Պիլիթիասին հաց ուտելու ժամանակը անոր առջեւ դրին պատրաստուած ոսկեզէն սեղանը. այս բանս յառաջ զանի ուրախացուց, բայց անօթութիւնը երբ սկսաւ տանջել, հրամայեց որ կերակուր բերեն. բերին այն ոսկեզէն յօրինուածքը, որ արդէն պատրաստուած էին։

Պիլիթիաս սկսաւ ձանձրանալ այս խաղերէն, և բարկանալով խնդրեց բան մ' ուտելու։

Ահա տես և հասկցիր, ըսաւ անոր իր

կինը, թէ ոսկին չէ մնուցիչ մարդուս հա-
մար. դուն կը մոռանաս միայն որ հողին
ծոցէն ոսկի հանես, փոխանակ այնպիսի
պտուղներ կրթելու որ հարկաւոր են կե-
նաց պահպանութեան համար։ Դուն կը
խանգարես բոլոր երկրագործութիւնը,
որով և քու հպատակներդ շուտով սովա-
մահ պիտի ըլլան, եթէ շարունակես այդ
ընթացքդ։ Վերթիաս օգուտ քաղելով այս
խրատներէն փոխեց իր վարքը։

ժ.

Հոֆգոռոս։

Հռոմայեցւոց հիւպատոս Հռեգուլոս
շատ մեծամեծ քաջութիւններ ընե-
լով իր հայրենիքը պաշտպանելէն վերջը,
երբ Կարթեդոնացւոց ձեռքը գերի ինկաւ,
ուղեցին Կարթեդոնացիք որ հաշտութիւն
ընեն Հռոմայեցւոց հետ. և Հռեգուլոսը
որ չորս տարի բանտը պահած էին, Հռոմ
խրկեցին որ գերեաց փոխանակութեան
վրայ խօսի. երդում ալ առին անկէ որ ե-
թէ յանձն չառնուն Հռոմայեցիք, նորէն
Կարթեդոն դառնայ։

Հռեգուղոս Հռոմ հասնելուն պէս, փոխանակ Հռոմայեցիները յորդորելու որ հաշտուին, աւելի Ջանաց զանոնք համոզել, որ երբէք չհաշտուին. քանզի կ'ըսէր, Կարթեդոնացւոցմէ գերի բռնուածները երեւելի և ընտիր անձինք են. իսկ մեզմէ գերի բռնուողներն ամէնն ալ ինծի պէս ծեր և այսուհետեւ պատերազմի անյարմար անձինք։

Հռոմայ ծերակոյտը դժուարաւ հաւանեցաւ այս խորհրդոյն. և Հռեգուղոս ինչպէս որ երդում տուած էր վերադառնալու ի Կարթեդոն՝ եթէ հաշտութեան պայմանը չյաջողէր, դարձաւ անտարբերութեամբ, առանց իր բարեկամաց Թախանձանաց եւ իր կնոջն ու որդւոց արտասուաց մտիկ ընելու։

Կարթեդոնացիք տեսնելով Հռեգուղոսին վերադարձը, և լսելով որ ընդհա-

կառանին է յորդորեր իրենց հաշտութեան պայմանները չընդունելու, չարաչար մահուամբ սպաննեցին զՀռեգուզոս. սուր ու դուրս ցցուած գամերով լեցուն սընտուկի մը մէջ գոցեցին, և գիշեր ցերեկ անդադար սնտուկը ասդիս անդին շարժելով տանջեցին, և վերջապէս խաչի վրայ կախելով մեռցուցին։

ԺԱ.

Մ-ԷՈՍ ՍԿԵՎԵԼԱ։

Կլուսիոնի Պորսենա թագաւորը բարկանալով Հռոմայեցւոց վրայ, թէ ինչու իրենց Տարկուինոս թագաւորն իշխանութենէն ձգեցին. վերստին զանի թագաւորեցընելու համար պատերազմի ելաւ Հռովմայեցւոց դէմ, եւ եկաւ Հռոմի պաշարեց։

Մուկիոս ազնուական երիտասարդ մը անարժան տեսաւ իրենց քաջասրտութեան՝ այնպէս պաշարուած մնալ, ուզեց որ տարօրինակ քաջութեամբ մը իր հայրենիքն ազատէ։ Ուստի հրաման խնդրեց Ծերակուտէն եւ Հռոմէն դուրս ելաւ։

գնաց Մուկիս Թշնամեոյն բանակը, իր զգեստին ներքեւ սուր մը պահած։

Մուկիս մինչեւ Պորսենայեն վրանը հասաւ, ուր էր Պորսենա, և իր առենա-զբաղիրը մի և նոյն զգեստը հագած թո-շակ կուտար զօրականին։

Մուկիս չկրցաւ լաւ տեղեկանալ թէ ո՞րն է թագաւորը. և իր խորհուրդն յայտ-նելու տեղի չտալու համար՝ առենադբ-պիրը թագաւոր կարծելով վրան վազեց, զարկաւ սրով և սպաննեց զայն։

Իսկոյն բռնեցին Մուկիսը, եւ թա-գաւորին առջեւ տարին։ Հարցուց թա-գաւորը, ո՞վ ես դուն։ Մուկիս առանց խռովելու և մեծ քաջասրտութեամբ կը պատասխանէ, Հռոմայեցի եմ ես, և իմ անունս ալ Մուկիս է, եկայ որ զքեզ՝ իմ հայրենեաց թշնամին սպաննեմ. այն-քան սիրտ ունիմ մեռնելու, որչափ սիրտ ունիմ զքեզ սպաննելու. մենք Հռոմայե-ցիքս քաջութեամբ գործելու և քաջու-թեամբ համբերելու սովորած ենք։

Պորսենա արիասիրտ Մուկիսին այս խօսքերէն բոլորովին խռոված, երբ խրոխ-տաբար հրաման ըրաւ, որ կրակ վառեն

և կրակով չարաչար այրեն Մուկիսոսը որ ճշմարիտը խօսի, և այս դարանագործութեան հանգամանքները յայտնէ։ Մուկիսոս աճապարեց, և ցուցընելու համար թէ Հռոմայեցիք մարմինը բանի տեղ չեն դներ, և փառքն աւելի մեծ համարում ունի անոնց քով, ամ ձեռքը կրակը խոթեց. ես ինքնին կ'այրեմ այս ձեռքը որ սխալեցաւ՝ ըսելով.

Պորսենա զարհուրած այս զարանչելի գործին վրայ, յաւակեց ազատէն և հրամայեց որ Մուկիսոսը հեռացնեն կրակարանէն ու ազատ թողուն։

Յետոյ Մուկիսոս իրը թէ իր ընորհակալութիւնը յայտնելու համար խոստովանեցաւ թէ, մինք երեք հարիւր Հռոմայեցի կարիճ երիտասարդներ դաշինք դրինք մէջերնիս այս եղանակաւ դքեղ ըսպանելու, եւ մեր հայրենիքն ազատե-

լու։ Անոնցմէ առաջինն էս եղայ. միւս-
ներն ալ ամէն մէկն իր ժամանակին կը-
հանդիպին քեզի։

Պորսենա արդէն 'այլայլած ըլլալով,
իսկոյն հաշտութիւն ըրաւ Հռոմայեցւոց
հետ, և Հռոմի պաշարումը վերցուց։

Մուկիոսը աջ ձեռքն այրած ըլլալով
Սկեվոլա կոչուեցաւ, որ ըսել է ձախ-
ձեռնեայ. բայց իր քաջասրտութեամբը
մեծ պատիւ բերաւ Հռոմայեցի երիտա-
սարդաց. եւ հայրենեաց ազատութեան
համար ունեցած անձնանուիրութիւնն
ալ փառաւորուեցաւ և կը փառաւորուի
միշտ։

ԺԲ.

Սեմբրոնիոս։

Սեմբրոնիոս Հռոմայեցին Սկիպիոն
Աֆրիկեցի մեծ զօրավարին հետ թշնա-
մութիւն ունէր։

Սեմբրոնիոս Հռոմայեցւոց դատաւոր
եղած առեն, երկու հոգի դատաստանի
կանչեցին Սկիպիոնը։

Այն մարդ ըսաւ որ, հիմա Սեմբրո-
նիոս իր վրէժը հանելու աղէկ առիթ մը

գտաւ. բայց Սեմբրոնիոս իր որջամի աղ-
գասէր ըլլալը և ազգասէր մարդուն յար-
դին ալ ինչ սատիճան ճանչելը ցուցուց։
Ամենեւին չեմ ուզեր լսել, ըսաւ Սեմբ-
ռոնիոս, այն ամբաստանութիւնները որ
Սկիպիոնին համար կ'ըլլան. Սկիպիոն ե-
ռեւելի մարդ է, և ազգին ու հայրենեաց
մեծամեծ ծառայութիւններ ըրած է. ա-
նոր երախտիքը փոքրիկ փոխարէնով չհա-
տուցուիր։

Այս կերպով բոլոր անոր աղէկու-
թիւնները մի առ մի յիշեց. որով ոչ միայն
բոլորն ալ զարմացուց, այլեւ դատախազ-
ներուն սիրան ալ անանկ շարժեց որ ետ
կեցան դատաստանի կանչելէ Սկիպիոնը։
Անանկով գտնուեցաւ Սկիպիոնին ազգա-
սիրութիւնը և Սեմբրոնիոսին ներքսամբ-
տութիւնը։

ԺԳ.

ԼԻՎԻՈՍ ԵՒ ՆԵՐՈՆ ՀՈՄՈՅԵՂԻ։

Լիվիոս սատիկ ատելութիւն ունէր
Ներոնի դէմ, ըստ որում ատենօք Լիւ-
վիոսի աքսորուելուն դրդռիչ եղած էր
Ներոն։

ժամանակը բերաւ որ ասոնք երկուքն ալ Հռովմայեցւոց բդեշխ եղան։

Լիլլոս եւ Ներոն բդեշխ եղած մեջնեռն փոխանակ իրար ատելու, իրարմէ վրէժխնդրութիւն ընել մտաբերելու, երկուքն ալ հաշտուեցան, և սիրով միացան, որպէս զի Հայրենեաց աղէկութիւն և օգուտ ընելու կարող ըլլան։ Եւ յիրաւի բոլոր վաղեմի ատելութիւնները մոռցուեցան, վրէժխնդրութեան գաղափար անգամ չմնաց իրենց մտքին մէջ, և երկուքը միացած մեծամեծ բարիք ըրին Հայրենեաց։

ԺԴ.

ԿՈԴՐՈՍ։

Երբ Թորացիք սրով և հրով կ'աւերէր տիկնին Ատտիկէ աշխարհը, Աթենացւոց թագաւորը Կոդրոս անցոյց ըլլալով անոնց ձեռքէն ազատելու, մարդ յուղարկեց Դելփիս, պատգամ հարցնելու համար թէ ինչ հնարքով կարելի էր այդպիսի ծանր պատերազմէ ազատուիլ։

Կ'ասեն թէ պատգամ եղեր է որ, եւ թէ ինքը թագաւորը թշնամեաց ձեռքով սպաննուի, պատերազմը կը վերջանայ։

Այս համբաւը տարածուելով ոչ միայն Աթենայոց մէջ, այլեւ Թորայոց մէջ ալ, ուստի հրաման եղաւ որ և ոչ մէկ Թորայի չվիրաւորէ Կոդրոսը։

Բայց Կոդրոս որ մի միայն իր հայրենիքն ու ազգն ազատել կը խորհէր և ոչ իր անձը, առանց մէկու մը իմացընելու հանեց իր թագաւորական զգեստներն ու նշանները, և հասարակ զինուորի հագուստ հագնելով, մտաւ թշնամեաց բանակը. և այնքան կատաղաբար կը պատերազմէր, որ թշնամիք առանց զգալու զարկին սպաննեցին։

Յետոյ անմիջապէս անոր մարմնէն իմացան Թորայիք թէ Կոդրոս ինքն է. առանց պատերազմելու սկսան ցիր և ցան

ելլալ. և Ա.թենացիք իրենց թագաւորին անձնանուէր մահովը հայրենեաց ազատութեան համար՝ պատերազմի ու թշնամեաց ձեռքէն ազատեցան։

Ժ.

Լ.-ՈՒԻԴԱՍ։

Քսենքսէս Պարսից թագաւորը մեծ բանակաւ երբ Յունաստան կ'արշաւէր, միտքը դրած էր որ Ցոյնք իր անթիւ բազմութիւնը լսելնուն պէս խսկոյն կը խոնարհին և անձնատուր կ'ելլան։

Բայց շատ զարմացաւ, երբ տեսաւ որ Ցոյնք տակաւին իր անցնելու ճանապարհն ալ կտրելու և գոցելու կը ջանան։ Ուստի Քսենքսէս խորամանկութեամբ ուզեց որ Սպարտացւոց Լեւոնիդաս թագաւորը իրեն գրաւէ. անոր համար նամակ գրեց անոր թէ, ընդունայն տեղը մի պատերազմիր. անցիր իմ կողմս, դքեզ բոլոր Յունաստանի թագաւոր կը դնեմ։

Իսկ հայրենասէրն և առաքինի Լեւոնիդաս սա արիական պատասխանը տուաւ. աւելի կ'ուզեմ հայրենեաց համար մեռնիլ, քան թէ անոր վրայ իշխել։

Քսերքսէս ուրիշ թուղթ մ՚ալ գրեց, որուն մէջ սա խօսքը միայն կար, գէնքերդ տուր։ Լեւոնիդաս ալ անոր նեղքեւը գրեց, եկուր առ։

Քսերքսէս զայրացաւ Լեւոնիդասին վրայ, և մեծ գունդ մը խրկեց անոր դէմ պատերազմելու։ Ձիներուն մը Պարսից բազմութիւնը իմացնել ուզելով Լեւոնիդասին՝ ըսաւ. Պարսիկք այնչափ շատ են, որ ամենը մէկէն նետ նետելու որ ըլլան՝ կրնան արեւուն լոյսը խաւանել։ Լեւոնիդաս պաղ արիւնով մը անոր պատասխանեց. աւելի աղէկ, մենք ալ շուքի մէջ կը պատերազմինք և արեւէն չենք նեղուիր։

Եւ յիրաւի պատերազմը սաստիկ կատաղութեամբ սկսաւ, և յաղթութիւնը Լեւոնիդաս վաստակեցաւ։ Քսերքսէս երեք անգամ այս կոտորածին վրայ ամբոռէն վեր ցատկեց. և խնացաւ որ հետը մարդ շատ ունի եղեր, բայց խիստ քիչ պատերազմող զինուոր։

ԺԶ.

Արիստիդէս։

Արիստիդէս երեւելի էր Ամենացւոց

մէջ, որ իր հաստատուն բնաւորութեամբ բը և անյողդողդ արդարութեամբը ոչ սուտ խօսիլ դիտէր, ոչ շողոքորդել և ոչ կեղծաւորել։

(Ընձիւղտ։ Զիրաֆէ։)

Ա՛ս միշտ դէմ կը կենար Թեմիստոկլէսի առաջարկութիւններուն, որ շատ վտառասիրութիւն եւ իշխանասիրութիւն ունէր։ Թեմիստիկլէսի ճարը հասնելով կը ջանայ աքսորել տալու Արիստիդէսը, և կը յաջողի ալ։

Քիչ ժամանակէ ետքը երբ Քսերքսէս մեծ բանակով Յունաստանի վրայ աքշա-

լաց ժամանակը, Աթենացւոց դաշնակից զօրաց գլխաւորները Պարսից բազմութիւնը տեսնելով՝ կ'ուզէին անձնատուր ըլլալ։ Թեմիստոկղէս ոտք կը կոխէր՝ թէ պէտք է դէմ կենալ ու պատերազմիլ։ Եւ հաղիւ թէ Թեմիստոկղէս իր սրտաշարժ ճարտասանութեամբը շատերը համոզեր էր, Ըստ պարտացի ծովակալ մը բարկութիւնը չի կրնալով բռնել՝ վերուց դաւաղանը որ անոր գլխուն զարնէ. զսպէ, ըսաւ Թեմիստոկղ, բայց մտիկ ըրէ։

Նոյն միջոցին վրայ հասաւ Արիստիդէս, որ աքսորանքէն նոր դարձեր էր. և սկսաւ խելքով ու ճարտասանութեամբ իր ոտոխին՝ այսինքն Թեմիստոկղէսին օգնել, և մէկէն սա գեղեցիկ խօսքն ըսաւ անոր. ուրիշ ժամանակի թողունք մեր անձնական կռիւները, հիմա նայինք թէ ինչպէս կրնանք իրարմէ աւելի օգնել հայրենեաց։ Ասանկով ընդունելի եղաւ Թեմիստոկղէսի խորհուրդը, և Սաղամիս նայի նեղուցին մէջ Յոյնք յաղթեցին Պարսից։

ԺԷ.

ԹԵՄԻՍՏՈԿԼԷՍ։

Թեմիստոկլէս Ա.Թենացւոց քաջ ու անուանի զօրավարը իր ազգն ու հայրենիքը Պարսից ձեռքէն ազատելովը մեծ համբաւ ու պատիւ ստացաւ. և իր ըրած բարիքներն ալ այնչափ մեծ կ'երևային Ա.Թենացւոց, որ մատով կը ցուցընէին զինքը իրենց որդւոց եւ օտարներուն ճանչցընելու համար։

Ասոր գէմ նախանձելով ոմանք ամբաստանութիւն ըրին, մինչեւ անգամ աքսորեցին Թեմիստոկլէսը, հայրենեաց բարեբարը։

Թեմիստոկլէս զգաց որ իր թշնամեաց նախանձէն հանգիստ չպիտի կրնայ ընել իր աքսորանքին մէջն ալ, փախաւ Պարսկաստան. և հոն Արտաշէս Թագաւորին ներկայանալով, ես եմ ասէր արքայ, ըսաւ, Թեմիստոկլէս Ա.Թենացին, որ այնչափ չարիք հասուցի Պարսից. եւ հիմա Յունաստանի հալածուած՝ եկայ քեզի ապաւինելոյ. քու ձեռքդ է Թեմիստոկլէսին բաղդը։

Զարմացաւ Թագաւորն անոր արիաս-սիրտ համարձակութեանը վրայ, ներեց անոր և ուրախութեամբ շատ պարգևներ եւ արտօնութիւններ տուաւ իրեն որ հանդիսատ ապրի։

Եպէքը երբ Արտաշէս Յունաց վրայ պատերազմ բացաւ, Թեմիստոկղէսը ըստ պարապետ անուանեց. և կը յուսար որ իր կրած նախատանաց վրէժը կը հանէ Թեմիստոկղ։

Սակայն Թեմիստոկղ չուզեց ամենևին անոր դէմ սուր վերցնել. չուզեց իր հայրենեաց ապերախտութիւնը պատժելու համար՝ ինք ապերախտ դառնուիլ իր հայրենեացը։ Եւ որովհետև իր բարերար Թագաւորին դէմ ալ նաեւ ապերախտ դառնուիլ չէր ուզեր, ուստի աւելի լաւ ընտրեց կամաւ մեռնիլը, քան թէ ան երկու առաջադրութիւններէն մէկը գործել. Թոյն առաւ այն վսեմ և արիասիրտ զօրավարը, և իր հայրենիքէն հեռու, տապրագրուած և հալածուած, հայրենեաց դէմ չմեղանչելու համար մեռաւ վախճառնլիկ տարեկան։

ԺԸ.

Եպամինոնդաս։

Թեբէի ընտիր և քաջ զօրապետն էր Եպամինոնդաս, որ իր հայրենեաց փառքին և ազատութեանը համար Լեւկարա քաղաքին քով Սպարտացւոց դէմ քաջութեամբ պատերազմելով, երբ յաղթանակաւ Թեբէ դարձաւ, փոխանակ պսակուելու և փառաւորուելու, ամբաստանեցաւ թէ, որոշուած ժամանակէն աւելի զօրապետութիւն ըրած է, ուստի պէտք է որ մեռնի։

Իսկ Եպամինոնդ ուրախութեամբ պատասխանեց թէ. ուրախութեամբ կը մեռնիմ, միայն թէ գրուի դատակնքոյն մէջ որ Եպամինոնդ Լեւկարայի պատերազմին մէջ Թեբացւոց յաղթութեան պատճառ ըլլալուն համար ի մահ դատապարտուեցաւ։

Ամէնքս ժողովուրդն իր ապերախտութեան վրայ, եւ Եպամինոնդաս պատերազմէն նոր դարձած՝ պէտ՝ յաղթութեամբ եւ ծափահարութեամբ դառնալանարանէն դուրս ելաւ։

Եպամինոնդաս ուրիշ շատ քաջութիւններով իր հայրենիքը պաշտպանելէն եւ զայն փառաւորելէն ետքը՝ Մանտինէայի քով Սպարտացւոց դէմ պատերազմելու ատենը ծանր վէրք մը առաւ կուրծքին. երբ տեսաւ որ պիտի մեռնի, հարցուց թէ, վահանս պահպանուա՞ծ է. քովն մարդիկը լսելով պատասխանեցին, այո՛. եւ բերին իր քովը։

Դարձեալ հարցուց Եպամինոնդ թէ, պատերազմն ինչ վախճան ունեցաւ. երբ լսեց թէ Թեբացիք են յաղթողք, եւ թշնամիները կը հալածուին, ուրախութեամբ գոչեց. աս չէ՞ թէ իմ կենացս վերջին օրն է, մանաւանդ թէ երջանկութեանս սկիզբն է, որովհետեւ Թեբէն յաղթող կը թողնում՝, Սպարտան խոնարհած, եւ Յունաստան ազատ։ Աս ըսելով քաջեց երկաթը հանեց վերքէն. եւ ուրախութեան եւ յաղթութեան մէջ արիւ-

նով շաղախուած՝ վճարեց իր կեանքը։

ԺԹ.

Լակեդեմոնացի կանայք։

Աղգասիրութիւնն և հայրենասիրութիւնն այն աստիճան զօրացած էր Լակեդեմոնացւոց մէջ, որ մայրերն անգամ կը յորդորէին իրենց զաւակը պատերազմի խրկելու ասելը թէ, գնա՛ տղա՛, պատերազմէ՛ հայրենիքդ պաշտպանելու համար. թէ որ տուն դառնաս, կամ վահանովդ դարձիր, եւ կամ վահանիդ վրայ դարձիր։ Ըսել կ՚ուզէին թէ, կամ յաղթ թէ եւ վահանովդ եկիր. կամ մեռիր հայրենեաց համար, որ դիակդ վահանին վրայ դառնայ հոս, ինչպէս էր իրենց սովորութիւնը, որպէս զի տեսնելով որ իրենց զաւակը հայրենեաց համար մեռեր է՝ ուրախանան։

Անգամ մը Լակեդեմոնացի կտրիճ մը, որ իր մէկ ոտքը պատերազմի մէջ կորսընցուցեր էր, ասանկ քաջալերութիւն կ՚ըսուտար իր մօրմէն. մխիթարէ՛ դուն զքեզ, որդեակ, վասն զի ամէն մէկ քայլ առնելդ՝

վկայութիւն կուտայ քեզ, և կը յիշեցնէ որ դուն քու հայրենիքդ պաշտպանած ես։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեր ազգը ջրհեղեղէն քիչ մը վերջը սկսած է, Հայկ անուանով երեւելի ու բաւ բեւպաշտ նահապետ մը, որ Թորգոմին որդին էր, Թորգոմն ալ Գամերին, Գամերն ալ Յաբէթին, Յաբէթն ալ Նոյ նահապետին։

Հայկ քաջ և վեհանձն մէկն էր, Ճիշ մարիտ Աստուծոյ ծառայ, և անոր սիրոյն

համար երկրիս վրայէն ջնջեց վերուց թե-
լը, որ ամբարտաւան հսկայ մ՝ էր, և
կ՝ուզէր Աստուծոյ պէս պաշտուիլ։

Հայկէն եաթը կուգայ Արամ նահա-
պետ, որ թիսա անուանի եղաւ իր հայ-
բենասիրութեամբը. Հայաստանի թշնա-
միները զարկաւ սպաննեց, և իր տիրած
տեղերուն աղ պատուիրեց որ Հայերէն
խօսին։ Օտարազգիք Արամին անունով
մեզի Արդն կ՝ըսեն։

Մեր ազգը չորս թագաւորական ցեղ
ունեցած է. Հայկազանց, Արշակունեաց,
Բագրատունեաց և Ռուբինեանց։

Հայկազանց Թագաւորութիւն։

Հայկազանց թագաւորութիւնը 1800
տարի դիմացաւ, և Քրիստոսէ 328 տարի
յառաջ վերջացաւ։

Առաջին թագաւորն եղաւ Պարոյր,
որ Սկայորդի նահապետին որդին էր. և
Մարաց Վարբակէս իշխանէն թագ ա-
ռաւ։

Վերջին թագաւորն եղաւ Վահէ,
որ Աղէքսանդրի դէմ պատերազմելով և

շատ քաջութիւններ ընելէն եաթը մեռաւ, որով Հայաստան Մակեդոնայոց իշխանութեան տակ անցաւ, մինչեւ արշակունեաց թագաւորութիւնը։

Հայկազանց թագաւորաց մէջ խիստ անուանի եղաւ Տիգրան Առաջին, որ Կիւրոս Պարսից թագաւորին հետ միացած, Աժդահակ Մարաց թագաւորին դէմ պատերազմեցաւ, եւ իւր ձեռքը զարկաւ սպաննեց Աժդահակը։

Նոյնպէս երեւելի եղաւ Հայկակ Երկրորդ, որ Նաբուգոդոնոսորին հետ միացած Երուսաղէմն առաւ. եւ Շամբատ անուանով հրեայ իշխան մը բերաւ Հայաստան, որուն սերունդը Բագրատունի ըսուած նախարարութիւնը կազմեց։

Արշակունեաց Թագաւորութիւն։

Պարթեւաց թագաւորը Արշակ Հայաստանի տիրելով, իր եղբայրը Վաղարշակը Հայոց վրայ թագաւորեցուց, որով աս թագաւորութիւնը Արշակունեաց ըսուեցաւ, Քրիստոսէ 52 տարիի չափ յառաջ։

Հայաստանի ամենէն փառաւոր եւ յիշատակաց արժանի թագաւորութիւնը աս եղաւ։

Արշակունի թագաւորաց մէջ եղան այնպիսիներ, որ օրէնքներ սահմանելով, կարգեր ու կանոններ դնելով և բարւոք կառավարելով երեւելի եղան. ինչպէս եղաւ Վաղարշակ, որ Մարիբաս Կատինա անուանով մէկու մը միջոցաւ Նինուէի գրքատունէն գտաւ Հայկազանց պատմութիւնը։

Եղան այնպիսի թագաւորներ, որ իրենց քաջութիւններովը և աշխարհակալութիւններովը հռչակուեցան. ինչպէս եղան Արտաշէս Առաջին և անոր որդին Տիգրան Երկրորդ, որոնք մինչեւ Պարսկաստանի և Յունաստանի տիրեցին։

Եղան այնպիսի թագաւորներ, որոնք քրիստոնէական սուրբ հաւատքն ընդունելով և իրենց բարեպաշտութեամբը երեւելի սուրբեր եղան. ինչպէս եղաւ Աբգար, որուն ատենը Յիսուս Փրկիչ աշխարհ եկած էր Հրէաստանի մէջ։ Աբգար լսեց ու հաւատաց, և Թադէոս ու Բարթողիմէոս առաքելոց քարոզութեամբ

բը լուսաւորութեան եւ մկրտութեան։ Յետոյ Տրդատ, որ Ս. Գրիգոր Լուսաւորչի միջոցաւ ընդունեց քրիստոսական սուրբը հաւատքը. և ընդհանուր Հայաստան լուսաւորութիւնս քրիստոնէական հաւատոյ լուսով։ Տրդատ շինել տուաւ Ս. Էջմիածնի Կաթողիկէ եկեղեցին, որ աստուածային տեսլեամբ յայտնուած էր Ս. Գրիգորի. ուր կը նստի մինչեւ հիմա մեր ազգին ընդհանրական սրբազան Կաթողիկոսը։

Եղան այնպիսի թագաւորներ, որ ազգային մատենագրութեան զարգացմանը և մտքի լուսաւորութեանը հոգ ունեցան. ինչպէս եղաւ Վռամշապուհ, որ Ս. Սահակ և Մեսրոպ հոգելից վարդապետաց խրախոյս տուաւ. և անոնք ալ մեր լեզուին տառերը հնարեցին, սուրբ գիրքը և ուրիշ բազմաթիւ գրքեր թարգմանեցին. ընտիր աշակերտներ ունեցան։ Խորենացիի, Եղնիկի, Եղիշէի նման. և ասոնց դարը ազգային մատենագրութեան Ոսկեդար ըսուեցաւ։

Աւսա՞ որ Վռամշապուհին որդին Արտաշէս Երրորդ իր հօրը բարեմասնու-

թիւններէն զուրկ էր. եւ զեղեց ու մոլի կեանք մը անցընելով, անմիտ նախարարաց վրէժխնդրութիւնը գրգռեց, որոնք կուրծքէն Պարսից թագաւորէն խնդրեցին իրենց թագաւորը վերցընել և տեղը Պարսիկ իշխան մը խրկել։ Ս. Սահակ շատ աղաչանքով ու յորդորով թէպէտ դէմ կեցաւ, բայց անդիւնք չունեցաւ։

Արշակունեաց հզօր թագաւորութիւնը տեւեց 580 տարի, մինչեւ Քրիստոսի 428 թուականը։

Ասկէ ետքը կ'ըսկսի Մարզպանաց ժամանակը, Հայոց թշուառութիւններուն հետ։ Բայց Աստուած իր ժողովրդեան համար՝ այն դառնութիւններուն մէջ ալ մխիթարիչներ խրկած ունի, դեր ընտիր սուրբ հայրեր եւ անուանի իշխաններ. Ղեւոնդի նման արիասիրտ քահանայներ, Վարդանի նման զօրեղ ոպարապետներ. որոնք Հայոց թագաւորութեան կործանուած մնացին՝ քրիստոնէական սուրբ հաւատոց և Հայաստանեայց եկեղեցւոյ համար արիւն թափեցին, և այս արեանց շնորհիւ զատնք հաստատ կը վայելենք մինչեւ յարդ։

Հայ ազգը իր անիշխանութեան այս ժամանակէն սկսեալ մինչեւ հալածանաց դարերուն վերջերը շատ արիւն թափած է իր սուրբ եկեղեցւոյն եւ հաւատոյն համար. Մարտիրոսաց եւ Նահատակաց արիւններով ներկուած են Ս. Եկեղեցւոյ քարերը։ Բայց ամենէն աւելի նշանաւոր եղած է Վարդանանց պատերազմը, որ Քրիստոսի եկեղեցին Հայաստանի մէջ ամուր մը վերահաստատեց, այնպիսի անշարժութեամբ որ մինչեւ յարդ և մինչեւ ի կատարած աշխարհի պիտի տեւէ։

Վարդանանց պատերազմը Աբշակունեաց թագաւորութեան կործանումէն քիչ տարի առաջ եղաւ, Վասակ Հայ մարզպանին օրով. երբ Պարսիկք Հայոց թագաւորութեան հետ կ'ուզեին քրիստոնէութիւնն ալ վերցնել, որպէս զի դիւրաւ վերնայ ու ջնջուի Հայոց ազգը։

Վասակ ուրացողը Պարսից հետ միացած էր, և անոնց գործակցութիւն կ'ընէր Քրիստոնէութիւնը Հայաստանէն ջնջելու։ Սակայն Վարդան Ս. Ղեւոնդի և անոր ընկերաց խրախուսումը վախցուն հաղար հոգի մեծ պատերազմ մը բրին

Աբարայը դաշտին մէջ Տղմուտ գետին քով, և անհնարին ջարդ մը տուին. ուր ինքը Վարդան ալ 1036 նահատակներով մեռաւ. բայց Քրիստոսի եկեղեցին ազատեց։

Վասակ ալ վերջէն իր անօրէնութեանց պատիժը Պարսից Թագաւորէն ընդունեց, որուն ինք վստահացած էր, և բանտի մէջ որդնոտելով սատկեցաւ։ Զարիւք չմնաց որ իր կեանքին մէջ չգործէր. չարիք ալ չմնաց որ իր մահուան ատեն իր գլխէն չանցնէր, կ'ըսէ Եղիշէ մատենագիրը։

Բագրատունեաց Թագաւորութիւնը։

Արշակունեաց Թագաւորութեան կործանումէն ետքը Պարսիկները կ'իշխէին Հայաստանի վրայ. յետոյ Յոյնք ալ իշխեցին, յետոյ Հագարացիք ալ։

Բայց Աստուած դարձեալ ողորմեցաւ Հայոց ազգին, և կրկին անգամ կանգնեց Հայոց Թագաւորութիւնը, որ Բագրատունեաց ըսուեցաւ. ըստ որում Աշոտ Բագրատունին Հագարացւոց ամիրասե-

տին շատ սիրելի ըլլալով, ինք Թագ ա-
ռաւ և Թագաւոր եղաւ Քրիստոսի 859
Թուականին. որով մարզպանաց ժամա-
նակի 431 գերութեան տարիները վեր-
ջացան։

Բագրատունի Թագաւորները տասն
են, և գրեթէ ամէնքն ալ բարեպաշտու-
Թեամբ ու քաջութեամբ նշանաւոր ե-
ղած։ Բայց ըստ որում անկախ իշխանու-
Թիւն մը չունէին, ուստի շատ անգամ
Հայաստանի իշխանութիւնը քանութեանը,
և Հայ իշխանութիւնը մատնութեանցը զոհ
կ'ըլլային, և Հայաստան ալ արեան ծով
կը դառնար։

Բագրատունեաց ժամանակի արտաքին
Թշնամութիւններէն աւելի նշանաւոր են
ներքին երկպառակութիւնները, Թագա-
ւորական ընտանեաց մէջ վէճեր և պա-
տերազմներ ըլլալով. մինչեւ Թագաւո-
րութիւնն ալ բաժնուեցաւ, եւ Վաս-
պուրականի մէջ առանձին Թագաւորու-
Թիւն մ'ալ կանգնեցաւ, Արծրունեաց
Թագաւորութիւն անուանով։

Բագրատունեաց Թագաւորութիւնը
200 տարիի մօտ տեւեց, եւ վերջացաւ

Քրիստոսի 1045 թուականին։

Վերջին թագաւորն եղաւ Գագիկ Երկրորդ, որ խաբուելով Պոլիս գնաց, և մէկ մ՚ալ չկրցաւ եւ դառնալ. այսպէս վերջացաւ Բագրատունեաց թագաւորութիւնն ալ։

Ռուբինեանց թագաւորութիւն։

Բագրատունեաց թագաւորութեան կործանումէն գրեթէ 31 տարի ետքը հաստատուեցաւ Ռուբինեանց թագաւորութիւնը Հայաստանէն դուրս՝ Կիլիկիոյ մէջ, Ռուբէն անունով սրտոտ եւ խոհական անձի մը ջանքովը։

Այս թագաւորութիւնն ալ 300 տարիի մօտ դիմացաւ, բայց նեբբին և արտաքին թշնամութիւններէ հանգիստ չառնելով, վերջապէս այս ալ Եգիպտոսի Սուլթաններուն ձեռօք կործանեցաւ, և բոլորովին վերցաւ Հայոց թագաւորութիւնը Քրիստոսի 1375 թուականին։

Վերջին թագաւորն եղաւ Լեւոն Վեցերորդ, որ մօր կողմանէ Հայ էր։ Ասիկա Եգիպտոս գերի գնաց, ուր եօթը տարի բանտը մնաց։ Յետոյ ազատուելով

Ս. Երուսաղէմ գնաց, և Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ ուխտը կատարելէն վերջը, Կիլիկիոյ առջեւէն անցնելով և հառաջելով, անցաւ գնաց Փարիզ՝ Ֆռանսայի մայրաքաղաքը, ուր մեռաւ 1393 թուականին, նոյեմբեր 22 ին։

Լեւոն մեծ հանդիսիւ թաղուած է Կեղեստինեանց վանքին եկեղեցւոյն մէջ, ուր որ փառաւոր շիրիմ մը կանգնուած է, Ֆռանսայի թագաւորաց և անուանի զօրավարաց կարգը։

Անիլիանոս-Ալեան ժամանակ։

Անգլուխ մնացած Հայ ժողովուրդը մեծ ազգաներ, հալածանք, սուր, հուր և ուրիշ շատ թշուառութիւններ քաշեց, ցիր ու ցան եղաւ, օտար աշխարհներ գաղթեց. միլիոնաւոր Հայեր սպակուցան, և այսօր հազիւ չորս միլիոն Հայ կը հաշուիի։

Լանկթիմուր, Շահարաս եւ ուրիշ արիւնռուշտ կատաղի գազաններ Հայաստանը գրեթէ աւերակ դարձուցին. եւ երանի թէ գերեզմաններէն դուրս գային այն Հայերը, որ մատնութեամբ և երկպառակութեամբ ազգայն թագաւորու-

թիւնները կործանեցին, դուրս գային և տեսնէին իրենց որդւոց և թոռանց քաշած անտանելի տառապանքները։

Օրհնեալ է Աստուած, որ հիմա հաւատածանքը վերցած է, եւ Հայոց ազգը ու Հայաստան մեծ մասամբ Օսմանեան տէրութեան, փոքր մասամբ Ռուսաց տէրութեան, և փոքր մասամբ մ՚ալ Պարսից տէրութեան տակ է։

Հայոց ազգին յոյսն ուրիշ բանի վրայ չէ, բայց միայն ուսմանց և գիտութեանց վրայ. և անոր համար հոգ ունի վարժարանները ծաղկեցընելու, և առաւել հոգ տանելու ալ պարտական է. վասն զի Հայ ազգի կեանքը մտքի լուսաւորութիւնն է։ Նիւթական մասին ալ անիրաւ չէ. արուեստներու և վերջերս վաճառականութեան ալ հետեւութիւն ընելու վրայ է։ Վասն զի նիւթական և մտաւորական զարգացումը պիտի տայ այն ամէն ակնկալութիւնները, որ ժողովրդեան բարեկեցութեանը համար անհրաժեշտ են։

ԱՂՕԹՔ

ԱՌԱՒՕՏԵԱՆ

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրքս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցըն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։

Հայեա տեր ի ծառայս քո և ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս տեառն Աստուծոյ ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, եւ յաղթող ի դատել դատս։

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալսս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ, և սուրբ եղէց. լուա, և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ տէր զցնծութիւն եւ զուրախութիւն, և ցնծացին ոսկերքք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինեն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինեն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քո, և հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Աստուած՝ Աստուած փրկութեան իմոյ. ցնծացէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր, եթէ զբերանս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր, պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամաք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտեսցի պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Երկրպագեմք քեզ տէր Աստուած մեր՝ անցեալքս ընդ երկարութիւն դիշերիս, և կանխեալքս ի սեղծոյ խոստովանութեան մատուցանեմք զառաւօտու աղօթս մեր։ Զքեզ տէր օրհնեմք եւ փառաւորեմք, եւ զքեզ

տէր գոհանամք, որ արժանի արարեր զգիշերս խաղաղութեամբ անցուցանել և հասանիլ ի ժամ առաւօտուս։ Արժանաւորեա զմեզ տէր անձառ խոստմանց քոց, զոր խոստացար սիրելեաց քոց Ճշմարիտդ Աստուած՝ Յիսուս Քրիստոս տէր մեր, կեցո և ողորմեա։ Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում, աստացուք ամենեքեան միաբանութեամբ։

Զառաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս ընկալ ամենակալ ամենամեծդ Աստուած ի քո անապական և յերկնային խորանդ։ Ծագեա առ մեզ զարդարութեան և զիմաստութեան զլոյս քո, արա զմեզ որդիս լուսոյ և որդիս տուընչեան, որպէս զի ի գալ աւուրս երկիւղածութեամբ վարեսցուք զկեանս մեր, և առանց գայթակղութեան կատարեսցուք։ Զի դու ես օգնական և փրկիչ մեր, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԱՂՕԹՔ

ԵՐԵԿՈՅԵԱՆ

Աստուածդ տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։

Մոխց առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած որ ուրախս առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ։

Արդ՝ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս, յուսա առ Աստուած, խոստովանեսցի նըմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

ՍԱՂՄՈՍ

Եկեսցէ ի վերայ իմ օղորմութիւն քո տէր, եւ փրկութիւն քո ըստ բանի քում։

Տայ պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք, զի ես ի բանս քո յուսացայ։

Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ի պատուիրանս քո զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում։

Ցիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։

Սա մխիթարեսցէ զքեզ ի խոնարհութեան իմում՝ զի բան քո կեցոյց զքեզ։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ ։ այլ յորինոց քոց ես ոչ խոտորեցայ։

Ցիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր ։ եւ մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զքեզ ի մեղաւորաց ։ եւ զայք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո ։ ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Ցիշեցի ի գիշերի զանուն քո տէր ։ և պահեցի զօրէնս քո։

Սա եղեւ ինձ ճանապարհ ի կեանս ։ զի զարգացուցիս զնս քոնդրեցի։

Զանօրէնս ատեցի ։ եւ զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու ։ և ես ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք ։ և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում ։ և կեցո զքեզ ։ և մի յամօթի առներ զքեզ ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ ։ և ապրեցա զքեզ ։ և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղէն յարդարութենէն քոյ ։ զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Ցանցաւորս հատանեցայ զամենայն մեղաւորս երկրի։ զի այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ։ զի ի դատաստանէ քոյ երկեալ յոյժ։

Մեծանոյին ինդրուածք իմ առաջի քո տէր ։ ըստ անի քում իմաստուն արա զքեզ։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր , և բանիւ քով փրկեա զիս ։

Բղխեսցեն շրթունք իմ գօրհնութիւնս քո , յորժամ ուսուցես ինձ զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո . զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են ։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս . զի զպատուիրանս քո ընտրեցի ։

Ցանկացայ փրկութեան քում տէր , եւ օրէնք քո խօսք իմ էին ։

Կեցցէ անձն իմ , օրհնեսցէ զքեզ , և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ . խնդրեա զծառայս քո , զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւանից եւ ձեռք մեղաւորաց մի՛ դողացուցեն զմեզ ։

Անդ անկցին ամենեքեան այք գործեն զանօրէնութիւն , մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատիլ ։

Ես ի տէր յուսացայ , ցնծացայց եւ ուրախ եղէց յԱստուած փրկիչ իմ ։

Տէր տէր ես ինձ զօրութիւն եւ կացոյց զոտս իմ ի հաստատութեան , ի վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս և հանգոյց զիս երագ երագ ։

Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն , ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանդիցէ ։

Ասասցէ տեառն՝ ընդունող իմ ես . ապաւէն իմ Աստուած և ես յուսամ ի նա ։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին , և ի բանիցն ի խռովութենէ ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ , ի հովանի թեւոց նորա յուսասցիս ։

Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ ճշմարտութիւն նորա ։

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ ի նետէ՝ որ թռչի ի տուէ։

Յիրէ որ շրջի ի խաւարի, ի գայթակղութենէ դիւին ի հասարակ աւուր։

Անկցին ի կողմանէ քումմէ հազարք և բիւրք ընդ աջմէ քումմէ, և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես։ զի դու տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն, զի ոչ հասցէն առ քեզ չարք և տանջանք մի մերձեսցին ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի երբէք հարցես զքարի զոտն քո։

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու, և առ ոչն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա, հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւորեցից զնա, երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս։

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս ի վերայ մեր։

Ողորմեա մեզ տէր՝ ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ և արհամարհանօք ամբարտաւանից։

Աստուած յանուան քում կեցո զիս և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոց։

Օտարք յարեան ի վերայ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ. ճշմարտութեամբ քով ստամբեա զնոսա։

Եւ կամաւք իմովք զոհասարցուս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եռեաս աչս իմ։

Օրհնեալ ես դու տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես ի տաճարի փառաց սրբութեան քո. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես ի վերայ ամենայն արքայութեան քո, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես որ նստիս ի քրովբէս և հայիս յանդունդս, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես ի վերայ հաստատութեան երկնից, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեցէք զԱստուած ի պրութեան նորա, օրհնեցէք զնա ի հաստատութեան ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա ի բազում մեծութեան նորա։

Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան, օրհնեցէք ըզ-

նա սաղմոսիւք եւ օրհնութեամբ ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ ։ գովեցէք զնա ուրա-
խութեամբ ։

Օրհնեցէք զնա ի բանս քաղցր ։ գովեցէք զնա ի
բարբառ լսելի ։

Օրհնեցէք զնա ի ձայն գոհութեան ։ ամենայն հո-
գիք օրհնեցէք զտէր ։

Արդ արձակեա զծառայս քո տէր ըստ բանի քում
ի խաղաղութիւն ։ զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝
զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց ։

Լոյս յայտնեցար հեթանոսաց ։ և փառք ժողովրդեան
քում իսրայելի ։

Զգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո ։ և տէր
հատուցէ ընդ իմ ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան ։ զգործս ձեռաց
քոց մի՛ անտես առներ ։

Տէր հան ի բանտէ զանձն իմ՝ գոհանամ զանուանէ
քումմէ ։

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչեւ հատուցես ։

Մեծացուցէ անձն իմ զտէր ։ և ցնծացէ հոգի իմ
Աստուծով փրկչաւ իմով ։

Ա՛յց արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւ-
րոյ ։ այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք ։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն ։ և սուրբ է անուն
նորա ։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւ-
րոց ։ արար զօրութիւն բազկաւ իւրով ։

Ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից ։ և քակեաց
զհզօրս յաթոռոց ։

Զ խոնարհս բարձրացոյց ։ զկարօտս ելից բարու-
թեամբ ։ և զմեծատունս արձակեաց ունայնս ։

Պաշտպանեաց իսրայելի ծառայի իւրոյ ։ յիշելով

զողորմութիւն իւր ։

Որպէս խօսեցաւ առ Հարսն մեր՝ ընդ աբրահամու և զաւակի նորա յաւիտեան ։

Տուր զօրութիւն ծառայի քո ։ կեցո զորդի աղախնոյ քո ։ և արա առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսցեն ։ զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս ։

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ ։ և ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր ։ զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ ։ Որ երկայնամիտ ես առ ամենեսեան ։ մի՛ անտես առներ զապաւինեալս ի քեզ ։ այլ պահեա պատուական և սուրբ խաչիւ քով ի խաղաղութեան ։

Տէր Աստուած մեր՝ դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի ։ Ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս եւ զխորհուրդս մեր ։ Որպէս զի յամենայն ժամ քեւ պահպանեալ լիցուք յոլորդայթից թշնամւոյն ։ Եւ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ ։ այժմ և միշտ և ։

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր տէր զօրութեանց ։ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ և ի գիշերի ։ յարթնութեան և ի հանգստեան մերում ։ զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր Աստուած մեր ։ զհանգիստս գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել ։ և հասանել ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն և ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ ամէն ։

Անկանիմք առաջի քո տիրամայր սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զԿոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա զմիածին Որդիդ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։ Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զրաղմամեղս ի կապանաց մահու ի կեանսն յաւիտենից։

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ աղաչեալ։

ԲԱՆ ԺԲ.

Ընկալ քաղցրութեամբ տէր Աստուած հզօր զդառնացողիս զաղաչանս. մատիր զթութեամբ առ պատկառելս զիմաք. փարատեա ամենապարգեւ՝ զամօթական տխրութիւնս. բարձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կըրթութիւնս. աւարեա միշտ յաղթող՝ զխաբողին հաճութիւնս. բացատրեա վերնային՝ զմոլելոյն մառախուղ. կնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես՝ զբմբռնողին չար գտմունս. խորտակեա անքննին. զնարտողին գիմեցմունս։ Տեառնապրեա քո անուամբդ զլուանցոյց երդ յարկիս. պարսիակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ՝ զհանգուտեանս խշտի. մաքրեացես ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամքդ զուառապեալ անձն ոգւոյս. անխարդախ ապրացես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուցես շըրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես ի դիմի ընդդէմ դիւացն դասու։ Տուր հանդիսաս բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս. բարե-

խօսութեամբ հայցուածոց սրբուհւոյ Աստուածածնի՝ և ամենայն ընտրելոց։ Ամիսիսեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զդայարանացս իմոցս անզարհուրելի զերեղմամբ՝ ի ծփական խռովութեանց, կենցաղական ըղբաղմանց անբնական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անինչասելի պաշտպանեալ։ Եւ սթափեալ վերստին ի ենչմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ հոգենորոգ զուարթութեամբ ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ ամենօրհնեալ թագաւոր փառաց անձառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք ղօրաւոր Նորին սրբոյն Գրիգորի։

ԲԱՆ ԽԱ.

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ առ ի քէն և ոչ ինչ։ Որ ի ծագել անստուերք նշուլից ողորմութեան քո փառաց, հալին մեղք հալածին գեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախիցեն խաւարն, մեկնի մեգն, մերժի մառախուղն, փարատի մուայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարածի տագնապն, շքանան շարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ ամենայնի։ Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս այլ կեցուցանել, թող ինձ զանթիւ չարիսն իմ

բազում ողորմութեամբդ։ Զի դու միայն ես յերկնի անձառ, և յերկրի անշնին, ի տարր գոյի, և յեզս ծագաց աշխարհի. սկիզբն ամենայնի, և յամենայնի, ամենայն լրմամբ օրհնեալ ի բարձունս. և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

Զհանգստեան զաղօթս և զաղաչանս ընկալ մարգասէր Աստուած ի հաճոյս բարեբար կամաց քոց. մեր մեղաց և մեր բազում յանցանացն թողութիւն շնորհեա. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Փառք քեզ՝ տէր Աստուած մեր, որ պարգևեցեր զօրս զայս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել։

Մարդասէր Աստուած՝ զառաջիկայ գիշերս որ ի վերայ մեր գալոց է, ի մեղայ փրկեա ի շարեաց աղաւտեա և ի գործս բարիս առաջնորդեա։

Առաւօտու օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա զամենայն հաւատացեալս անուանդ քում՝ սրբոյ, և պահեա ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր՝ տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի. բարձ զցասումն և զպատուհասն ի յարարածոցս։

Ողորմեա հարց և եղբարց մերոց՝ կենդանեաց և հանգուցելոց։

Ողորմեա զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պըտղատուից, ապատաւորաց, և այնոյիկ՝ որք ընդ հոգանեաւ սրբոյ եկեղեցւոյ են հանգուցեալ։

Տէր Աստուած՝ օգնեա թագաւորացն քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին պահելով ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր պահեա զառաջնորդս և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխաւով ի կամս ողորմութեան քո։

Ընչանաւ սուրբ և պատուական խաչիւ քո՝ հալածեա զերեւելի և զաներեւոյթ թշնամին ի սահմանաց մերոց և ի բնակութենէս մերմէ։ Փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից, և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱՆԱՊԱՏՄԱՆ